AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 1

31 ՄԱՅԻՍ 2019 ՈՒՐԲԱԹ 21(5568)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ անարգանքը Հայաստանին՝ ՀԱՊԿ-ի մակարդակով

Հայաստանի Հանրապետությունը երկրորդ անգամ անարգվեց՝ ՀԱՊԿ-ի մակարդակով: Տպավորություն է, որ այդ կառույցը միտված է՝ ամեն պատեհ առիթով անարգելու եւ նսեմացնելու ՀՀ-ին ու նրա ղեկավարությանը: Սա արդեն այն հարցն է, որ թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր, պետք է լինեն միասնական ու փորձեն գտնել հնարավոր տարբերակ՝ համարժեք վերաբերմունք ցույց տալու, ընդունելով հանդերձ, որ ՀՀ նոր իշխանությունը, ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի, արդեն մեկ տարի սխալներ է թույլ տալիս մեր դաշնակիցների հանդեպ, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին պաշտոնավարման ընթացքում ձերբակալելու դեպքից սկսած: Ահա թե ինչու Աստանայում վարչապետը չարժանացավ ՀՀ ղեկավարին արարողակարգով նախատեսված հարգանքին: Սակայն մեր դաշնակիցներն էլ պետք է իմանան, որ դրանով անարգում են Հայոց պետությանը, մեր ժողովրդին:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

V etting-ը, Ալբանիան եւ... մենք

Այս օրերին քաղաքական-բանավիճային գրեթե բոլոր հարթակներում ամենահաճախ հանդիպող բառը «վետտինգն» է, իսկ ամենաշատ հնչող տեղանունը՝ Ալբանիան, որպես «անցումային արդարադատություն» անցկացրած օրինակելի՞ երկիր, որտեղ «վետտինգ» է կիրառվել ոստիկանության, բանակի, հանրային ու պետական կառույցների եւ հատկապես դատավորների, դատախազների եւ ընդհանրապես արդարադատական մարմինների աշխատակիցներին զտելու կամ ընտրելու նպատակով: Մեր մասնագետներն ու լրագրողները միմյանց հետ կամ դեմ վիճում, միմյանց հերքում եւ առարկում են Հայաստանում դրա կիրառման նպատակահարմարության հարցի շուրջը, քաղաքական մի այնպիսի մթնոլորտում, որտեղ տիրում է փոխադարձ անվստահությունն ու կասկածը, նաեւ թշնամանքը: Միայն մեկ հարցում համաձայն են բոլորը՝ մեր երկրի արդարադատության համակարգը ոչ միայն իդեալական չէ, այլեւ կարիք ունի հիմնական բարեփոխումների: Մնացած ամեն ինչ առարկելի է– ո՞վ եւ ինչպե՞ս պետք է անցկացնի բարեփոխումներն ու զտումները, ի՞նչ խորությամբ եւ ընդգրկումով, ինչո՞ւ հիմա, հենց այս պահին, երբ երկիրը գտնվում է ներքին եւ արտաքին, աղետաբերական ու տնտեսական անորոշությունների մեջ, նույնիսկ՝ գոյութենական վտանգների առջեւ:

Փոխադարձ անվստահության եւ անհանդուրժողականության մի մթնոլորտ, որտեղ լավագույն ծրագրերն անգամ կարող են խեղաթյուրվել ու այլանդակվել եւ Հայաստանը վերածել մի փորձադաշտի, որտեղ փորձը միայն փորձանք կարող է բերել:

Եվ ահա այս մթնոլորտում փորձ է կատարվում, դրսից թելադրված թե ինքնաբուխ, վերակազմակերպելու արդարադատության ողջ համակարգը՝ առանց նախապատրաստելու համապատասխան գեղինը՝ սահմանադրական բարեփոխումներ, պետական ու հասարակական հավասարակշիռ իրավիճակ, արդարամիտ մարդկանցից կազմված մասնագիտական հենք: Անտեսվում է ՄԱԿ-ի համապատասխան հանձնարարականը՝ յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում, իր տեղական պայմաններից ու պահանջներից ելնելով, իր արդարադատական համակարգը՝ մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր սկզբունքների շրջանակում:

Արդ, թեեւ չենք կարող հաշվի չառնել աֆրիկյան երկրներից 18-ում, հարավամերիկյան 5-6 երկրներում, ապա Սերբիայում, Չեխիայում, Կոսովոյում, նաեւ Ալբանիայում կիրառված համապատասխան մեթոդները, սակայն ինչո՞ւ կենտրոնանալ հատկապես վերջինիս վրա: Այդ եւ մեր երկրի միջեւ տարբերությունները շատ ավելի մեծաքանակ են, քան նմանությունները: Վերջիններն ընդամենը մի քանիսն են՝ Էնվեր Հոջայի 40-ամյա կոմունիստական բռնատիրություն, լեռնային փոքրաքանակ երկիր շուրջ 4 միլիոն բնակչությամբ, մեծամասնությամբ (95 տոկոս) ալբան, 70 տոկոսով միակրոն: Ինչ վերաբերում է տարբերություններին՝ բավական է ասել, որ 1992-ից մինչեւ 2014 թ., Ալբանիան գտնվել է ներքին հակամարտության մեջ, անգամ զինյալ հակամարտությունների, սկզբում՝ Սալի Բերիշանի ընտրությունից հետո, դեմոկրատների եւ կոմունիստների, այնուհետեւ, 1996-ից սկսած, դեմոկրատների ու սոցիալիստների միջեւ, ընդհուպ՝ ներքին քաղաքացիական կռիվներ, որոնք դադարեցվեցին միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջամտությամբ եւ 7000-անոց խաղաղապահ զորքի ներգրավմամբ: Բաց ասենք, ի տարբերություն մեզ, Ալբանիան հայտնի է ոչ միայն իր կոռումպացվածությամբ, այլեւ մաֆիոզական կազմակերպությունների առատությամբ ու դաժանությամբ, որից մինչեւ օրս տառապում է նաեւ ողջ Եվրոպան:

Մերոնք աչքաթող են անում մի կարեւոր փաստ եւս. 1996-ից մինչեւ 2014 Ալբանիան 18 տարի շարունակ գտնվել է Եվրոխորհրդի անմիջական հսկողության եւ պարտադրանքների տակ՝ ոչ միայն «անցումային», այլեւ հիմնավոր, համակարգված բարեփոխումներ անցկացնելու, պետական ու հասարակական՝ միմյանց հակակշռող կառույցներ ստեղծելու նպատակով: Հսկողություն՝ որը դեռեւս լրիվ չի արդյունավորվել:

Իսկ ինչ վերաբերում է ալբանական «վետտինգ»-զտումներին, ապա մեզ համար հատկանշականը այն փաստն է, որ տարիներ շարունակ ընդդիմությունն է դեմ կանգնել դրա կիրառմանը՝ կասկածելով, որ «վետտինգային» մարդագործումները պետական տարբեր կառույցներում եւ դատական համակարգում՝ առավելաբար կզտեն իրենց կողմնակիցներին:

Նույնը նաեւ հատուկ է մեր իրականությանը, ուր ընդդիմադիրները խորապես եւ ոչ անհիմն կասկածներ ունեն, որ ներկա իշխանության ձեռին «վետտինգը» կդառնա պատժիչ մի գործիք՝ ոչ-յուրայիններին պաշտոնազրկելու կամ պաշտոնի չկոչելու համար:

Այս պայմաններում, կասկածանքի ներկա մթնոլորտում, անհրաժեշտ է, առանց ծալելու եւ գգրոց ուղարկելու մի կողմ թողնել «անցումային արդարադատության» ծրագիրը եւ լրջորեն զբաղվել համընդհանուր պետականաշինությամբ, անցկացնել սահմանադրական փոփոխություններ, ձերբազատվել միանձնյա ղեկավարման ներկա դրվածքից, ստեղծել իրական հակակշիռներ իշխանության տարբեր օղակների միջեւ ու հետզհետե բարեփոխել պետական ողջ համակարգը, ներառյալ արդարադատականը:

Այդ դեպքում մենք հավանաբար կարիք չենք ունենա ներմուծված կամ պարտադրված որեւէ մոդելի, դա լինի Ալբանիայից, թե որեւէ այլ երկրից: Մենք կարո՛ղ ենք դա անել:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Տեղի ունեցավ «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունը

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Երեկ, մայիսի 30-ին, Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ արդեն ամենամյա դարձած «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ԱՄՆ-ի եւ Կանադայի ԹՄՄ կենտրոնական վարչության նախագահ Երվանդ Ազատյանը, ՀԹՄՄ նախագահ Ռուբեն Միրզախանյանը, մշակույթի բազմաթիվ գործիչներ, երիտասարդ արվեստագետներ, լրագրողներ:

Միջոցառումը բացվեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի կամերային կազմի գեղեցիկ կատարմամբ:

Նախ՝ ողջույնի խոսքով հանդես եկավ **Ռուբեն Միրզախանյանը** եւ հայտարարեց այս տարվա մրցանակաբաշխության չորս անվանակարգերը՝ գրականություն, երաժշտություն, կերպարվեստ եւ թատերական արվեստ: Նա իր խոսքում նշեց, որ այս մրցանակաբաշխությունն ի բնէ նպատակ է ունեցել խրախուսել մշակույթի գործիչներին, այդիսկ կերպ զարգացնելով հենց մշակույթը.

⇨3

Մրցանակակիրները՝ ձախից աջ՝ Արա Հակոբյան, Սոֆա Ազնաուրյան, Աշխեն Բախչինյան եւ Ռախտիար Հովակիմյան:

Թուրքիան կանգնել է ծանր փորձության առջեւ

Ռուսական S-400 համակարգերից չհրաժարվելու դեպքում բախվելու է ԱՄՆ-ի պատժամիջոցներին

ՀԱԿՈԲ ՉԱՔԻՐՅԱՆ

Թուրքագետ

Նախորդ համարում «**Ազգը**», վկայակոչելով ամերիկյան CNBC հեռուստատեսության մայիսի 22-ի հաղորդումը, տեղեկացրել էր որ պաշտոնական Վաշինգտոնը ռուսական S-400 հակաօդային պաշտպանական համակարգերի ձեռքբերման առնչությամբ Ռուսաստանի հետ ստորագրած համաձայնագիրը չեղյալ հայտարարելու համար երկու շաբաթ ժամանակ է տվել Թուրքիային: Հեռուստատեսության հաղորդմանը իսկույն արձագանքել էր նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**, մատնանշելով. «Մենք S-400 համակարգերի հարցում հետքայլ կատարելու խնդիր չունենք: Մանավանդ որ դրանք պաշտպանողական զենքեր են, ոչ թե հարձակողական»:

Մայիսի 23-ին հրավիրված մամուլի ասուլիսում ամերիկյան հեռուստատեսությանը հերքեց նաեւ Թուրքիայի փոխարտգործնախարար **Յավուզ Սելիմ Քըրանը**: Մինչ ասուլիսին անդրադառնալը նշենք, որ Թուրքիան պատրաստվում է Ռուսաստանից գնել երկու S-400 համակարգ, 2.5 միլիարդ դոլար ընդհանուր արժողությամբ եւ գնման համաձայնագիրը ստորագրել է դեռեւս 2017-ի սեպտեմբերին: Ի դեպ, S-400-ի փոխարեն նախապայմանի տեսքով Թուրքիային առաջարկվող «Patriot» համակարգերից յուրաքանչյուրի արժեքը 3.5 միլիարդ է:

Ինչ վերաբերում է մամուլի ասուլիսին, որի ընթացքում փոխարտգործնախարար Քըրանը CNBC հեռուստատեսության տեղեկությունը հերքելուց զատ, թե ամերիկյան կողմը ժամկետի վերաբերյալ իրենց պաշտոնական որեւէ գրություն չի ներկայացրել, ասել է, որ Թուրքիան հետամուտ է S-400-ի հարցում որդեգրած դիրքորոշմանը, ինչը հաստատվել է դեռ 2017 թվին ստորագրված համաձայնագրով:

⇨3

Հայաստանի ներքին քաղաքականության մարտադաշտը տեղափոխվել է Դարաբաղ

էջ 4



Մեր հաղթանակների եւ մեր պարտությունների մասին

էջ 6

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Դպրոցները հոս ու հոն

Կը մտածեմ, որ Հայաստանէն հեռացած ընտանիքներու զաւակները, եթէ հեռատեսիլէն հետեւեցան այստեղի դպրոցներուն վերջին զանգի զանազան միջոցառումներուն, աշակերտութեան ուրախութեան ու ցնծութեան դրսեւորումներուն, տեսան ու լսեցին միջոցը լեցնող անոնց ուրախ բացագանչութիւնները, երգն ու պարը, ի՞նչ զգացում ունեցան արդեօք, յուզուեցա՞ն, չտմկացա՞ն անոնց աչքերը, երանի չտուի՞ն իրենց երբեմնի ընկեր-ընկերուհիներուն, չդարձան ու չ՛ըսի՞ն իրենց ծնողներուն՝ «Ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ մեզ հոս բերիք»:

Հաւանաբար Հայաստանի դպրոցները իրենց համեստ կառոյցներով ու կահաւորումով չեն կրնար մրցիլ Ամերիկայի դպրոցներու փարթամ կառոյցներուն ու ներքին ճոխութեանց հետ, սակայն, այստեղ առաւօտուն աշակերտներուն դիմաւորողը դպրոցին վրայ ծածանող Հայաստանի դրօշակը կ՛ըլլայ՝ Արարատի ֆոնին վրայ:

Ու կը մտածեմ. այսօրուան աւագ դպրոցներէն շրջանաւարտ եղողներէն քանի՞ պիտի մնան ու տեղական համալսարանները յաճախեն. քանի՞ բանակ պիտի երթան իրենց զինուորական ծառայութիւնը կատարելու. քանի՞ իրենց ծնողներուն հետ երկիրը պիտի լքեն:

Ո՞վ կրնայ կանխագուշակել այսօրուան շրջանաւարտ տղոց ու աղջիկներուն ապագան: Անոնցմէ շատեր անպայման ընտանիք պիտի կազմեն ու ծնողներ դառնան, որոնցմէ ոմանք գիտնական ու արուեստագէտ դառնան, կամ գրող ու քաղաքագէտ, գուցէ եկեղեցական, կամ զինուորական. բայց արդեօք պիտի լաւ քաղաքացիներ ըլլա՞ն:

Մեր օրերուն անցուդարձերը ապրած տղաքն ու աղջիկները ապագային պիտի փորձե՞ն անցեալի պետական մարդոց մեղաւոր արարքները չկրկնել. պիտի փորձե՞ն իրենց ներդրումը կատարել երկրին, թէ՞ դրամասիրութեամբ տարուած պիտի մոռնան իրենցմէ ակնկալուած յանձնառութիւնները:

Ի՞նչ իմանաս, ո՞վ կրնայ կանխատեսել: Եթէ այսօր այս հարցը տրուի իրենց ծնողներուն, անոնցմէ քանի՞ կրնայ մօտաւոր պատասխան մը տալ, մէյ մը ըստ ընտանեկան դաստիարակութեան, մէյ մըն ալ՝ եթէ լաւ կը ճանչնան իրենց զաւակները, անոնց նկարագիրն ու ընդունակութիւնները:

Այս մտմտուքները կ՛ունենամ եւ միտքս կ՛երթայ մեր ապրած երկրին ու Հալէպի մեր դպրոցներուն: Կը փորձեմ համեմատել ու որոշ նմանութիւններու կողքին կը մտաբերեմ որոշ տարբերութիւններ ալ:

Երկար տարիներ կրթական ոլորտին մէջ գործելով՝ բաւական ծանօթ եղած եմ մեր դպրոցներու իրավիճակին:

Հալէպի մէջ մեր դպրոցները սովորաբար կառուցուած են եկեղեցիներու կից, երբեմն նոյն շրջաբակին մէջ, որոնց մօտ ալ եղած է ակումբ մը: Արդէն ինքնին հասկնալի է, թէ ի՞նչ նպատակով այս երեք ազգապահպան կառոյցները իրար կից են եղած եւ իսկապէս ալ յաջողած են իրենց առաքելութեան մէջ ու ահա՛ հարիւրամեակ մը եօտ տակաւին կը շարունակեն իրենց գոյութիւնը պահպանել, բայց դժուարութեամբ, Սուրիոյ պարագային պատերազմին պատճառով, իսկ Լիբանանի պարագային ալ, այլ պատճառներով, տուրք տալով ժամանակի ու մտայնութեանց անխուսափելի փոփոխութեանց պարտադրանքին:

Այսպիսի իրավիճակ չկայ Հայաստանի մէջ, որովհետեւ ընդհանրապես հայկականութեան սպառնացող ազդակներ չկան, այնքան ատեն որ ոչքի տակ հող կայ:

Տարիներ եօտ վարժարաններու փակումը զանազան հայագաղութներու մէջ ցաւալի իրականութիւն դարձաւ եւ տակաւին կը շարունակուի մինչեւ օրս: Սփիւռքի մէջ մեր վարժարանները դիմացկուն չեն, տեղաշարժերը, գաղթն ու այլասերումը պատճառ կը դառնան, որ ինչ-ինչ զրկանքներու գնով պահպանուած մեր լոյսի փարոսները փակեն իրենց դռները: Դեռ թարմ են մտքերու մէջ Լիբանանի քաղաքացիական պատերազմի, Իրաքի ներխուժումի եւ Սուրիոյ պատերազմին անդրադարձը մեր կրթարաններուն վրայ:

Այս Սփիւռքն է եւ հասկնալի է տեղի ունեցածը. հոն նահանջը երգով թէ ողբերգով, Նահա՛նջ է, տեղատուութիւն , մայրամուտ եւ «պարտութիւն», որ Սեւակի բնութագրածին նման չէ եւ դժբախտաբար չունի «հպարտութիւն...»:

Այս բոլորը հասկնալէ ու ցաւելէ եօտ, ի՞նչ անդրադարձ ունենալու է մարդ, երբ լսէ, որ Հայաստանի մէջ ալ դպրոցներ կը փակուին...

Գիտնանք պահպանել մարդակերտումի մեր օճախները, նաեւ գիտնանք անոնց մէջ վաղուան հայը կերտել:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պզդ, պրոֆեսոր

Հանրապետության 101-ամյա հոբելյանը

Ուղիղ 101 տարի առաջ այս օրերին Երեւանից ոչ հեռու, ցեղասպանություն վերապրած հայ ժողովուրդը կռիվ տվեց ընդդեմ թշնամու՝ հանուն հայրենի երկրի վերջին թիզ հողի պահպանության, հանուն ազգի հարատեւման: Սարդարապատի ճակատամարտը որոշիչ էր հայ ժողովրդի համար եւ ճակատագրական՝ Հայաստանի համար: Հայրենիքի պաշտպանության համար ոտքի էր կանգնել ամբողջ ժողովուրդը: Զինվորների հետ միասին կռվի դաշտում էին ամբողջ ընտանիքներ՝ ծերեր, երեխաներ, կանայք, եկեղեցական հայրեր: 1918-ի մայիսին Դարաքիլիսայում, Բաշ-Ապարանում, Սարդարապատում տված կենաց-մահու ճակատամարտերում տարած հաղթանակով հայ ժողովուրդը վերականգնեց շուրջ ինն դար առաջ կորցրած անկախությունը:

Հատկապես այդ կռիվների վերջին արար Սարդարապատում հաղթելով թուրքական բանակին՝ հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքական ներխուժումն Անդրկովկաս եւ փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Մայիսյան այդ հերոսամարտերը նաեւ հնարավորություն ընձեռեցին, որպեսզի հայոց պետականության նվիրյալների ստեղծած «Հայկական ազգային խորհուրդը» Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնային հանրապետության փլուզումից հետո 1918թ. մայիսի 28-ին, Թիֆլիսում, հռչակի Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանն ու աշխարհասփյուռ հայությունը երեք օր առաջ, մայիսի 28-ին, տոնեցին Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման եւ Սարդարապատի հերոսամարտում տոնած պատմական հաղթանակի 101-ամյակը՝ Հանրապետության տոնը: Անցկացվեցին բազմաթիվ միջոցառումներ՝ եւս մեկ անգամ նշանավորելու պետականությունը որպես բարձրագույն արժեք եւ իմաստավորելու առաջին հանրապետության խորհուրդը հայկական պետականության հետագա կերտման ճանապարհին: Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաեւ Արցախում անկախությունը կերտած հայ հերոսների հիշատակին նվիրված բազմաթիվ հանդիսություններ անցկացվեցին:

Առաջին հանրապետության 101-ամյակի կապակցությամբ երեկ ավանդաբար անցկացվող միջոցառումներ էին կազմակերպվել տարբեր վայրերում, որոնցից ավելի մեծամասշտաբ էին Սարդարապատում եւ Բաշ-Ապարանում կազմակերպված միջոցառումները: 1918թ. մայիսի 22-28-ին թուրք զավթիչների դեմ մղված պատմական հերոսամարտի 50-ամյա տարեդարձին Սարդարապատի ճակատամարտի ճիշտ տեղում բացված հուշահամալիրում էլ անցկացվեց Հանրապետության 101-ամյակի տոնակատարությունը:

Սարդարապատի միջոցառումներին ներկա էր իշխանական վերնախավը՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորությամբ: Նրանք այցելեցին Սարդարապատի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու անկախության եւ ազատության համար կռիվ մղած հերոսների հիշատակին:

Դիմելով ներկաներին **Ն. Փաշինյանը** շեշտեց, որ տոնում ենք հայոց պատմության ամենակարեւոր տոներից մեկը՝ Հայաստանի Հանրապետության հռչակման 101 ամյակը: Այնուհետեւ բանախոսը նշեց, որ Կիլիկյան պետականության կորուստից հետո՝ 500 տարի անց թշվառ, ցեղասպանված ու սովի մատնված հայ ժողովուրդը այդ ճակատամարտերում կռած հաղթանակներով ապահովեց սեփական պետականության վերակերտումը եւ շարունակեց ապրելու ու հարատեւելու գործընթացը՝ աշխարհին ապացուցելով իր կենսունակությունը:

Օրվա գլխավոր իրադարձություններից հետո Սարդարապատում տեղի ունեցավ նաեւ համայնքների տոնական հյուրասիրություն, ամենուրեք հնչում էին հայրենասիրական ուրախ երգեր, շատերն էլ ինքնամոռաց պարում էին:

Տոնական միջոցառում էր կազմակերպվել նաեւ Ապարանում, որը համեմատաբար ավելի համեստ էր, մասնակիցներն էլ՝ փոքրաթիվ: Սակայն կարեւորն այն էր, որ ամենուրեք տիրում էր տոնական տրամադրություն, եւ ապարանցիներն անխիր հպարտանում էին իրենց հայրերի ու պապերի հերոսականությամբ:

Արձանագրենք, որ ցավոք թերեւս առաջին անգամ Արցախը բարձր մակարդակով եւ պաշտոնապես չմասնակցեց Հայաստանում տեղի ունեցած տոնական միջոցառումներին, որն իսկապես խորհելու տեղիք է տալիս: Քանի որ թե՛ հերոսամարտերը, թե՛ տարած հաղթանակները համահայկական են եւ Հայաստանի մի մասը կազմող Արցախը չպետք է անմասն մնար այդ տոնական միջոցառումներից: Իսկ Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը խուսափելով հստակ պատասխանել՝ մասնակցության հրավեր եղել է, թե՛ ոչ հարցին՝ միայն ընդգծեց, որ նախագահ Բակո Սահակյանի զբաղվածության պատճառով է ընտրվել իրենց մակարդակով մասնակցության ձեւաչափը: «Դուք գիտեք, որ Արցախում են գտնվում ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամները եւ նախագահը նրանց հետ հանդիպումներ է ունեցել: Միայն դա է պատճառը, հետին միտք փնտրել պետք չէ: Այս անգամ ընտրվեց այդ ձեւաչափը»,-նշեց Բաբայանը: Արձանագրենք, որ չնայած Դավիթ Բաբայանը նախագահի բացակայությունը պարզաբանեց վերջինիս զբաղվածությամբ, սակայն ընդգծենք, որ մասնակցությունը կարող էր լինել վարչապետի կամ մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյայի մակարդակով, այնինչ առհասարակ Արցախից որեւէ պաշտոնյա երեկ չմասնակցեց միջոցառումներին:

Նշենք, որ բացի պետական պաշտոնական օրգաններից 101-ամյա միջոցառումները լուսաբանեցին նաեւ քաղաքական տարբեր դաշտերում գործող ՁԼՄ-ներ: Մասնավորապես ավելի ակտիվ էր ՀՅԴ-ի տեսակետները ներկայացնող հասվածը: Օրվա խորհուրդին եւ քաղաքական իրադարձությունների լուսաբանմամբ ելույթ ունեցան **Կիրո Մանոյանը** եւ այլ կուսակցական գործիչներ: Պատմությունը, նշում էին նրանք, ինչպես հայտնի է, պարուրաձեւ է, իրադարձությունները ժամանակ առ ժամանակ կրկնվում են՝ իհարկե, ոչ ճշգրտորեն, այլ փոփոխված տարբերակներով: Առաջին նախագահի օրք Դաշնակցությունն արմատական ընդդիմություն էր՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով, այնուհետեւ կուսակցությունը սկսեց համագործակցել երկրորդ եւ երրորդ նախագահների հետ՝ ժամանակ առ ժամանակ հակադրվելով նրանց: Հիմա պատմության անիվը եւս մի շրջապտույտ է կատարել, եւ ՀՅԴ-ն կրկին հայտնվեց ընդգծված ընդդիմության շարքերում: Թեեւ իշխանությունն այդ հարցում «պաշտոնապես» ոչինչ չի հայտարարում, Դաշնակցության վերջերս կազմակերպած հանրահավաքը իշխանական շրջանակների կողմից նյարդային է ընդունվել: Եթե տեսնում եք Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի նկարը՝ «թռչնի բարձրությունից», որը կոչված է ապացուցելու հանրահավաքի սակավությունը (առաջ նման նկարներ էր հրապարակում ՀՀԿ-ն), ուրեմն իմացեք՝ իշխանությունը դժգոհ է, մասնավորապես նշեց Կիրո Մանոյանը:

Ի դեպ նշեմ, որ Դաշնակցություն կուսակցությանն ու նրա գաղափարախոսությանը վերաբերում եմ սոսկ պատմաբանի դիտակետից: Բայց երբ որեւէ դաշնակցական գործիչ որեւէ հարցով կարծիք է արտահայտում, իսկ իշխանության ֆանատները դրան հակադարձում են, թե «դու ընդհանրապես իրավունք չունես խոսելու, որովհետեւ ձեր կուսակցությունը ծախվել էր Քոչարյանին ու Սերժին», դա ինձ համար այնքան էլ համոզիչ փաստարկ չի: Ավելին, կարծում եմ, որ տեսակետները պետք է լինեն հնարավորինս բազմազան եւ որքան հարուստ, այնքան լավ պետության համար: Հատկապես, որ անկախ մեր անձնական վերաբերմունքից, այն մեր համազգային կառույցներից մեկն է:

Ափսոսանքս եւ մտահոգությունս պիտի հայտնեմ նաեւ այն փաստի առթիվ, որ թեեւ հանրապետության ղեկավարների ելույթներում մեծարվում էին հիշյալ ճակատամարտերի բոլոր հերոսներն ու մասնակիցները, սակայն հանդիսավոր արարողություններին չէին հրավիրվել այդ ճակատամարտերի քաղաքական ղեկավարությունն իրականացրած եւ հանուն հաղթանակի իրենց ունեցած մարդկային եւ նյութական բոլոր ռեսուրսները նվիրաբերած, այնուհետեւ անկախ հանրապետություն հիմնած Դաշնակցություն, Ռամկավար, Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչներին:

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 3

Տեղի ունեցավ «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունը

⇨1 «Մեր միությունը միշտ մշակույթի կողմին է եղել, եւ ոչինչ չի խնայել հանուն դրա զարգացման, հիմա էլ է այդպես, ապագայում էլ այդպես է լինելու», - ասաց նա:

Գրականություն անվանակարգում մրցանակի արժանացավ կինոգետ, բանաստեղծ, գրող **Արծվի Բախչինյանի «Այլասանցի Մուչիկ հայասանցին»** վեպը:

Խոսելով Բախչինյանի այս վեպի մասին, ժյուրիի՝ գրականության հանձնախմբի նախագահ Երվանդ Ազատյանը խիստ կարեւորեց այն:

«Եթե նոր ժամանակների չափանիշներով դատենք, ապա այս վեպը, միանշանակ, հավակնում է՝ բեստսելլեր լինելու»:

Ա. Բախչինյանի հարգելի բացակայության պատճառով մրցանակն ընդունեց նրա կինը, որն ամուսնու անունից շնորհակալություն հայտնեց բոլորին եւ հույս հայտնեց, որ աշխարհի չորս կողմում սփռված հայությունն իր ամուսնու գրքի հերոսի՝ Մուչիկի պես ի վերջո վերադառնալու է տուն եւ տեր է կանգնելու իր հայրենիքին:

«Թատերական արվեստ» անվանակարգում մրցանակի արժանացավ հայ թատրոնի պատմության լավագույն մասնագետ, կարելի է ասել այդ ասպարեզում վերջին մոհիկան **Բախտիար Հովակիմյանի «Նոր Ջուղայի թատրոնը. 1887-2017»** ուսումնասիրությունը:

Անվանակարգի ժյուրիի նախագահ **Արմեն Էլբակյանը** խիստ դրվատելի երանգներով ընդգծեց Բախտիար Հովակիմյանի ավանդը հայ մշակույթի եւ հատկապես հայ թատերարվեստի պատմության ուսումնասիրման ոլորտում:

«Մեր մշակույթի գործիչները կարիք ունեն ո՛չ միայն ֆինանսական աջակցության, այլեւ՝ վերաբերմունքի, իրենց քրտնաջան աշխատանքի համար: Որովհետեւ այդ ամենը ներդրում է ապագայի մեջ. այն ինչ հիմա ստեղծվում է, նպատակ ունի մեզանից հետո եկողներին հարստացնելու եւ ապահովագրելու, դրան է միտված նաեւ Բախտիար Հովակիմյանի այս արժեքավոր աշխատությունը: Նա հայ մշակույթի այն երախտավորներից է, որին կարելի է անվանել մեր քայլող պատմությունը, շատ ուրախ եմ, որ առիթ ունեմ ներկայացնելու նրան»:

Բոլորին ողջունեց եւ շատ կարեւոր խոսքով հանդես եկավ նաեւ ինքը՝ Բ. Հովակիմյանը: Նա իր խոսքում շնորհակալական խոսքեր ուղղեց մրցանակաբաշխության կազմակերպիչներին, եւ հայտարարեց, որ այս մրցանակի նյութական մասով ինքը տպագրելու է պարսկահայ թատրոնի մասին իր աշխատությունը: «Այսօր թատերագիտությունը մեռած է, տեղ չկա տպագրելու, փառք Աստծու, որ «**Ազգ**»ը տեղ է տալիս մեր մշակույթին, այլապես՝ ոչ ոք չի տպում»:

«Կերպարվեստ» անվանակարգում մրցանակի արժանացավ **Արա Հակոբյանը** իր **«Արեւածաղիկներ»** կտավի համար:

Երվանդ Ազատյանը մրցանակը հանձնում է Արծվի Բախչինյանի տիկնոջը՝ Աշխենին:

Անվանակարգի հանձնախմբի նախագահ, նկարիչ **Կարեն Աղամյանը**, ելույթում արժեւորելով Արա Հակոբյանի դերը հայ կերպարվեստում՝ ասաց.

«Արա Հակոբյանի ստեղծագործությունը տրամադրություն է ստեղծում, ընկերական-հարազատական միջավայր, նա, վստահ եմ, դեռ իր հստակ խոսքը կասի հայ կերպարվեստի աշխարհում»:

Իր շնորհակալական խոսքում Արա Հակոբյանը, ողջունելով ներկաներին, ասաց, որ իր համար անակնկալ է եղել այս մրցանակը.

«Լուրջ մրցակիցներ ունեի, եւ անկեղծ ասած՝ անակնկալի եկա, երբ ասացին, որ մրցանակի եմ արժանացել. հաճելի անակնկալ էր»:

Երաժշտություն անվանակարգում հաղթող ճանաչվեց **Սոֆյա Ազնաուրյանը՝ «Հայասան»** մոնո-օպերայի համար:

Անվանակարգի հանձնաժողովի նախագահ **Հակոբ Ավետիքյանը** այն համարեց առանձնահատուկ գործ.

«Այնտեղ խոսքն ու երաժշտությունը իրար գտնում են մի շատ հրաշալի համաձուլվածքով, որի արդյունքում մենք ստանում ենք շատ մաքուր երաժշտական ստեղծագործություն, որը հիմնված է Օսիպ Մանդելշտամի «Հայասան» ստեղծագործության եւ դրա շրջանակներում տրված տարբեր վկայությունների հիման վրա: Մի ամբողջ պաշտամունք եմ տեսնում այս ստեղծագործության մեջ՝ ուղղված Հայասանին, սա, իրավամբ, խոսքի երաժշտականության առանձնահատկությունն ունեցող, արժեքավոր գործ է»:

Միջոցառումը եզրափակվեց Սոֆյա Ազնաուրյանի շնորհակալական խոսքով.

«Շնորհակալ եմ բոլորիցդ, ես այս ստեղծագործության վրա մեծ ջանք եմ գործադրել, եւ զգում եմ, որ այն հասել է իր նպատակին»:

Հիշեցնեմ, որ սկսած 1991 թվականից՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը մրցանակներ է շնորհում մշակույթի եւ գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներին:

Այս տարիների ընթացքում մրցանակի են արժանացել բազմաթիվ բանաստեղծներ, ինչպես՝ Սիլվա Կապուտիկյանը, Լյուդվիգ Դուրյանը, Հրաչյա Թամրազյանը, գեղանկարիչներ՝ Վարուժան Վարդանյանը, Ռուբեն Աբովյանը, Գեւորգ Եղիազարյանը, քանդակագործներ՝ Էմիլ Գազազը, Լեւոն Թոքմաջյանը, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, երգահան Ռուբեն Հախվերդյանը, դիրիժորներ Հովհ. Չեքիջյանը, Կոստանդին Օրբելյանը, Էդուարդ Թոփչյանը, դերասաններ՝ Վարդան Պետրոսյանը, Երվանդ Մանարյանը, լրագրողներ՝ Հակոբ Ավետիքյանը, Արթուր Բախտամյանը, գրողներ՝ Լեւոն Խեչոյանը, Սարգիս Վահագնը եւ շատ ուրիշներ:

Թերեզա Երեմյանը՝ կառավարական հարաբերությունների տնօրեն

Ամերիկայի Հայ Ազգային (Հայ դատի) կոմիտեն հայտարարել է, որ Թերեզա Երեմյանը նշանակվել է կոմիտեի կառավարական հարաբերությունների տնօրեն: Նա Կալիֆորնիայում, Սպիտակ տանը եւ պետքարտուղարությունում զբաղվելու է ամերիկահայ համայնքի հայկական հարցերի վերաբերյալ առաջնահերթությունների պարզաբանման եւ տարածման աշխատանքներով: Նախքան այս նշանակումը Երեմյանը աշխատել է Հայ դատի շրջանակներում գործող Պոլ Սալոեջյանի անվան CGP աշխատանքի տեղավորման ծրագրի վրա, որը քաղաքականության ասպարեզում երիտասարդ մասնագետների է պատրաստում: Նա 2017-ին է տեղափոխվել Վաշինգտոն եւ ներգրավված է եղել Արցախի ճանաչման, Ցեղասպանության թեման կրթական ոլորտ ներմուծելու, ինչպես նաեւ հայանպաստ այլ նախաձեռնությունների իրականացման գործերում:

«Մենք երջանիկ ենք, որ նման որակավորում ունեցող նվիրյալ ու արհեստավարժ մի անձնավորություն է վարելու մեր հանրային քաղաքականությունը դաշնային մակարդակով», նշել է այդ առթիվ Հայ դատի կոմիտեի նախագահ **Ռաֆֆի Համբարյանը**: Հ.Ծ.

Թուրքիան կանգնել է ծանր փորձության առջեւ

⇨1 Այնուհետեւ Քըրանը S-400 համակարգերի առնչությամբ բանակցելու եւ երկխոսություն ծավալելու կոչ է արել ամերիկյան կողմին, գանգատվել է, որ ամերիկացիները դեռեւս անարձագանք են թողնում համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու Թուրքիայի առաջարկը: Նա միաժամանակ ափսոսանք է հայտնել ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի հենց ասուլիսի օրն ընդունած օրինագծի առթիվ, պատճառաբանելով, թե կոնգրեսականները տեղյակ չեն S-400 համակարգերի առնչությամբ Ռուսաստանի հետ ստորագրված համաձայնագրի մանրամասներին, նրանց տեղեկացնելու նկատառումով է արվել թուրք-ամերիկյան համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու իրենց առաջարկը:

Թեեւ Թուրքիայի փոխարտգործնախարարը լրությամբ շրջանցում է, սակայն հայտնի է, որ ԱՄՆ պետքարտուղարությունը նույնիսկ օրակարգում չի ընդգրկել Թուրքիայի այս առաջարկը: Ամենայն հավանականությամբ դա կմնա անարձագանք, եթե թուրքական կողմը շարունակի համառել S-400 համակարգերի հարցում: Խնդիրը, սակայն, սոսկ աշխատանքային խումբը չէ, այլ ամերիկյան պատժամիջոցները, որոնց փաստորեն օրինականացնում է Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած օրինագիծը, որն ի դեպ միանգամայն համապատասխանում է 2017-ին Կոնգրեսում ընդունված «ԱՄՆ-ի թշնամիների դեմ պատժամիջոցների ճանապարհով պայքարելու» մասին օրենքի ոգուն:

Օրինագծով Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովը իշխանություններից պահանջում է ռուսական S-400 համակարգերից չհրաժարվելու, եւ փոխարենը ԱՄՆ-ից «Պատրիոտներ» չգնելու դեպքում Թուրքիային հանել ռազմական F-35 ինքնաթիռների համատեղ արտադրության ծրագրից, նրան չտրամադրել այդ ինքնաթիռների նախատեսված խմբաքանակը եւ կիրառել համապատասխան պատժամիջոցներ: Օրինագծի պահանջները միանգամայն համահունչ են իշխանությունների պահանջներին, որոնց պատճառաբանելիս ինչպես Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովը, այնպես էլ պաշտոնական Վաշինգտոնը պնդում են, որ S-400 համակարգերի տեղակայումը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայում սպառնալիք է Հյուսիսատլանտյան դաշինքի համար, բացի դրանից ռուսական համակարգերը չեն կարող ներառվել ՆԱՏՕ պաշտպանական համարգում, քանի որ դա միասնական ընդհանուր համակարգ է, միեւնույն զինատեսակներով են զինված ռազմական այս կառույցի անդամ երկրների բանակները:

Օգտվելով առիթից նշենք, որ համանման մեկ այլ օրինագիծ ԱՄՆ Կոնգրեսի Սենատի օրակարգում է, որքան էլ թուրքական լրատվամիջոցները փորձեն շրջանցել, այնտեղ էր գտնվում նաեւ Թուրքիայի արտգործնախարարության պատվիրակությունը, սենատորների շրջանում բացատրական աշխատանքներ կատարելու առաջադրանքով: Թե ի՞նչ արդյունքի է հասել թուրքական պատվիրակությունը, չգիտենք, որովհետեւ թուրքական աղբյուրներն ոչինչ չեն հայտնում: Բայց որ S-400 համակարգերի պատճառով Թուրքիան կանգնել է ծանր փորձության առջեւ, կասկածից վեր է: Ամերիկյան կողմը, Թուրքիայի փոխարտգործնախարար Քըրանի նշած բանակցություններն ու երկխոսությունը դեռ մի կողմ, ռուսական S-400 համակարգերի մասին լսել անգամ չի ուզում:

Ավելի քան ծանր պետք է լինի նախագահ Էրդողանի փորձությունը, որովհետեւ անհավասարակշիռ քայլերով եւ անվերջ հոխորտանքներով ինքն է սրել ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմուտքի բոլոր դաշնակիցների հետ Թուրքիայի հարաբերությունների առանց այդ էլ բարձր լարվածությունը: Եվ դա նոր երեւույթ չէ: Դեռեւս սկիզբ է առել նախագահ Բարաք Օբամայի օրոք:

Մինչ **Օբաման** հայտարարում էր, որ Միացյալ Նահանգներն այլեւս պատերազմ չի վարելու Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Էրդողանը փորձում էր Սիրիայում ցամաքային պատերազմի մեջ ներքաշել ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցներին: Մինչ Օբաման Սիրիայի քրդերին համարում էր «ամերիկյան ցամաքային զորքեր», Էրդողանը նրանց հռչակեց ահաբեկիչներ: Նա ահաբեկչական կազմակերպություն է հռչակել նաեւ Սիրիայի դեմոկրատական ուժերին: Այնուհետեւ Էրդողանը, նկատի ունենալով ինչպես Օբամայի, այնպես էլ Դոնալդ Թրամփի՝ քրդերին հատկացրած զենքն ու զինամթերքը, «քուրդ ահաբեկիչներին զինելու միջոցով Թուրքիային մասնատելու» մեջ է մեղադրել ԱՄՆ-ին:

Այլ կերպ՝ անկախ ռուսական S-400 հակաօդային պաշտպանական համակարգերից, Թուրքիան խոչնդոտ էր դարձել Արեւմուտքի սիրիական, հետեւաբար տարածաշրջանային քաղաքականության համար: Այս համակարգերը, թերեւս, համբերության բաժակը լցնող վերջին կաթիլն էին: Ըստ երեւույթին լցվել է նաեւ ՆԱՏՕ-ի համբերության բաժակը, որ վերջին շրջանում անդամ երկրները սկսել են հաճախակի քննարկել Թուրքիային կառույցից վտարելու հարցը:

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 4

Հայաստանի ներքին քաղաքականության մարտադաշտը տեղափոխվել է Ղարաբաղ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Պետրոյթ-Երեւան

Ամեն օր դրամատիկական զարգացումներ են տեղի ունենում Հայաստանի ներքին քաղաքականության ոլորտում, բայց մարդկանց զայրույթը գագաթնակետին հասավ, երբ նախորդ շաբաթ կալանքից ազատ արձակվեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որին մեղադրանք էր առաջադրվել սահմանադրական կարգը խախտելու համար 2018-ի մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ: Դատավարական նիստերը կրկեսի էին վերածվել մի կողմից Քոչարյանի կողմնակիցների ցույցերով ու ուրատոնդիչ բացականչություններով, մյուս կողմից՝ նրա ընդդիմադիրների մեղադրական կոչերով: Այդ նիստերը նաեւ թեժ քննարկման նյութ էին դարձել սոցցանցերում եւ զանգվածային լրատվամիջոցներում: Հետաքրքրական է, որ ինչո՞ւ է այսքան մեծ ուշադրություն դարձվում Քոչարյանի նկատմամբ, երբ թավշյա հեղափոխության գլխավոր թիրախը Սերժ Սարգսյանն էր («Քայլ արա, մերժիր Սերժին»): Վերջինս ազատ է, ակտիվ եւ իր Հանրապետական կուսակցության գլխին ծրագրում է իր վերադարձը քաղաքական դաշտ:

Թավշյա հեղափոխությունը սրբեցմաքրեց Հայաստանում քաղաքական դաշտը մենաշնորհեցրած նախկին ղեկավարներին: Որոշ խմբակցություններ փորձեցին հեղափոխությունը տարածել նաեւ Ղարաբաղում, բայց գտնվեցին այնտեղ սթափ մտածողներ, որոնք ճիշտ գնահատելով տարածքի նուրբ ու վտանգավոր կացությունը, կարողացան առաջքն առնել: Բայց դա չտարհամոզեց անցյալ խորհրդարանական ընտրություններում իրենց մանդատները կորցրած կուսակցություններին փորձելու իրենց բախտը Ղարաբաղում, հիմնելով ուժային կառույցներ այնտեղ: Շարժումը սկսվեց Ստեփանակերտում անցյալ փետրվարին ՀՅԴաշնակցության գումարած համագումարից, որի ընթացքում կուսակցության հեռացող առաջնորդ Հրանտ Մարգարյանը չվարանեց հայտարարելու, որ իր կուսակցությունը տարալելու է Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության իշխանությունը եւ կառավարության գործելաոճը շեղելու է իր ներկա ընթացքից:

ՀՅԴ-ն Ղարաբաղ վերադարձավ երկրորդ անգամ մայիսին, կազմակերպելով «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք» ֆորումը, որին մասնակցեցին քաղաքական, կուսակցական եւ մասնագիտական տարբեր հայացքների տեր գործիչներ, այդ թվում նաեւ նախկին վարչապետ եւ նախագահական թեկնածու Վազգեն Մանուկյանը, որին վստահվել էր ֆորումը նախագահելու պաշտոնը: Նպատակը հասարակական կարծիք ստեղծելն էր այն մասին, որ անհրաժեշտ է Հայաստանի եւ Արցախի միջեւ պայմանագիր կնքել վերջինիս անվտանգությունը երաշխավորելու համար: Երաշխավորի եւ երաշխավորյալի միջեւ ռազմավարական դաշինք կնքելու առաջարկը լայն արձագանք չգտավ, բայց դա չէր կարեւորը, որովհետեւ կազմակերպիչների բուն նպատակն էր ուղերձ հղել, որ խորհրդարանական ընտրություններում պարտություն կրած կուսակցությունը շարունակում է իր ակտիվ գործունեությունը:

Իրադարձությունների այս թոհուբոհի մեջ հատկանշական է «Սասնա ծռեր» մարտականորեն տրամադրված կուսակցության ձեւակերպումը, որ մինչեւ Ղարաբաղում էլ իշխող քաղաքական վերնախավը չփոխվի, թավշյա հեղափոխությունը ավարտված չի կարելի համարել:

Հայաստանյան քաղաքական ուժերի այս ներխուժման մթնոլորտում, Ղարաբաղի ժողովուրդը շարունակում է զբաղվել իր առօրյա հոգսերով ու ներքին քաղաքականությամբ, որն է պատրաստվել առաջիկա նախագահական ընտրություններին: Ներկայիս նախագահ **Բակո Սահակյանի** այն հայտարարությունից հետո, որ չի մասնակցելու ընտրապայքարին, ասպարեզը հետեւյալ չորս հավանական թեկնածուներին է թողնված. Արայիկ Հարությունյան, Ղարաբաղի նախկին վարչապետ, որ զարգացրել է գյուղատնտեսական ենթակառուցվածքները այնտեղ եւ վայելում է ժողովրդի որոշ մասի աջակցությունը, բայց ղարաբաղյան բանակցություններին չի մասնակցել: Սամվել Բաբայան, որ պատերազմի հերոս է, բայց որի քաղաքական կարիերան խաթարված է պատեհապաշտական գործողություններով, որոնց համար երկու անգամ բանտարկվել է (Ղարաբաղում եւ Հայաստանում):

Վալերի Բալասանյան, մեկ այլ հերոս, որ կարող է զսպել Բաբայանի պատեհապաշտական նկրտումները: Եվ Աշոտ Ղուլյան, ԼՂ խորհրդարանի խոսնակը, որի հաջողության հնարավորությունները փոքր են:

Ղարաբաղյան բոլոր ընտրություններում Երեւանի կառավարության զգուշավոր միջամտությունը գործել է, չնայած մինչ օրս ազդեցությունը աննկատ է եղել: Բայց գալով Քոչարյանի կալանքից ազատելուց, թվում է, թե ժողովրդի համբերության բաժակը դրանով լցվեց եւ բացահայտվեց Հայաստանի եւ Ղարաբաղի կառավարությունների միջեւ գոյություն ունեցող ճեղքվածքը:

Տարաձայնության սերմեր ժամանակին ցանել է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որ քաղաքական ընդդիմության իր ամբողջ կարիերայի ընթացքում պնդել է, որ ղարաբաղյան կլանը զավթել է իշխանությունը Հայաստանում, վրդովմունք առաջացնելով տեղի բնակչության մոտ: Այդ վրդովմունքն իր արտահայտությունը գտավ Քոչարյանի դատավարության ժամանակ, երբ դատավորը նախքան վերջնական վճիռը կալանքից ազատեց վերջինիս: Մինչ Քոչարյանի կողմնակիցները ողջունեցին որոշումը, նրա հակառակորդները սկսեցին մեղադրել նախագահ Սահակյանին եւ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանին՝ պիտակավորելով նրանց որպես «դավադիրներ» եւ... «թուրքեր»:

Շատերը հավատացած էին, որ թավշյա հեղափոխությունը ղարաբաղյան կլանի վերջը տվել էր, սակայն Քոչարյանի ազատ արձակումից հետո նրանք այդ ճակատից ակնկալում են հետագա նենգամիտ գործողություններ: Որոշումն ինքնին տեղիք է տվել տարբեր մեկնաբանությունների եւ թեժ քննարկումների: Որոշ մարդիկ այն կարծիքին են, որ որոշումը արդյունք էր քաղաքական ճնշումներից ազատ դատական համակարգի գործունեության, որը ներկա վարչակարգի ձեռքբերումներից է: Որոշներ գտնում են, որ Փաշինյանը կորցրել է վերահսկողությունը բարձիթողի արված դատական համակարգի վրա: Երրորդ մի խումբ էլ հավատացած է, որ որոշումը նախկին վարչակազմից մնացած կաշառակեր դատավորների գործն է:

Բայց որոշակի հատկանիշներ ստիպում են ենթադրել տալ, որ ամբողջ հարցը Մոսկվայից քաղաքական ճնշման հետեւանք էր: Ցմոռանանք, որ նախագահ Պուտինը Քոչարյանի ծննդյան տարեդարձի առթիվ շնորհավորական երկտող էր ուղարկել, որտեղ նշված էր նաեւ իր դժգոհությունը մտերիմ ընկերոջ հանդեպ ցուցաբերված վերաբերմունքից: Կասկած չկա, որ Ռուսաստանի նախագահը Քոչարյանի հարցը քննարկել է վարչապետ Փաշինյանի հետ իր հանդիպումների ընթացքում: Պետք է խոստովանել, որ հակառակ Փաշինյանի պնդումներին, Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունները այնքան էլ չեն բարելավվել Փաշինյանի իշխանության ղեկը ստանձնելուց ի վեր:

Պուտինին չի հետաքրքրում, թե ինչ քաղաքական վիճակ են թողել նախկին կոռումպացված վարչակազմի առաջնորդները: Նրա տեսանկյունից, թավշյա հեղափոխությունը միեւնույն գործիքներն ու մեթոդներն էր օգտագործել ինչ Վրաստանում եւ Ուկրաինայում տեղի ունեցած գունավոր հեղափոխությունները, որոնց հետեւանքում նախկին բարեկամությունը տուժում է:

Երեւի որոշ ճշմարտություն կա այս տեսակետում, որովհետեւ մեր այժմյան ժամանակներում իշխանափոխությունները ու կառավարությունների տարալումը միշտ չէ, որ իրականացվում են զենքերի կիրառմամբ: Ժամանակակից տեխնիկական միջոցները շատ ավելի կատարելագործված են ու արդյունավետ: Պետության որեւէ ղեկավար, որը հզոր մի նոր ուժի ճանապարհին խոչընդոտ է, նախ վատաբանվում է, դիվայնացվում ազդեցիկ սոցցանցերի միջոցով, ապա գործը ամբողջացնում են «բարեգործական» առաքելություն իրականացնող հատատությունները ու մամուլի վարձկան «զինվորները»:

Պուտինի ճնշումից հետո Փաշինյանին իրավական «թզի տերեւ» էր անհրաժեշտ Քոչարյանին ազատ արձակելու համար: Այն հայթայթելու պարտականությունը իրենց ուսերին վերցրին Քոչարյանի եւ Սարգսյանի նախկին մարտական ընկերներ Բակո Սահակյանն ու Արկադի Ղուկասյանը, որոնք հանձն առան այդ առաքելությունը՝ ակնկալելով նաեւ դատարանում իրենց հասցեին ուղղված վիրավորանքները:

Տարաձայնությունների վիհը Հայաստանի եւ Արցախի միջեւ աղետալի հեռանկար է նախատեսում, որն ամեն գնով պետք է կանխվի: Հնարավոր է, որ արտաքին ուժեր եւս խառնված լինեն այդ տարաձայնությունների առաջացմանը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նման կործանարար երկպառակտչությանը աչալուրջ հետեւում է Իլհամ Ալիեւը, որ մարդասպան Ռամիլ Սաֆարովի խորհրդանշական կացինը ձեռքին պահած՝ հարմար պահի է սպասում հարվածելու համար Ղարաբաղի եւ Հայաստանի ազգաբնակչությանը:

Իշխանության ղեկը ստանձնելուց ի վեր, Փաշինյանի կողմնակիցները ցանկանում են իրականացնել «անցումային արդարադատություն», որպեսզի հնարավոր լինի ազատվել նախկին վարչակազմի մնացուկներից: Քոչարյանի շուրջ ստեղծված իրարանցումը վարչապետին տվեց այդ հնարավորությունը: Մայիսի 20-ին նա հորդորեց քաղաքացիներին փակել բոլոր դատարանների դռները:

Հայաստանի սահմանադրությունը (հոդված 163-2) արգելում է մասնավոր կամ արտակարգ դատարանների ստեղծումը, որպեսզի գործադիր մարմինները չձեւավորեն բացարձակ իշխանություն: Խորհրդարանը քննարկում է այս հարցը, որպեսզի կարելի լինի առաջ շարժվել: Պատմության ընթացքում բոլոր բռնապետերն էլ խոսել են ժողովրդի անունից եւ իշխանությունը ստանձնել նրա անունից, բայց հազվադեպ են գործել ի բարություն այդ ժողովրդի: Կացությունը որոշակի վախ է առաջացնում, քանի որ վարչապետն իր վերահսկողության տակ արդեն ունի իշխանության ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր մարմինները, իսկ դրանց հիմա ավելանալու է նաեւ դատաիրավական համակարգը, որը նշանակում է բացարձակ իշխանություն ձեւավորել: Այդ պատճառով էլ սպասողական մթնոլորտ է այժմ տիրում, տեսնելու համար, թե ինչ ընթացք կունենան գործողությունները:

Մեր պատմության մեջ Տիգրան Մեծի կայսրությունը կործանվեց հռոմեացիների հետ իր որդու դավադրական համագործակցության պատճառով: Իսկ 1375-ին Կիլիկյան թագավորությունը ընկավ մամլուքների ձեռքը, որովհետեւ իշխանների միջեւ շարունակվող վեճերը թուլացրել էին թագավորությունը: Այդ պատմական իրադարձությունները պետք է մեզ զգոն պահեն խուսափելու համար դրանց կրկնությունից: Բավական է հայցք գցեն Ադրբեջանի սահմանին, որպեսզի մեր տաք գլուխ ու կարճատես քաղաքագետներն ու երկպառակություն սերմանողները զգաստանան: Ազերիների ռազմական տեխնիկայի կուտակումները մեր սահմանում բավական հիմնավոր պատճառ պետք է դառնան շրջահայաց լինելու եւ խոհեմություն դրսեւորելու համար:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

(The Arm. Mirror-Spectator, 21.05.19)

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 5

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Երեւի

ՄԱԿ-ի վերջին տվյալներով՝ աշխարհում ամենաշատը խոսում են չինարեն, ապա իսպաներեն, անգլերեն, արաբերեն եւ հինդի լեզվով: ՄԱԿ-ի մեկ այլ ուշագրավ տվյալով՝ համացանցում ամենատարածված լեզուն անգլերենն է, ապա գերմաներենը, ռուսերենը, իսպաներենը եւ ֆրանսերենը: Ենթադրում եմ, որ ՄԱԿ-ում հայերեն հայհոյանքներ չեն հասկանում, հակառակ դեպքում հայերենը եւս կներառվեր միջազգային համացանցային լեզուների ցանկում, ինչեւէ:

Քանի որ համացանցը հիմնականում տարածված է զարգացած երկրներում, եւ մարդիկ այնտեղ հատկապես ակտիվ են ժողովրդավարական պետություններում, նորմալ է, որ չինարեն, արաբերեն եւ հինդի լեզվով խոսող երկրներում համացանցում այնքան չեն գրում, որքան օրինակ ռուսախոս կամ ֆրանկոֆոն երկրներում: Բայց եթե հարցին հակառակ կողմից մոտենանք, ապա ստացվում է, որ կոնկրետ Չինաստանում, Հնդկաստանում եւ արաբական երկրներում մարդիկ ապրում են: Այսինքն դուրս են գալիս, մարդկանց հետ կենդանի են շփվում, իրար իրական ծաղիկներ են ուղարկում եւ իրականում են համբուրվում, միմյանց աչքերի մեջ են նայում խոսելիս, իրար ձեռք են սեղմում՝ հրաժեշտ տալիս, եթե հայհոյում են, ապա դեմ դիմաց, հիանում են իրական մայրամուտներով ու արեւածագերով, որոնց միայն լուսանկարներն են հիացնում ասենք անգլիախոս երկրների օգտատերներին, այն էլ, եթե այդ լուսանկարները լավ որակի են:



Լավ, ի՞նչ ենք այդքան գրում՝ չինական պատի այս կողմում, ինչի՞ մասին, այն թե ինչպես են մարդիկ սիրում, սպանում, հաղթում, պարտվում, ծնվում, մեռնում... Ապրում: Ո՞ր եւ ո՞ւմ դատավճռով ենք ինքներս մեզ գամել սեփական տան փափուկ սիրելի բազկաթոռին ու էկրանից հետեւել աշխարհի անցուդարձին՝ առանց առնելու այդ աշխարհի կեղտոտ փողոցների հոտը, նաեւ դրա բոլոր պարտեզներում աճող ծաղիկների բույրը: Առանց այդ ծաղիկների մի փոքրիկ փունջ նվիրելու այդ կեղտոտ փողոցներում պարողներին, որոնք, ինչպես Չարլի Չապլինն էր ասում, ամենատաղանդավորն են:

Համացանցը ջնջեց պետությունների սահմանները՝ մարդկանց միջեւ չինական մեծ պատ կառուցելով: Երեւի պատահական չէ, որ իմաստուն մարդիկ հաճախ հանդիպում են Չինաստանում, Հնդկաստանում եւ արաբական երկրներում: Երեւի տխուր է, որ մարդիկ քիչ են թղթի վրա գրված նամակներ ստանում եւ գրում: Երեւի խաղաղ է, երբ տեսադաշտումդ դիմացիդ սարն է կամ ծովը կամ անտառը կամ մարդը, եւ ոչ թե քառակուսի էկրանը: Երեւի ՄԱԿ-ում աշխատող չինացիները, արաբներն ու հնդիկները շնորհավորել են իրար: Երեւի ՄԱԿ-ում աշխատող գերմանացիները, ֆրանսիացիներն ու ռուսները՝ նույնպես: Երեւի աշխարհը բաժանվում է չինական մեծ պատով՝ այս կողմում օգտատերերն են ապրում, այն կողմում՝ մարդիկ:

Բայց աշխարհը զարգանում է, երեւի:

Սատուցողը

Ամեն սրճարան իր պատմությունն ունի: Կապ չունի՝ սիրո՞, թե՞ բաժանումի: Երեւի ավելի շատ սիրո, քանի որ այն մարդիկ, որոնք սրճարան են գնում, որպեսզի բաժանվեն, միայն ցույց են տալիս, որ սերը դեռ կա եւ այն հենց դիմացդ կամ կողքիդ նստած է:

Սրճարանների պատմությունները կրում են մատուցողները: Ինձ թվում է, որ եթե մեկը գրի քաղաքի բոլոր մատուցողների հուշերը, կկարողանա նկարել քաղաքի դեմքը՝ ժամի բոլոր փոսիկներով ու ցավի ամենաբարակ կնճիռներով: Ի դեպ կա վարկած, որ սրճարանները ոչնչացրեցին արաբական հսկա-հզոր խալիֆայությունը: Բանն այն է, որ երբ արաբները սուրճ խմելու համար հատուկ վայրերում էին հավաքվում, սկսում էին ցածրաձայն բողոքել իշխանությունից: Հետո արաբական սրճարանների խոսակցությունները համազգային, նույնիսկ հեղափոխական աղմուկ դարձան, եւ խալիֆայությունը տապալվեց: Համաձայն եմ, սիրողական վարկած է, բայց սրճարանների ուժն, ամեն դեպքում, խորհուրդ չէի տա կասկածի տակ դնել:

Օրինակ դրանցից մեկում, որտեղ Երեւանում ամենահամեղ կարտոֆիլն են տալիս՝ գյուղական ձեւով, եւ որտեղ հավաքվում էր քաղաքի բոհեմը, երբ քաղաքը բոհեմ ուներ, բոհեմն էլ՝ հավաքվելու կարիք, մի մատուցող կա: Ամենակարեւորը՝ հումորով, նույնիսկ այն ժամանակ, երբ կեղտոտ մոխրամանի պարունակությունը թափում է օգտագործված ափսեների մեջ: Հենց նա բացեց դուռը, որի բանալին ոչ մի կերպ չէի գտնում: Գիտե՞ք, ասաց նա, բերելով մեր պատվերը, լինում են շատ հաճախորդներ, որոնք, բարի ցանկություններով, անշուշտ, վերցնում են սինիի միջից իրենց սուրճի գավաթը, փորձելով օգնել մեզ, բայց դրանից սինիի հավասարակշռությունը խախտվում է եւ դրա ամբողջ պարունակությունը թափվում:

Հետաքրքիր են մտածում մատուցողները: Կարծում եմ՝ այս մատուցողի խոսքը պետական-քաղաքական, նույնիսկ ազգային նշանակություն ունի: Պետք չէ անել բաներ, որոնցից ոչինչ չես հասկանում, նույնիսկ բարի ցանկությունները կարող են հավասարակշռություն խախտել, փլուզման պատճառ լինել,պետական գործերում, հասարակական գործերում, ընտանիքներում եւ ամեն մեկիս ներսում: Մենք չենք թողնում, որ մատուցողն աշխատի, ինչպե՞ս սում: Մենք չենք թողնում, որ մատուցողն աշխատի, ինչպե՞ս կթողնենք, որ պետության ղեկավարն աշխատի, կամ ընդդիմությունը, կամ դատավորները, օդերային թատրոնը, դրա շրջակա սրճարանները, կամ շրջիկ սրճարանները:

Պետք է գրել քաղաքի բոլոր մատուցողների հուշերը: Նրանցից մեկն օրինակ, որի ամենասիրած գրողը Մարկեսն է, մի երեկո, երբ կողքի սրճարանում դադարեց մարդկանց տանջել անտաղանդ սախսոֆոնահարը, ժպտաց ու ասաց, որ լավագույն բաները տեղի են ունենում անսպասելի:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

«Գրական թերթը» գրական չէ՞

Բոլորովին վերջերս, անցած շաբաթ, ձեռքս առա «Գրական թերթի» վերջին համարն ու անակնկալի եկա:

Քանի որ գրական բովանդակությամբ թերթ էի գնել, մտադիր էի հենց առաջին էջում ծանոթանալ շաբաթվա գրական անցուդարձին: Բայց առաջին էջն ինձ ոչ մի գրական տեղեկություն չտվեց: Ավելին՝ տպավորություն էր, որ հայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի հերոսներից՝ գերապատիվ բժիշկը, պատիվ անելով մեզ, ժամանել է Երեւան ու «զրույց բռնել Աբիսողոմ աղայի հետ»:

Լավ, բացեմ չակերտները, մի շարք գրողներ, գրականության հետ առնչություն ունեցող անձինք, թերթի առաջին էջում հանդես էին եկել, ո՛չ ավել, ո՛չ պակաս, դասական համակարգի փոփոխման մասին ունեցած իրենց պատկերացումներով: Ներողությո՛ւն, տիա՛րք, «Գրական թերթն» այլեւս գրական չէ՞:

Եթե գրական է, ապա ինչպե՞ս բացատրել այս երեւույթը. բացում ես մեր երկրի գրական աշխարհը լուսաբանող առաջադեմ թերթերից մեկն ու այնտեղ բախվում բացառապես իշխանահաճո հայտարարությունների մի մեծ շարանի, շարան, որի նույնիսկ մոտիկ էջերում ոչ մի հակադիր կարծիք չես գտնում: Դա արդեն ոչ թե կարծիք է, այլ՝ իշխանության ջրաղացին ջուրլցնոցի, որովհետեւ բերված տեսակետների հեղինակները, ըստ էության, կարծես՝ ողջունում էին դատական համակարգը փոփոխելու՝ իշխանության գործելաոճը: Համակարգն իրոք պետք է փոխվի, որովհետեւ փտած է եւ փտում է, բայց այն, ինչ վերջերս տեղի ունեցավ իշխանության հրահանգով, եւ գովերգվեց «Գրական թերթում», իր մեջ սահմանադրական կարգի տապալման տարրեր է պարունակում: Ներեցե՛ք հանդգնությունս, բայց այդ ամենն ինձ թերթի 1930-ականների համարները հիշեցրեց, որի գրեթե բոլոր համարների առաջին էջերը ողողված էին «արեւափառ Ընկեր Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինի», «Ընկեր Վլադիմիր Իլյիչ Ուլյանով Լենինի» ու իշխանության մյուս անդամների մասին գովքերով:

Գրելով այս տողերը, քաջ գիտակցում եմ, որ կլինեն մարդիկ, ովքեր «Գրական թերթի» ապագրականացումը կբացատրեն «որպես մտավորականության հասարակական-քաղաքական հույզերը լուսաբանելու գործընթաց»: Դեմ չեմ: Չեմ էլ պնդում, որ գրականության աշխարհի մարդը պետք է միշտ «ընդդիմադիր» լինի եւ չնկատի երկրում կատարվող դրական տեղաշարժերը, կամ չխոսի հասարակական-քաղաքական թեմաների մասին, ավելին՝ գտնում եմ, որ նա պարտավոր է մատը այդ ոլորտի զարկերակի վրա պահել, բայց, կրկին ներողություն, ամեն թեմա ունի իրեն համապատասխան մամուլը, չէ՞: Գրականը՝ գրական, քաղաքականը՝ քաղաքական, մանկականը՝ մանկական եւ այլն: Այդ դեպքում ինչու է գրականության համար ֆինանսավորվող մամուլը դառնում քաղաքական հարթակ, այն էլ՝ իշխանահաճո: Չնայած իմ մատեցրած տարիները շատ չեն, բայց ես հասցրել եմ հասկանալ, որ մտավորականը, ինչ վիճակ էլ որ լինի, այսպես ասած, պետք է մի փոքր «ընդդիմադիր» լինի, որովհետեւ նրա իդեալը պետք է անհաս մնա, նա չպետք է բավարավի եղածով, եթե իրապես մտավորական է: Նախկինները վատն են եղել, նորերը, եթե կուզեք, լավն են, բայց անհաշվելի բացեր ունեն, ինչո՞ւ դրա մասին արձագանք չկա: Պարոնա՛յք, եթե նոր իշխանություններն իրենց հռետորական խոսքերով ու ոսկյա հայտարարություններով ձեզ դուր են եկել, դա դեռ չի նշանակում, որ մտավորականությունը, որը, որպես այդպիսին, ըստ իր գործառույթի, գրեթե բացակայում է, պետք է դառնա պալատական աշուղ ու երգի «տիրակալների համար»: Դա մտավորականին վայել բան չէ: Եվ ես այստեղ չեմ կարող մեջ չբերել մեր թերթի նախորդ համարում տպագրված՝ կինոռեժիսոր **Սերժ Ավետիքյանի** հոդվածի այս հատվածը.

«Եթե ստիպված ես անվերապահորեն համաձայնել ամեն հաջորդող կառավարության կողմից վարվող քաղաքականության հետ, ապա միայն պրոպագանդա ես անում, ինչն այլեւս ոչ թե արվեստի տիրույթում է, այլ՝ ստրկամտության»:

Որքան էլ հակառակվեք, միեւնույն է, ներքուստ բոլորդ էլ համաձայնելու եք Սերժ Ավետիքյանի հետ. հիմա կամ հետո:

Ես չգիտեմ՝ սրանով ուր եւ ինչպես է պատրաստվում գնալ «Գրական թերթի» խմբագրությունը, բայց ասեմ, որ լավ տեղ չի հասնելու: Ի դեպ, եթե թերթի հարգարժան խմբագրակազմը իրոք ցանկացել է հենց գրական թերթում լսել մտավորականության հասարակական-քաղաքական մտահոգությունները, ապա կարո՞ղ է ասել, թե ամիսներ առաջ ինչո՞ւ ոչ մի էջով, ոչ մի պարբերությամբ, ոչ մի նախադասությամբ ու բառ-ակնարկով չանդրադարձավ ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմնում՝ ԱԺ-ում հայտնված սեռագարի մասին, մի երեւույթ, որը ռումբի պես պայթեց հասարակության մեջ: Ինչո՞ւ անդրադարձ չեղավ, երբ իշխանությանը շատ մոտ կանգնած մի կին հայ կնոջը դասեց սեռագար, այլասեր կնոջ կողքին: Եւ վերջապես, ինչո՞ւ անդրադարձ չեղավ, երբ մշակույթի հետ կապ չունեցող, մշակույթից ոչինչ չհասկացող աղջնակը դարձավ մշակույթի նախարար... այդ նախարարության լուծարմանն էլ անդրադարձ չեղավ: Ինչու՞: Մտավորականությունն ասելիք չուներ, թե՞ խմբագրությունը հարմար չգտավ անդրադառնալ մի թեմայի, որն իսկական գլխացավանք է դարձել իշխանության համար: Կոպիս չինչի, բայց մեր ազգին պատեհապաշտ ու մորթապաշտ մտավորականություն պետք չէ...

Դ.Գ. *Հայաստանի տարբեր բնակավայրերում անձամբ ես ճանաչում եմ տասնյակից ավելի շնորհալի գրողների, որոնք հնարավորություն չունեն իրենց ստեղծագործությունները գոնե հատվածաբար տպագրելու, բայց արի ու տես, որ այդ ամենը շրջանցելով, «Գրական թերթի» խմբագրությունը որոշել է զբաղվել իրավաբանությամբ, իսկ իր գործը կարծես՝ ուրիշները պետք է անեն, որին, ի պաշտոնե, հենց կոչված է այդ թերթը:*

Ի դեպ, վաճառքով երբեք աչքի չընկնող «Գրական թերթը» այդ շաբաթ «անհասկանալիորեն» ոչ մի տեղ գտնել հնարավոր չէր... նույնիսկ Գրողների միությունում: ... Ասում են, «աջ ու ձախ» ընթերցասերներ են:

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 6

Մեր հաղթանակների եւ մեր պարտությունների մասին

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

պզք

Մայիսը հաղթանակների ամիս է: Սա մի պարզ ճշմարտություն է, որ մեզ սովորեցնում էին երիտասարդ տարիներից: Արցախյան հաղթանակները եկան հաստատելու այդ փաստը՝ մայիսը իսկապես հաղթանակների ամիս է:

Մեր տասնյակ հաղթանակներ ինչ-որ մի անհասկանալի զուգադիպությամբ համընկնում է հենց այդ ամսվա հետ: Այս ֆենոմենը բնաբակելը իհարկե անհնարին է, քանի որ այստեղ մեծ է պատահականության գործոնը:

Նույն հաջողությամբ հաղթանակների ամիս կարող էր լինել եւ հունիսը, եւ հուլիսը, հետեւաբար խնդիրը վաս կամ լավ ամսվա մեջ չէ, խնդիրն այն է, թե ե՞րբ ենք մենք հաղթանակներ տոնում եւ ե՞րբ՝ պարտություններ: Խնդիրը այն է, որ պետք է հասկանանք, թե ինչն է մեզ հաղթանակների տանում եւ ինչը պարտության:



Մայիսը իսկապես հաղթանակների ամիս է, Ավարայրից սկսած մինչեւ Արցախյան հերոսամարտ: Մի զարմացեք, իսկապես Ավարայրը իրակա՛ն հաղթանակ էր, քանի որ նույնիսկ սպարապետ Վարդան Մամիկոնյանի զոհվելուց հետո էլ զորքերը չլքեցին մարտի դաշտը եւ չհեռացան, երբ հետ քաշվեցին պարսիկները, իսկ երբ սկսեցին զոհերի թիվը հաշվել, ապա պարզ դարձավ, որ մեր թշնամիները 3 անգամ ավելի զինվոր են թողել մարտի դաշտում: Հայկական զորքերը հետ քաշվեցին ճակատամարտի ավարտից 2 օր հետո միայն, երբ պարսիկները ունենալով թվային առավելություն եւ նույնիսկ իմանալով Վարդանի զոհվելու մասին, այլեւս չհամարձակվեցին հարձակվել հայկական ուժերի վրա: Իսկ հայ իշխաններն էլ 2 օր շարունակ խորհրդակցելուց հետո որոշեցին հրաժարվել թշնամուն մեկ ճակատամարտում հաղթելու մարտավարությունից, հետ քաշվել ու արդեն հայկական լեռներում ու ձորերում ոչնչացնել հակառակորդի ուժերին:

Սարդարապատում այլ իրավիճակ էր, եւ հետ քաշվել չէր կարելի, Հայաստանից մնացել էր էջմիածինը եւ Երեւանը, դրանք էլ զիջեին, այլեւս ոչինչ չէր մնա: Կանգնեցին մինչեւ վերջ՝ կանոնավոր բանակը, աշխարհազորը, թուրքահայը թե ռուսահայը՝ բոլորը, ուղղակի նահանջելու տեղ այլեւս չկար:

Նույնը կրկնվեց արդեն Արցախյան հերոսամարտում: Զիջել հայոց աշխարհի այս կտորը չէր կարելի, դա այն վերջին պատառիկն էր Մեծ Հայքի, որը դեռ ի վիճակի էր դիմադրել, որը դեռ ուժ ուներ դիմադրելու, որը չէր ցանկանում եւ չէր պատրաստվում հանձնվել:

Կորցնել այդ պատառիկը նշանակում էր կորցնել Հայաստանը: Արցախը մեր պետության տարածքն է, հայ ժողովրդի հողատության ու զենքի ուժի, այն կարելի էր պահել միայն միասնաբար՝ իրեն հայաստանցի, ղարաբաղցի կամ սփյուռքահայ կոչող հայը, ու այստեղ կարեւոր չէր, թե որտեղից ինչքան մարդ էր եկել, հարյուր, հազար, թե՞ տաս հազար: Նույնիսկ մեկի ներկայությունը հայության ամբողջականության ու միասնության խորհրդանիշն էր: Մեկ հայաստանցու, մեկ սփյուռքահայի, մեկ ջավախքցու կամ մեկ կամավորի ու կադրային սպայի, եւ այսպես շարունակ:

Մենք շատ ենք սիրում գրել մեր հաղթանակների մասին, դրա պատճառների, հաղթական մարտերի, եւ այսպես շարունակ, սակայն չենք սիրում անդրադառնալ մեր պարտություններին: Իսկ, հավատացեք, դրանք շատ ավելի կարեւոր են հետազոտողի համար, քան հաղթանակները, քանի որ պարտությունն է լավագույն «ուսուցիչը» մարդկության համար, քանի որ ոչ մի բան այնպես չի սթափեցնում եւ ստիպում իրականությանը նայել լայն բացված աչքերով, քան անհաջողությունները:

Հետեւաբար հենց դրանք պետք է լինեն ուսումնասիրող գիտնականի հետաքրքրությունների ծիրում, հենց դա է հնարավորություն տալիս հասկանալ, թե ինչ սխալներ ենք գործել, ինչն էլ հանգեցրել է պարտությունների: 20-րդ դարի մեր ամենախոշոր ռազմական պարտությունը Կարսի անկումն էր, որի մասին քիչ ենք սիրում խոսել:

Այդ պարտությունը առավել քան տարօրինակ է, քանի որ դրանից բառացիորեն 2 տարի առաջ ունենալով շատ ավելի անբարենպաստ պայմաններ ու հնարավորություններ, կարողացել ենք մի քանի ճակատներում, թե՛ Սարդարապատում եւ թե՛ Աղարանում հաղթանակներ գրանցել, այն էլ ինչպիսի հաղթանակներ: Դրանից երկու տարի անց հայկական զորքերը առանց դիմադրության հանձնում են Կարսը:

Մենք որպես կանոն նմանատիպ զարգացումներում պատրաստ ենք քննադատել բոլորին, բայց ոչ մեզ: Սիրում ենք հաղթանակները միմիայն մեզ վերագրել, իսկ, այ, պարտությունները ուրիշներին, խոսել դավադրություններից, բայց չնկատել, թե ինչպես մեր իսկ ձեռքով թույլ տվեցինք, որ այդ դավադրությունները մեր շուրջ հյուսվեն:

Սիրում ենք ասել, որ հզոր Կիլիկյան Հայաստանը կործանվեց դավադիր Մամլուկների ուժերով, բայց չենք խոսում այն մասին, որ նույն այդ Եգիպտոսի Մամլուկները ժամանակին մեր իսկ դաշնակիցներն էին, եւ մենք, մեր իսկ աղերախտ քաղաքականությամբ նրանց վերածեցինք մեր թշնամիների: Մեղադրում ենք Բյուզանդիային Բագրատունյաց Հայաստանի ոչնչացման մասին, բայց չենք խոսում, թե ինչպես էին ներսից քայքայում նույն այդ Բագրատունիների հարստությունը:

Գրում ենք, թե ինչպես ռուս-թուրքական դավադրության հետեւանքով ընկավ Կարսը, բայց չենք ցանկանում խոսել, թե ինչպես կարողացանք երկու տարվա ընթացքում Սարդարապատում իրար կողք-կողքի կանգնած ու միասնաբար մարտնչող հայերին բաժանել ռուսահայերի եւ թուրքահայերի: Թե ինչպես կարողացանք այնպես անել, որ հայը սկսեց չվստահել հային, սպան իր զինվորին, իսկ զինվորը՝ իր սպային:

Թե ինչպես կարողացանք արյան գնով նվաճված հաղթանակները մսխել, եւ փոխանակ իրական թշնամու դեմ մարտնչելու, փորձեցինք թշամիներ գտնել մեր ներսում ու մեր շրջապատում: Իրավիճակը այն աստիճան սրեցինք եւ ատելությունը այն աստիճանի հասցրեցինք, որ նույնիսկ չնկատեցինք մոտեցող թշնամուն, եւ հանկարծակի գալով նրա հարձակումից՝ առանց կրակոցի զիջեցինք Կարսի անառիկ ամրոցը:

Ինչ հետեւություններ ենք արել այդ հաղթանակներից ու պարտություններից, ինչ դասեր ենք քաղել այդ ամենից, արդյոք հասկացե՞լ ենք մեր սխալները եւ պատրաստ ենք դրանք չկրկնելու: Թե՞ նորից մոռացած ու թողած իրական թշնամուն՝ մեր մեջ ենք թշնամիներ փնտրում:

Արցախյան հաղթանակից երկար ժամանակ չի անցել, սակայն արդեն մոռացել ենք, թե ինչպես էինք կողք-կողքի հաղթանակ կերտում: Մոռացել ենք, թե ինչ գին ենք վճարել դրա համար, դադարել ենք գնալ մեր հաղթանակների պանթեոն՝ Եռաբլուր, սակայն օրինիբուն անցկացնում ենք սոցցանցերում միմյանց դեմ ատելություն սերմանելով:

Հայաստանցի-ղարաբաղցի ներմուծված արհեստական դիսկուրսից շահում է միայն մեր թշնամին: Հետեւաբար այդ «քննարկումը» շարունակողները հենց թշնամու համար էլ աշխատում են, ցանկանալով հերթական անգամ պառակտել եւ թշնամացնել հայերին:

Ցավոք սրտի, պառակտման այդ «գործընթացը», կամա թե ակամա, խրախուսվում է ՀՀ նոր իշխանությունների կողմից՝ ամենաբարձր մակարդակով: Նույնիսկ էմիսարներ են ուղարկվում, որոնք պառակտման եւ ատելության բացիլները ցանկանում են տարածել բուն Արցախում:

Պատերազմը դեռ չի ավարտվել. սա մի ճշմարտություն է, որի մասին պետք է հիշեցնել ամեն օր: Ու այս ճշմարտությունը, եւ մեր անցած ողջ պատմությունը հուշում է, որ մենք պետականություն ու տարածքներ ենք կորցնում ամեն անգամ, երբ իրական թշնամուն թողած մեր մեջ ենք թշնամի որոնում:

Հայության պառակտմանը եւ բաժանմանը լծված են լրջագույն ուժեր, միջազգային տարբեր հիմնադրամներից ծախսվում են հսկայական միջոցներ, ՀՀ եւ Արցախ են ուղղորդվում տարբեր էմիսարներ, որոնք միայն մի նպատակ ունեն՝ բաժանել ու պառակտել հայ ժողովրդին, իսկ այդ նույն ժամանակ մեր ոխերիմ հարեւան Ադրբեջանը իրար հետեւից երեք անընդմեջ զորավարժություններ է կազմակերպում, պատերազմ սկսելու անթաքույց սպառնալիքով:

Մենք պարտ ենք անկախ Հայաստանի պատմության թերեւս ամենաանորոշ ժամանակաշրջանում, լի ներքին ու արտաքին վտանգերով, անհասկանալի ներքին ու արտաքին քաղաքականությամբ: Հայությունը առավել քան երբեւէ կարիք ունի միասնության, կարիք ունի ազնիվ խոսքի ու շիտակ հայացքի, կարիք ունի միավորվելու ու դիմակայելու տարբեր տեղերից փչող պառակտման ու բաժանման քամիներին: Լինենք միակամ ու միավորված հանուն Հայաստանի ու նրա հզորության, հանուն մեր զավակների եւ նրանց ապագայի:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Բաքուն՝ Մխիթարյանի որոգայթում

«Այդքան խո՞րն է երկու ժողովուրդների ձեր թշնամանքը, որ Միկին Բաքու չի մեկնում», երեքշաբթի ինձ հարցրեց գերմանացի ծանոթներիցս մեկը, ում խորհուրդ տվեցի կարդալ իր երկրի լրագրողների Բաքվի ու Ջելսի-Արսենալ ֆուտբոլային խաղի մասին անկողմնակալ հոդվածները: Հենրիխ Մխիթարյանի Բաքու չմեկնելու որոշումը նույնիսկ երեկ դեռ շարունակում էր արծարծվել գերմանալեզու մամուլում՝ առիթ տալով մեզ էլ անդրադառնալ այն քննադատությանը, որ հնչեցնում են գերմանացի մեր գործընկերները ՈՒԵՖԱ- ի, Ադրբեջանի հասցեին: Նախ՝ մի ակնառու փաստ: Ոչ այնքան ֆուտբոլից էին խոսում այս օրերին, որքան՝ այն վայրից, որտեղ անցկացվում էր խաղը՝ հիշատակելով հատկապես քաղաքական դրոշմը մի երկրի, որին քննադատում են բոլորը, բայց շարունակում են հանդուրժել:

Մայիսի 29- ի խաղը հեռարձակող RTL- ի մեկնաբանները ուղիղ եթերում կրկնեցին այն, ինչ հայտնի էր բոլոր մարդկանց, որ վերջին օրերին հետեւում էին աշխարհի լրատվամիջոցներին՝ Մխիթարյանը հայ լինելու պատճառով Բաքվում չի մասնակցում խաղին: Մանրամասն տեղեկություններ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների մասին հաղորդեցին գերմանական երկրորդ հեռուստալիք ZDF- ը, տպագիր ու առցանց ԶԼՄ- ները: Գերմանական «Բիլդը» գրեց՝ «Այսպիսի ՈՒԵՖԱ ոչ մեկին պետք չէ»: Թերթի առցանց տարբերակում հիշեցվում էր կացնասպան Սաֆարովի պատմությունը, որ հերոսացավ՝ հայրենի երկրի իշխանությունների ձեռամբ պարգեւատրվելով: Այսքան մեծ աղմուկ Ադրբեջանը չէր ակնկալում երեւի: Երկրի արդարության մարտիկներից մեկը՝ թղթակից **Խադիջա Իսմայիլովան,** որ մինչ այդ գոնե գերմանական լսարանին ծանոթ էր մարդու իրավունքների անխոնջ պաշտպանությամբ, թվիթերյան գրառմամբ մատնեց, որ իրականում իր դավանած մարդու իրավունքները ռասիստական հենք ունեն, իսկ Ադրբեջանը հեղինակություն փրկելու հարցում հենց նրա՛ սատարմանն է դիմում: Իսմայիլովայի թվիթերյան գրառումը իր հոդվածում զետեղեց նաեւ առցանց «Շպիգելը»: Իսմայիլովան նկատել էր տվել, թե Մխիթարյանի Բաքու մեկնելուց խուսափելը «քաղաքական նպատակ է հետանդում, ֆուտբոլն օգտագործվում է քաղաքական կեղտոտ, ռասիստական նպատակով»: Նույն հոդվածում, հենվելով «Եվրասիանեթ» պորտալի տվյալների վրա, «Շպիգելը» ներկայացնում էր, թե հայկական բռնցքամարտի ընկերության խոսնակը (անանուն) ֆեյսբուքում գրառում է արել, թե չի հասկանում Մխիթարյանի՝ Ադրբեջանի հանդեմ քննադատությունը, քանի որ այդ երկիրը տվել է անվտանգության երաշխիքներ: Ֆիզկուլտուրայի ինստիտուտի դոցենտ **Արաֆս Մարությանի** քննադատությունն առավել մեղմ է եղել՝ մասնավորապես հիշատակել է չորս տարի առաջ հայ 25 մարզիկի մեկնելը Բաքու: Գերմանալեզու լրահոսում մեզ հանդիպած այս երկու հայը վստահելի են համարել Ադրբեջանի անվտանգության երաշխիքները, փոխարենը գերմանացի լրագրողները առավել հակված են ենթադրելու, թե Բաքվում Մխիթարյանի համար հեշտ չէր լինելու: Իսմայիլովայի այն դիտարկմանը, թե Մխիթարյանին անվտանգության երաշխիքներ են տվել, իսկ նա քաղաքական դրդապատճառներ ներկայացնելու հարմար առիթ է գտել, «Բիլդը» այսպես «պատասխանեց»: «Բաքու այցելել երկյուղում են նույնիսկ գերմանացի պատգամավորները: Բունդեսթագի 53- ամյա պատգամավոր Ալբերտ Վայլերը կանցլեր Մերկելի հետ չմեկնեց Ադրբեջանի մայրաքաղաք, քանի որ նրան տեղյակ էին պահել, թե օդանավակայանում կձերբակալեն:

⇨11

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 7

Քրիսոնէութիւնը դէմի ո՞ւր

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Կոյր ըլլալու է չտեսնելու եւ չզգալու համար, որ աշխարհի մէջ քրիսոնէութիւնը ետքայլ կ՚առնի, մինչ իսլամութիւնը անընդհատ յառաջդիմութեան մէջ է: Իսլամական կրօնը իր դասիարակչական խստութեամբ եւ հետեւորդներուն մոլեռանդութեամբ համաշխարհային ներկայութիւնը օրէ-օր ամրացնդած է, սակայն երբ Ալ Ղահտան մէջտեղ եկաւ, իսկ վերջին տասնամեակին ալ ԻՊ-ն «Իսլամական Պետութիւնը» Իրաքի եւ Սուրիոյ մէջ), կրկնապատկուեցաւ եւ նոյնիսկ բազմապատկուեցաւ Մուհամմէտի հետեւորդներուն կարծրութիւնը, որ երբեմն դրսեւորուեցաւ արիւնալի խժդժութիւններով, «Քաֆիր անաստուածները» (ոչ-իսլամներ) դարձի բերելու, կամ զանոնք ոչնչացնելու, ըստ իրենց սուրբ գիրքի պատգամին, հակառակ որ խոհեմ իսլամ կրօնաւորներ հերքեցին ծայրայեղականներու գաղափարախօսութիւնը եւ կոչ ըրին խաղաղ գոյակցութեան, դատապարտելով անոնց արարքները:

Իսլամներուն մոլեռանդութեան մեծապէս կը նպաստէ իրենց բազմազաւակութիւնը, երբ, ըստ իրենց վարդապետութեան, յղութիւնը արգիլող որեւէ միջոց մեղք կը համարուի, ուստի արաբական աշխարհի եւ նաեւ շատ մի իսլամական երկիրներու ժողովրդական խաւերուն մէջ տարածուած է բազմազաւակութիւնը, երբ քրիսոնեաները ընդհանրապէս կը բաւականանան երկու, երեք երախաներով:

Այս օրերուն «Ռամատան» կոչուած իսլամներու ծոմապահութեան սուրբ ամիսն է, տեսնելու է, թէ ինչպիսի՞ կարեւորութիւն կու տան այս տօնին, ինչպէ՞ս արաբական հեռուստակայանները օրը 24 ժամ կը ներբողեն ու իրենց բոլոր ծրագիրները այս տօնին նուիրուած կ՚ըլլան: Անոնց ծոմապահութիւնը մեր պահքին չի նմանիր, անոնք մէկ ամիս, ամէն օր աւելի քան 12 ժամ, լուսաբացէն մինչեւ երեկոյ անօթի պէտք է մնան, որուն ընթացքին կաթիլ մը ջուր խմելն իսկ արգիլուած է, ինչպէս նաեւ հակաբարոյական որեւէ դրսեւորում, որ կրնայ պղծել սուրբ ամիսը:

Լիպիոյ յօրտնուած նախագահ Մուամմար Քազզաֆին ըսած էր, որ օրը պիտի գայ, ուր առանց կռիւի իսլամները պիտի գրաւեն Եւրոպան յարատեւ աճող իրենց թուականով: Արդէն արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ իսլամները միլիոններով կը հաշուեն, անոնք անընդհատ աճի մէջ են, եւ որպէս բազմանդամ ընտանիքներ պետութեանց կողմէ նպաստ կը ստանան: Անոնք լրիւ ազատութիւն կը վայելեն իրենց մզկիթներն ու աղօթավայրերը ունենալու: Սակայն, դժբախտաբար մարդայնօրէն իրենց շնորհուած ազատութիւնը երբեմն անմարդկային ձեւով կ՚օգտագործեն:

Վերջին տարիներու գաղթականներու հոսքը իսլամական երկիրներէն դէպի Եւրոպա, որոնց մէջ ԻՊ-ի ճիհատիստներ ալ կային, պատուհաս դարձան զիրենք ընդունող երկիրներուն, ուր անոնց ահաբեկչական արարքները կեանքեր խլեցին ու մեծ վնասներ հասցուցին հանրային հաստատութիւններուն եւ տեղացիներու սեփական կալուածներուն ու գոյքերուն:

Ամենաթարմ օրինակը անցեալ ամսուան Փարիզի Նոթրը Տամ եկեղեցւոյ վերնայարկի հրոյ ճարակ դառնալն էր: Ֆրանսական պետութիւնը,-չես գիտեր ինչո՞ւ,- ահաբեկչական արարք չանուանեց եղած վանդալիզմը, սակայն երբ Ֆրանսայի տարածքին տասնեակներով եկեղեցիներ հրկիզուած են վերջին տարիներուն, յստակ կը դառնայ անոնց պատասխանատուներուն ինքնութիւնը, որոնք բացէ ի բաց կը գործեն Եւրոպան իսլամացնելու յատուկ ծրագիրով:

Եւրոպայէն զատ, հակաքրիստոնէական գործունէութիւններու թատերաբեմ կը դառնան յաճախ շարք մը ասիական եւ ափրիկեան երկիրներ եւս, ինչպէս Շրի Լանքա, Ֆիլիպիններ, Նիկերիա, Եգիպտոս եւ այլք:

Եւրոպայի մէջ քրիսոնեաներուն վնասելու իրենց մղումին կը նպաստէ նաեւ երկրին մեղմ պատժամիջոցը, ուր մահապատիժի բացակայութեան՝ բանտային կալանքը սարսափեցնող ազդակ չէ, երբ անոնց բանտերը շատ նման են հիւրանոցներու, ուր ամէն ինչ ապահովուած է: Իսկ եթէ ահաբեկչական գործողութեան մը ընթացքին մահանան, ապա որպէս նահատակ դրախտին մէջ կը գտնեն իրենց խոստացուած հուրի-փերիները...

Ըստ վերջերս դիմատետրի (Ֆէյսպուք) մէջ տարածուած բացայայտումի մը, իբր թէ մինչեւ 2025 թուական Հռոմն ալ պիտի գրաւուի իսլամներու կողմէ ինչպէս իրենց Սուրբ գիրքին մէջ մարգարէութիւնը կ՚ըսէ, որ հռոմէական (իմա՝ յունա-բիւզանդական) երկու մայրաքաղաքներ՝ Կոստանդնուպոլիսն ու Հռոմը պիտի իսլամանան, որպէսզի Եւրոպան ամբողջութեամբ իսլամանայ: Կոստանդնուպոլիսը արդէն իսլամացած Իսթամպուլն է, կը մնայ Հռոմը, որուն համար աշխատանքները ընթացքի մէջ են: Ըստ ԻՊ-ի, կ՚ըսուի թէ Հռոմի գրաւման օրը Ս. Պետրոսի հրապարակին վրայ պիտի գլխատուի Պապը եւ անոր հետ՝ իրենց «սրբազան կրօնի» բոլոր թշնամիները:

Գուցէ հեքիաթանման երեւակայութիւն թուի, սակայն այս ծայրայեղութիւնները շրջանցելով իսկ նկատելի է, որ մարդիկը լրջօրէն այդ ուղղութեամբ կ՚աշխատին: Անոնց կապը իրենց Ղուրանին, աղօթավայրերուն եւ կրօնաւորներուն հետ անբաղդատելի է: Կոյր հաւատքը մեծ գործօն է ամբոխներ տեղաշարժ ընելու եւ հնազանդեցնելու, քրիսոնեաներու հակառակ, ուր մոլեռանդութիւնը երթալով հող կը կորսնցնէ, իսկ պաշտամունքն ալ՝ կարծես աւանդութեան մը շարունակութիւնն է, աւելի ձեւական, քան լուրջ ու նուիրական:

Արաբական երկիրներուն մէջ, յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, իսլամ-քրիսոնեայ երկխօսութիւնը առողջ մթնոլորտ կը ստեղծէ, յատկապէս սուրիական ութնամեայ պատերազմին երկու կողմերու կրօնապետեր յաճախակի հանդիպումներով կապի մէջ են, իրարու օգնութեան ձեռք կ՚երկարեն ու միասին կը գործեն յանուն ժողովուրդի ապահովութեան եւ պատերազմի հետեւանքներու վերացման: Երկար տարիներ իրենց համատեղ գոյակցութեան հետեւանքով սուրիացի քրիսոնեաներ դիմատետրի միջոցաւ շնորհաւորական մաղթանքներ կ՚ուղղեն իրենց իսլամ բարեկամներուն, ինչպէս նաեւ անցեալ ապրիլ ամսուն իսլամներ նոյն ձեւով վարուեցան եւ շնորհաւորեցին իրենց քրիսոնեայ բարեկամները:

Վերադառնալով անոնց գործունէութեանց եւ ահաբեկչութիւններուն, հիմա հարց կը ծագի, այս բոլորէն տեղեակ չէի՞ն կամ չե՞ն Եւրոպայի ղեկավարները, որոնք ոչ մէկ արդիական միջոցի կը դիմեն վսանգին առաջքը առնելու համար: Անոնք նոյնիսկ գիտակցաբար արգելք չհանդիսացան գաղթող իսլամներու հոսքին: Հռոմի Պապը դեռ կը շարունակէ իր այցելութիւնները զանազան երկիրներ, որոնց մէջ նաեւ իսլամական երկիրներ, Ան նոյնիսկ իսլամ նախագահի ոտք համբուրեց... Ուրեմն տարամարդ մարդու մտքէն կ՚անցնի՞, որ օրին մէկը իսլամ կրօնապետ մը քրիսոնեայի մը ոտքը համբուրէ: Արդեօք յոյժ գաղտնի համաշխարհային ծրագի՞ր մը կը պատրաստուի ներքնոլորակային, կամ այլմոլորակային ոյժերու կողմէ:

Տակաւին կը խօսուի «Արմակեդոնի» մասին, իսլամ-քրիսոնեայ վերջնական բախումի վայրը, որը, ըստ քարտէսին, Իսրայէլի տարածքին վրայ է (՞): Բացի Իսրայէլէն, տարածաշրջանի բոլոր երկիրները համտեսեցին ԻՊ-ի «պտուղները». ասիկա բան մը կը նշանակէ՞:

ԻՊ կազմակերպութիւնը ինչպէ՞ս մէջտեղ եկաւ, ո՞վ էր անոնց կնքահայրը, ո՞վ ֆինանսաւորեց, ո՞վ մարզեց զիրենք, ինչպէ՞ս կը շարունակեն դիմանալ անոնք, երբ ամբողջ աշխարհը (իբր թէ) իրենց դէմ է: Հիմա ինչո՞ւ կ՚աշխատին վերացնել զայն. լրջօրէն կ՚աշխատի՞ն, թէ կը ձեւացնեն: Անպատասխան, սակայն կիսաթափանց գաղտնիքներ:

Վերջ ի վերջոյ մարդ ակամայ պիտի մտածէ՝ կրօնները ի՞նչ բանի համար են. խաղաղութե՞ան, մարդոց հոգիներու փրկութե՞ան, թէ՞ պատերազմներու ու մարդիկը պատուհասելո՞ւ:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Մեր հավերժության վկան. «Հավերժության լուսամատյան»

Սասուն Գրիգորյան

Խորհրդային Միության փլուզումն ու Արցախյան ազատամարտի սկզբնավորումը նոր էջ դարձան հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում: Մենք մտել էինք նոր դարաշրջան, պատմության նոր շրջափուլ՝ բոլորովին այլ գաղափարական մոտեցումներով ու շեշտադրումներով, հետեւաբար կարիք էր զգացվում նախ՝ անդրադառնալ շրջափուլին, ապա՝ շիտակ հայացքով նայել այն կարեւորին, որը նախկինում փակի տակ էր պահվում. գրվեցին հազարավոր էջեր, որոշները փլուզման գործընթացի, ուրիշները՝ մինչ այդ տեղի ունեցածի, որի մասին այն ժամանակ չէր կարելի խոսել:

Ահա այդ պահանջներին համապատասխանող գրքերից է գրող, գրականագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ **Սասուն Գրիգորյանի «Հավերժության լուսամատյան»** հուշահանրագիտարանային գիրքը:

Սասուն Գրիգորյանը ծնվել է 1937թ. հունվարի 15-ին, Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղում: 1966թ. ավարտել է Երեւանի մանկավարժական ինստիտուտը: 1993թվականից եղել է Մեծ եղեռնի եւ հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի տնօրենն ու գիտխորհրդի նախագահը: 1996-98 թթ.՝ Մայր Հայաստան զինվորական թանգարանի փոխտնօրեն, նույն թվականներին միաժամանակ դասավանդել է Վազգեն Սարգսյանի անվան ՌԲՈՒՀ-ում: Կենսագրությունն արդեն խոսում է այն մասին, որ Սասուն Գրիգորյանը ողջ կյանքում կապված է եղել հայրենիքի ու հայրենանվեր աշխատանքի հետ: Իր բովանդակ կյանքի ընթացքում գրողը ընթերցողի սեղանին է դրել այնպիսի արժեքավոր գրքեր, ինչպիսիք են՝ «Սասնա պարը», «Նրանք ընկան երգը շուրթերին», «Հուշամատյան սիրո եւ սխրանքի (զոհված բանաստեղծներ)» եւ այլն:

Նրա բեղուն գրչի անգերազանցելի արգասիքը եղավ հենց վերոնշյալ «Հավերժության լուսամատյան» ծավալուն ու բովանդակալից գիրքը:

Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, Մեծ եղեռնի ու հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի գիտխորհուրդների եւ ՀԳՄ նախագահության որոշմամբ: Առաջաբանը գրել է ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս **Ֆադեյ Սարգսյանը**, ռազմագիտական մասով խորհրդատուն գեներալ-գնդապետ **Գուրգեն Դալիբալթայանն** է, գլխավոր խմբագիրը՝ պ.գ. դոկտոր-պրոֆեսոր **Վլադիմիր Պետրոսյանը**, նկարչական ձեւավորումները պատկանում են պրոֆեսոր **Հենրիկ Մամյանին**:

Գիրքը հայ ռազմափաստագրական, հուշահանրագիտարանային աշխատությունների լավագույն նմուշներից է: Հետանկախության շրջանում դժվար թե ստեղծված լինի նման ծավալով ու նման ժամանակային ընդգրկում ունեցող մի գիրք, որն իր մեջ ներառում է ոչ միայն հայ ազատագրական ողջ պայքարը, այլեւ դրան զուգորդված քաղաքական-հասարակական զարգացումները:

Ինչպես նշվեց, գրքի խիստ կարեւոր առանձնահատկությունը թեմատիկ ու ժամանակային ընդարձակությունն է: Մոտ 2000 (ավելի ստույգ՝ 1956) էջից բաղկացած աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է 1878-1920թթ. Արեւմտյան Հայաստանում, Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ու բռնի տեղահանությանը, սովետական բռնությունների ժամանակ Խ. Հայաստանում տեղի ունեցած բռնություններին ու դրանց հաջորդած վայրագ սպանություններին: Հատուկ անդրադարձ է կատարված հայ ժողովրդի մասնակցությանը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին, որտեղ հնարավորինս ներկայացված է մեր քաջարի մարտիկների անվեհեր պայքարը՝ ողջ մարդկությանն սպառնացող ֆաշիզմի դեմ: Հատուկ ընդգծվածությամբ անդրադարձ է կատարված Աֆղանստանում զոհված հայորդիներին, Խ. Միության մայրամուտին ԼՂԻՄ-ում ու Խորհրդային Ադրբեջանում հայ ժողովրդի հանդեպ կիրառված հալածանքներին ու մյուս վայրագություններին:

Մեկ առանձին գլխով ներկայացված են ՀՀ Ազգային հերոսները, Արցախյան շարժման տարիներին հանուն հայրենիքի մարտնչած ականավոր դեմքերը: «Հավերժական պանթեոն» գլխում անուն առ անուն, լուսանկարներով ներկայացված են զոհված եւ անհետ կորած հայորդիները: Դա գիրք է, որը տեղեկույթի ձեւաչափով ներկայացնում է վերջին 100-130 տարիներին հայ ժողովրդի կրած դառնությունները ու բերկրանքը. դա մեր ժողովրդի գիրքն է՝ բոլոր առումներով:

Դժբախտաբար այս գիրքը, որը պետք է լինի յուրաքանչյուրիս սեղանին, դեռ ժամանակին տպագրվել է սակավ տպաքանակով, եւ այսօր գրախանութներում այն գտնելը խիստ դժվար է: Պետություն, որի պատվերով տպագրվում են հարյուրավոր գրքեր, միջոցներ չունի կամ չի ցանկացել բավարար միջոց տրամադրել մի գրքի տպագրության համար, որի գոյությունը յուրաքանչյուր սերնդի համար դաստիարակող նշանակություն ունի, ասել է թե՝ կենսունակ մի գիրք նաեւ հենց պետության համար:

Սասուն Գրիգորյանը մահացավ 2016թ. հունվարի 6-ին: Թող այս փոքրիկ գրությունը կոչ-հորդոր ու խղճի անքնություն լինի ոլորտի պատասխանատուներին, որը, հույս ունեմ, կսիրողի նրանց, այնուամենայնիվ, մտածել ներկա ու ապագա սերունդների մասին եւ վերատպել այս գիրքը՝ այդիսկ կերպ հարգանքի տուրք մատուցելով թե՛ Սասուն Գրիգորյանի հիշատակին, թե՛ գրքում աշխատող քաջերին:

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 8

Ղազախստանն արտաներք նախագահական ընտրությունների շեմին

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, իշխանության տարացման գործընթացը այդ երիտասարդ, բայց շատ հավակնոտ հետխորհրդային հանրապետությունում սկսվել է մարտին, երբ երկրի գործող նախագահ **Նուրսուլթան Նազարբաեւը** պաշտոնապես վայր դրեց պետության ղեկավարի լիազորությունները: Համաձայն սահմանադրության, կառավարման ղեկն անցավ Խորհրդարանի Սենատի խոսնակ **Կասիմ-Ժոմարտ Տոկաեւին**: Քիչ անց նա էլ հայտարարեց արտահերթ նախագահական ընտրությունների ժամկետը, որոնք նշանակված են 2019թ. հունիսի 9-ին:

Հարկ է նշել, որ Ղազախստանը հետխորհրդային հանրապետությունների շարքում առանձին է կանգնած: ԽՍՀՄ փլուզումից հետո պետությունը վարում է բավականին օրիգինալ բազմավեկտոր քաղաքականություն, որն ուղղված է քաղաքական, տնտեսական եւ ազգամիջյան կայունության պահպանմանը: Արդյունքում, Ղազախստանը, որին աշխարհի քաղաքական գործիչներն ու փորձագետները կանխատեսում էին փլուզում եւ անկում, համարձակ մտավ աշխարհի մրցունակ երկրների շարքը: Ի տարբերություն ԱՊՀ-ի իր բազմաթիվ այլ «գործընկերների», այս երկիրը հաջողությամբ խուսափեց քաղաքացիական պատերազմներից, ազգային եւ կրոնական անհանդուրժողականության սրացումներից եւ նույնիսկ վերջերս շաս արդիական դարձած «գույնզգույն» սցենարներից: Երկրի ներսում իրավիճակն աղակայունացնելու փորձեր, ինչպես ընդդիմության, այնպես էլ ծայրահեղական կազմակերպությունների կողմից, պարբերաբար ձեռնարկվել են, բայց ժամանակին կասեցվել են հատուկ ծառայությունների կողմից եւ հաջողություն չեն ունեցել:

Ղազախստանից գլխավոր դժգոհությունն այն էր, որ նրա գերագույն ղեկավարությունը երկար ժամանակ անփոփոխ էր: Նուրսուլթան Նազարբաեւը նախագահի պաշտոնը վարել է, ըստ էության, անկախության ողջ շրջանում, այսինքն մոտ երեսուն տարի: Ընդդիմադիր ՁԼՄ-ները թանձր գույներով նկարագրում էին «Ժառանգորդ» գործողության տարբեր սցենարները՝ ընդհուպ միապետական: Վերլուծաբանները անբարենպաստ կանխատեսումներ էին անում այն մասին, թե ինչ կլինի, երբ ազգի առաջնորդը (Նազարբաեւի պաշտոնական, օրենսդրորեն կարգավիճակը ղազախերեն անվանվել է «Ելբասի») ֆիզիկապես այլեւս չի կարողանա կառավարել երկիրը: Սակայն կանխատեսումները չարդարացան: Նախագահի, կառավարության եւ խորհրդարանի միջեւ լիազորությունների վերաբաշխմանն ուղղված լուրջ բարեփոխման իրագործումից հետո Նազարբաեւն ինքը նախաձեռնեց իշխանության փոխանցման ասիաձանական գործընթաց, ընդ որում առավելագույն ժողովրդական ճանաչարհով՝ նախագահական ընտրությունների գործընթացի միջոցով:

Կոչին առաջինն արձագանքեց քաղաքացիական հասարակությունը: Ապրիլի 22-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվեց նախագահի թեկնածուի առաջին դիմումը՝ **Սադիբեկ Տուգելի** կողմից, որը լրագրող է, գրող, հասարակական գործիչ եւ ազգային մարգաձեւի մոլի քարոզիչ: Նրան առաջադրել է «Մեծ արծիվ» Հանրապետական շարժումը: Տուգելի գործընկեր, հասարակական գործիչ եւ լրագրող, նախկին փոխվարչապետ Ակեժան Կաժիգելդինի նախկին մամլո խոսնակ **Ամիրժան Կոսանովը** առաջադրվել է «Ազգի ճակատագիր» հասարակական կազմակերպության կողմից: Հասարակական երրորդ կազմակերպության ներկայացուցիչը դարձավ խորհրդարանի նախկին պատգամավոր **Ամանգելդի Տասպիխովը**, որին առաջադրեց Ղազախստանի արհմիությունների դաշնությունը:

Գալիք ընտրությունները, ինչպես դժվար չէ հասկանալ, զանգվածային աշխուժություն առաջացրեցին Ղազախստանի կուսակցական դաշտում: Նուր-Սուլթանում (նախկին Աստանայում) անցան բազմաթիվ արտահերթ համագումարներ եւ ամենուրեք գլխավոր հարցը թեկնածուների առաջադրումն էր: Ակտիվություն դրսեւորեց նույնիսկ սովորաբար պասիվ «Աուիլ» կուսակցությունը: Այն առաջադրեց **Տոլեուսայ Ռախիմբեկովի** թեկնածությունը, որը դասախոս է, պրոֆեսոր, նախկինում Ղազախստանի գյուղատնտեսության փոխնախարար:

«Կուսակցության որոշումը մասնակցել նախագահի ընտրություններին թելադրված է նախ եւ առաջ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի մեջ ձեւակերպված նպատակներն ու ռազմավարական խնդիրները կրկին հայտարարելու ձգտմամբ», - այս դիրքորոշումը հիմնավորեց «Աուիլ»-ի առաջնորդ **Ալի Բեկեցաեւը**: «Հաջորդ նպատակը Ղազախստանի քաղաքացիներին ցուցադրելն է, որ Ժողովրդա-դեմոկրատական հայրենասիրական «Աուիլ» կուսակցությունը ոչ թե ամորֆ կուսակցություն է, այլ իրական ժողովրդական քաղաքական ուժ, որը զգում է երկրում հասարակական-քաղաքական իրավիճակը եւ որը կարող է մասնակցել ամենակարեւոր քաղաքական իրադարձություններին»:

Ղազախստանի «Լեգալ ընդդիմությունը»՝ Համազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ի սկզբանե հայտարարել էր լրագրող եւ հասարակական գործիչ **Երմուրատ Բաթիի** թեկնածությունն առաջադրելու վերաբերյալ, սակայն հետո փոխեց իր որոշումը: Այդ կուսակցությունը հրաժարվեց ընդհանրապես մասնակցել գալիք ընտրություններին:

Խորհրդարանական կուսակցություններից օրիգինալ դիրքորոշմամբ աչքի ընկավ «Ակ ժոլ» կուսակցությունը, որը նախագահական պաշտոնի համար մղվող պայքարում առաջադրեց Խորհրդարանի պատգամավոր **Դանիա Եսպաեւային**: Նա նախընտրական մրցավազքին մասնակցող միակ կինն է: Վերլուծաբանները սկզբում կանխատեսում էին կուսակցության նախագահ Ազատ Պերուաշեւի թեկնածությունը, սակայն այդ կանխատեսումները չիրականացան: Պերուաշեւը ինքնաբացարկ հայտարարեց: «Մենք պետք է հեռանանք այն վիճակից, երբ կուսակցությունն ու նրա նախագահը նույն բանն են»,- հայտարարեց նա: «Ոչ, «Ակ ժոլ» կուսակցությունը շաս ավելին է, քան Պերուաշեւը: Մենք շաս արժանավոր մարդիկ ունենք: Առանց մրցակցության ո՛չ տնտեսության մեջ, ո՛չ էլ քաղաքականության, զարգացում չի լինի: Եթե մենք ցանկանում ենք զարգացնել կուսակցությունը, ապա մենք պետք է խթանենք մրցակցությունը, բացահայտենք նոր անուններ»: Այդ կուսակցության եւս մեկ ներկայացուցիչ՝ **Տալգաս Երգալիեւը**, նույնպես կարող էր լրացնել «նոր դեմքերի» պատկերասրահը, սակայն կուսակիցները արգելափակեցին նրա թեկնածությունը՝ առավելություն տալով Եսպաեւային: Դրանից հետո նա այնուամենայնիվ թեկնածու առաջադրվեց, բայց արդեն «Ղազախստանի Շինարարների միության» կողմից:

Ղազախստանի Կոմունիստական ժողովրդական կուսակցությունը գնաց փորձված ճանապարհով: Նրանց թեկնածուն՝ խորհրդարանի պատգամավոր **Ժամբիլ Ախմետբեկովն** արդեն մասնակցել էր 2011թ. նախագահական ընտրություններին եւ գրավել երրորդ տեղը:

«Նուռ Օթան» կուսակցությունն ավանդույթի համաձայն միաձայն քվեարկեց գործող նախագահի թեկնածության օգտին: Այսինքն՝ այս պահի դրությամբ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի: Կուսակցության կողմից նրա թեկնածությունն առաջադրեց Նուր-սուլթան Նազարբաեւը, որի հեռանալը պետության ղեկավարի պաշտոնից բոլորովին էլ չէր նշանակում հեռացում քաղաքականությունից ընդհանրապես:

«Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը անկախության առաջին օրերից աշխատել է իմ կողքին ամենատարբեր տեղամասերում»,- հայտարարեց ազգի առաջնորդը: «Եկեք ընտրենք Տոկաեւին նախագահ եւ աջակցենք նրան»: Այդ հայտարարությունը այնքիսի բուռն աջակցության արժանացավ, որ Նազարբաեւը նույնիսկ կասակեց, թե. «Չէ՞ որ մենք նոր նախագահ ենք ընտրում, այնինչ ստացվեց այնպես, կարծես թե ես եմ նորից ընտրվում...»: Ինչպես ամեն կասակում, այստեղ էլ կասակի բաժին կար: Թեկնածու Տոկաեւը խոստացավ շարունակել առաջին նախագահ- Ելբասիի ռազմավարական քաղաքական կուրսը, որն ուղղված է երկրի բազմակողմանի զարգացմանը: Նա ընդգծեց, որ իր խնդիրը տեսնում է երկրի առաջնորդի քաղաքականության իրավահաջորդությունը ապահովելու մեջ: Որքան էլ տարօրինակ հնչի, բայց տվյալ պահին սա ամենաշահեկան նախընտրական ռազմավարությունն է: Եթե այլ թեկնածուները պոպուլիստական մղումներից ելներով առաջարկում էին փոխել հարկային համակարգը, անցկացնել սոցիալական բարեփոխումներ կամ «վերացնել» արժեզրկումը, եւ այլն, ապա Տոկաեւն անսխալ կերպով ընտրեց այն, ինչ ղազախստանյան ընտրազանգվածի համար ամենից կարեւորն է՝ խաղաղություն եւ կայունություն: Ղազախստանի քաղաքացիներին, որոնք տարեցտարի քվեարկում են հօգուտ առաջին նախագահի վարած քաղաքականության, հասկանալի կարելի է: Ընդ որում, հարեւանների օրինակները պարզ ցույց են տալիս, որ «արժանապատվության հեղափոխությունները» շաս արագ ու հեշտ վերածվում են «թերությունների կոնսերվացիայի»: Չնայած գոյություն ունեցող համակարգի բոլոր հիմնախնդիրներին եւ թերություններին, Ղազախստանը հետխորհրդային տարածքում քաղաքական եւ տնտեսական առաջնորդներից մեկն է, եւ բոլորովին էլ ապացուցված չէ, որ եթե իշխանության գա մի նոր բարեփոխիչ, կկարողանա գոնե պահպանել ամեն ինչ նախկին մակարդակով:

ՀՀ վարչապետ՝ պարոն Ն.Վ. Փաշինյանին,
«Պրոֆ. Հ.Ա. Քալամքարյանի անվ. մաշկավեներաբանության եւ մաշկի օպտիկական ախտորոշման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ՝ բ.գ.դ., պրոֆ. Խ.Մ. Խաչիկյանից

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հարգարժա՛ն պարոն վարչապետ,

ՀՀ ԱՆ մաշկաբանության եւ սեռավարակաբանության ԲԳԿ-ի (այսուհետ՝ ԲԳԿ) մասնավորեցման մասին կառավարության ծրագիրը գտնվում է իրացման փուլում:

Ձեզ դիմելու մեր անհանգստությունը պայմանավորված է պաշտոնական մամուլում տարբեր ֆիզիկական եւ իրավաբանական շահագրգիռ անձանց մասին շրջանառվող լուրերով, անձանց՝ որոնք ԲԳԿ-ի եւ առավել եւս մաշկավեներաբանական ծառայության զարգացման վերաբերյալ կարող են ունենալ միայն օգտապաշտական նկրտումներ:

Բանն այն է, որ ԲԳԿ-ն ՀՀ-ում մաշկաբանության նեղ մասնագիտական միակ բժշկական, գիտական, կրթական, ուսումնական, մեթոդաբանական կենտրոնն է: Այստեղ են իրենց գործունեությունը ծավալում ԵՊԲՀ-ի մասնագիտական ամբիոնները եւ ասոցիացիաները: ԲԳԿ-ն համախմբող ուժ է, որտեղ խաչաձեւվում են ՀՀ ողջ տարածքում աշխատող շուրջ 350 մաշկավեներաբանների եւ բժիշկ-կոսմետոլոգների գործունեության վեկտորները, այստեղ է բյուրեղանում մաշկավեներաբանության գիտական միտքը:

ԲԳԿ-ի կոլեկտիվը դիմում է ներկայացրել առ այն, որ մասնավորեցման գործընթացում հաշվի առնվի տասնամյակների ընթացքում (մաշկավեներաբանությունը ՀՀ-ում շուրջ 100 տարեկան է) ՀՀ բնակչությանը նեղ մասնագիտական օգնություն ցուցաբերած միակ կենտրոնի աշխատակիցներից յուրաքանչյուրի դիրքորոշումը:

Հարգելի՛ պարոն վարչապետ, թույլ տվեք մեր ասոցիացիայի անունից նույնպես հայտել Ձեր աջակցությունը՝ խնդրելով ապահովել ԲԳԿ-ի մասնավորեցման գործընթացում նրա կոլեկտիվի ցանկության առաջնահերթությունը:

Պրոֆ. Հ.Ա. Քալամքարյանի անվ. մաշկավեներաբանության եւ ՄՕԱ ասոցիացիայի հիմնադիր անդամներ՝

պրոֆ. Խաչիկ Խաչիկյան
դոց. Հակոբ Գրիգորյան
Վաչագան Սարգսյան
Շուշանիկ Կարապետյան
Միխայել Մխիթարյան
Էդուարդ Ավագյան
Լուսինե Կիրակոսյան
Դավիթ Հարությունյան
Անի Ալեքսանյան

27.05.19 թ.

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 9

Վերականգնելով ասիաբնակ հայերի պատմությունները

Անգլիական «Դեյլի Սթար» պարբերականը վերջերս ընդարձակ հոդված է հրատարակել անգլիաբնակ հետազոտող Լիզ Չաթերի մասին, որը 2000 թվականից զբաղվում է Հարավային Ասիայի երկրներում ապրող հայկական համայնքների պատմությունը ուսումնասիրելով: Ներկայիս նա աշխատում է Բանգլադեշի հայկական ժառանգության ծրագրի վրա, համագործակցելով Արմանիտոլայում գտնվող հայկական Սուրբ Հարություն եկեղեցու հետ: Լրագրող Մոյուխ Մահտաբի հետ էլփոստով կատարված հարցազրույցի ընթացքում նա խոսում է իր ժառանգության, հետազոտական հետաքրքրությունների եւ ծրագրերի մասին:

Մոյուխ Մահտաբ.- **Ինչպե՞ս պատահեց, որ սկսեցիք հետաքրքրվել Ասիայում 16-18-րդ դարերի հայկական համայնքների պատմություններով:**

Լիզ Չաթեր.- Ասիայում հայկական ծագումնաբանության վերաբերյալ հետաքրքրությունս պարտական եմ Հնդկաստանում, հատկապես Դաքայում ապրած իմ ընտանիքի պատմությանը: Մեծ Բրիտանիայում ապրող շատ հայերի նման ես էլ էի ցանկանում իմանալ մանրամասնություններ իմ ընտանիքի անցյալի մասին: Հայրս շատ բան չէր պատմում Հնդկաստանում ապրած իր տարիների մասին: Եղբայրը 17 տարեկանում զոհվել էր համաշխարհային 2-րդ պատերազմի ժամանակ: Նրանց երկուսի հայրն էլ 1940-ականներին էր մահացել: Ես շատ փոքր էի, երբ նրանց մայրը, իմ տատիկը, մահացավ, այնպես որ ազգականներիցս ոչ մեկից չէի կարող տեղեկություն քաղել իմ անցյալի մասին: Մորս պատմած կցկտուր տեղեկություններով է, որ գնացի բրիտանական գրադարան որոշ բաներ պարզելու: Հայտնաբերեցի, որ Չաթեր ազգանունը շատ տարածված է Հնդկաստանում եւ որոշեցի նրանց բոլորի հետքերով գնալ մինչեւ գտնեմ իմ ընտանիքի հետ կապված առնչություններ: Շատ չանցած Կալկաթայում եւ Դաքայում գտա որոշ հիշատակություններ, որոնց վրա հիմնվելով շարունակեցի ուսումնասիրությունս: Գիտակցելով, որ ասիաբնակ հայերի մասին առցանց տեղեկությունները շատ սակավ են, բնականաբար ընդլայնեցի հետաքրքրություններիս շրջանակը եւ սկսեցի զբաղվել ընդհանրապես այդ տարածքում ապրող հայերի պատմությունը վերականգնելու գործով: Ստեղծեցի իմ կայքը՝ «www.chater.genealogy.com» եւ տեղադրեցի հայ ընտանիքներին վերաբերող նյութեր, որպեսզի հասանելիությանը ավելի մատչելի դարձնեմ Հնդկաստանում հայերի ներկայության մասին տեղեկությունները: Հետազոտություններս ինձ տարան դեպի 19-րդ, 18-րդ, 17-րդ եւ նույնիսկ 16-րդ դարը, եւ ինչքան խորացա, այնքան բազմազան դարձան հարցերը եւ հետաքրքրասիրությունս էլ ավելի սրվեց:

- Դուք նշեցիք, որ ձեր ընտանիքի արմատները գտել եք Կալկաթայում եւ Դաքայում: Ովքե՞ր էին Չաթերները այդ վայրերում:

- Ինչպես ասիաբնակ շատ հայեր, իմ նախնիներն էլ Հնդկաստան էին գաղթել Պարսկաստանից: Բախտավոր եմ, որ սերնդե սերունդ պահպանվել է մեր ընտանեկան Ավետարանը, որտեղ հնագույն արձանագրությունը նշում է, որ Աբրահամ Մարտիրոսի եւ Մագդալենա Չաթերի որդի Առաքել Չաթերը ծնվել է Դաքայում 1832 թվի հոկտեմբերի 11-ին, երեքշաբթի օրը ժամը առավոտյան 7-ին: Առաքելը ամուսնացել է 1851 թվի հոկտեմբերի 4-ին Էլիզաբեթ Ֆլորենթինի հետ, որը սակայն վաղաժամ մահացել է 1857-ի նոյեմբերի 20-ին: Ավետարանում նշումներ կան նաեւ նրանց զավակների եւ հետագա սերունդների մասին: Առաքելի եւ Էլիզաբեթի առաջին զավակը ծնվել է 1853-ին: Նրան անվանել են Մագդալենա: Երկրորդը՝ Էլիզաբեթը ծնվել է 1856-ին, որը, սակայն, վաղաժամ մահացել է 1880-ին:

Բանգլադեշի հայկական ժառանգության ծրագրի հետ համագործակցելը առիթ տվեց ինձ ծանոթանալու եւ որոշ ճշտումներ կատարելու եկեղեցու արձանագրությունների մեջ: Պետք է նշեմ, որ Դաքայի եկեղեցու արձանագրությունները բնօրինակներ չեն, դրանք կորել են, իսկ վերոնշյալ ծրագրի վրա աշխատողները օգտվում են ավելի ուշ՝ հավանաբար 1950-60-ականներին գրված արձանագրություններից: Բարեբախտաբար Ավետարանի գրությունների հետ համեմատելով կարողացա որոշ ճշտումներ իրականացնել:

Առաքելը աշխատել է Առայի, Միմենսինգի եւ Դինաժպորի դատավորների գրասենյակներում: Տասնյոթ զավակ է ունեցել, որոնցից մեկը իմ պապուպապն է՝ Աբրահամը, որ փոստի կառավարիչ է դարձել նախ Պորտ Բլեռում, ապա Կալկաթայում, Պատնայում եւ Բակնիպորում: Աբրահամը ունեցել է առնվազն 13 զավակ, որոնցից մի քանիսը մանուկ հասակում մահացել են: Բրիտանական գրադարանում բավական հարուստ տեղեկություններ կան հայերին վերաբերող:

Ռուբեն Կարախանյան

- Դուք նաեւ աշխատել եք Դաքայի հայոց եկեղեցու գերեզմանատան արձանագրությունների ուսումնասիրման ծրագրի վրա: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:

- Շատ անգամ եմ այցելել Հնդկաստան եւ ամեն առիթ օգտագործել եմ նկարելու հայկական գերեզմանների արձանագրությունները, հատկապես Կալկաթայում: Վերադարձիս դրանք թարգմանելով անգլերենի զետեղել եմ իմ կայքում: Ես ինքս չեմ խոսում կամ կարդում հայերեն, բայց Կալկաթայից մի ուսանող, որը նույնպես պատմությամբ հետաքրքրվում էր, օգնության հասավ ինձ: Ինձ մեծապես օգնեց նաեւ պրոֆ. Սեդրուհ Ասլանյանը: Հիմա այդ գերեզմանատարերը խոսում եմ նաեւ անգլերեն: Հետո անցա Դաքայի գերեզմաններին: Այստեղ էլ ինձ օգնեց Գրիգոր վրդ. Մագսուդյանը:

Լիզ Չաթեր

Ասիաբնակ հայերի պատմությունը չափազանց հարուստ է: Մի օր այդ տարածքները կրտսվելու են իրենց հետ տանելով նաեւ պատմական արձանագրությունները: Եթե ես իմ կարողությունների սահմանում պահպանեմ դրանց մի մասը, ապա երջանիկ կլինեմ: 2005-ին Կալկաթա այցելություններից մեկի ժամանակ հնարավորություն ունեցա ծանոթանալու հայկական Սբ. Նազարեթ եկեղեցու հարանիքների, կնունքների եւ թաղման արարողությունների արձանագրությունների հետ: Լուսանկարեցի դրանք: Պարզվեց, որ կնունքի արձանագրությունները գրանցված են սկսած 1793 թվից: Երկու տարի դրանց դասակարգմամբ եւ թարգմանությամբ զբաղվելուց հետո կատարածս աշխատանքը նվիրեցի «Բրիտանական Հնդկաստանի հասարակայնության ընտանիքներ» կազմակերպությանը, որի կայքի հասցեն է «www.fibis.org»:

- Իսկ ներկայիս ինչի՞ վրա եք աշխատում:

- Ներկայիս իմ ուշադրության կենտրոնում է Բանգլադեշի հայկական ժառանգության ծրագիրը: Դաքայի եկեղեցու ժամկոչ Արմեն Աղալանյանի հետ ծանոթացել ենք բազմաթիվ առեւտրական փաստաթղթերի, ընտանեկան լուսանկարների հետ: Լուսանկարներից մեկի պատմությունը ուշագրավ էր: Ռուբեն Կարախանյան անունով մի երաժիշտ 1935-ին Կալկաթա այցելության շրջանակներում համերգ է տվել Դաքայի եկեղեցու շրջաբակում: Համայնքը ծափողջույններով է դիմավորել նրան: Ռուբենը ընկերացել է այնտեղ 22-ամյա իր անվանակից Ռուբեն Դավիթի հետ, որին էլ նվիրել է իր մակագրված լուսանկարներից երկուսը: Դավիթի ընտանիքը դրանցից մեկը փոխանցել է Հայկական ժառանգության ծրագրին: Երբ ես Արմեն Աղալանյանին էի պատմում այս մասին, նա հանկարծակիի եկավ եւ նկարը տեսնելով հիշեց, որ այդ համերգից 30 տարի անց, 1960-ականներին ինքը հանդիպել էր այդ երաժշտին իրենց տանը, Բուենոս Այրեսում: «Լուսանկարը մանկությանս հիշողությունները արթնացրեց իմ մեջ: Այդ ժամանակ ես գաղափար անգամ չունեի, որ մի օր Դաքայում կհայտնվեմ որպես եկեղեցու ժամկոչ», նշել է նա:

Այս պատմությունը շատ ոգեւորիչ է, որովհետեւ ցույց է տալիս, որ մեր կատարած աշխատանքը կարեւոր ներդրում է այդ համայնքի պատմությունը վերականգնելու գործում: Երբ սկսեցինք այս ծրագիրը, չգիտեինք, թե ինչ արդյունքների կհասնենք: Հիմա վստահ ենք, որ այն արդյունավետ է: Ամեն մի մասունք, մոռացված լուսանկար նոր հիշողությունների առիթ է դառնում եւ նոր իմաստ հաղորդում մեր գործին: Ամեն հայ իր ուրույն պատմությունն ունի, եւ մեր պարտականությունն է ոչ միայն մեզ համար պահպանել այդ պատմությունները, այլեւ փոխանցել սերունդներին: Այդ նպատակով էլ խնդրում եմ մեզ հաղորդել ամեն մի մանրուք կապված ասիաբնակ հայ համայնքների կյանքի վերաբերյալ, այցելելով «chater-genealogy.com», «chater.genealogy.blogspot.com» կամ «armenianchurch. bangladesh@gmail.com» կայքերը: Շնորհակալություն:

- Ձեզ շնորհակալություն այս խիստ հետաքրքրական հարցազրույցի համար:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Դոկտ. Կարին Մարկիդեսը ՀԱՀ-ի նոր նախագահ

Հայաստանի Ամերիկյան համալսարանի նախագահի պաշտոնին հավակնող 60 թեկնածուներից եզրափակիչ փուլ էին հասել 4-ը, որոնցից վերջերս դոկտ. Կարին Մարկիդեսը նշանակվել է նախագահ: Նա փոխարինելու է վերջին հինգ տարում այդ պաշտոնը վարած դոկտ. Արմեն Տեր-Կյուրեղյանին, որ շարունակելով մնալ ՀԱՀ կորպորացիայի Հոգաբարձուների խորհուրդի անդամ, այսուհետ մտադիր է հեղինակել ճարտարագիտական երկու դասագիրք եւ ավելի շատ ժամանակ անցկացնել ընտանիքի հետ: Կալիֆոռնիայի (Բերկլի) համալսարանից պրոֆ. Տեր-Կյուրեղյանը, ի դեպ, ամերիկյան համալսարան հիմնադրելու մտահղացողն է, որ Հարավային Կալիֆոռնիա համալսարանից դոկտ. Միհրան Աղբաբյանի, Երեւանի ճարտարագիտական ինստիտուտի ռեկտոր Յուրի Սարգսյանի եւ այլ համախոհների հետ 1991 թվին իրականություն դարձրեց երազանքը, այն է Գյումրիի երկրաշարժից հիմնահատակ ավերված ճարտարագիտական ինստիտուտի փոխարեն կառուցել նոր, ամերիկյան նախատիպով մի կրթական օջախ:

Սակայն անուրանալի ճշմարտություն է, որ Հայաստանի Ամերիկյան համալսարանի բուն հիմնադիրը երջանկահիշատակ Լուիզ Մանուկյան-Սիմոնն է, որի հիմնադիր նվիրատվությամբ է, որ ամերիկյան պետական համապատասխան մարմինները ակնածանքով մոտեցան այդ ծրագրին եւ, ի հավելումն, տիկ. Լուիզի հանգամանքն էր, որ որոշիչ դեր կատարեց, որպեսզի նորանկախ Հայաստանի իշխանությունները նախկին համագումարի շենքը տրամադրեցին նորաստեղծ համալսարանին:

Տպավորիչ կենսագրությամբ նորանշանակ նախագահը դոկտորականի գիտական աստիճան է ստացել 1984-ին Ստոկհոլմի համալսարանից, որից հետո աշխատել է Յուտայի «Բրիգհեմ Յանգ» եւ Ստենֆորդ համալսարաններում (ԱՄՆ): Շվեդիա վերադառնալուց հետո նշանակվել է դեկան Ուփսալա համալսարանի ճարտարագիտության ֆակուլտետի: 2004-ին դարձել է Վինոովայի՝ Շվեդական նորարարական գործակալության ընդհանուր տնօրենի տեղակալ: Այնուհետեւ ընտրվել է Չալմերս տեխնոլոգիական համալսարանի նախագահ եւ 2015-ից զբաղեցնում է Շվեդական կառավարությանն առընթեր հարաճուն զարգացման գիտական խորհրդի ամբիոնի վարիչի պաշտոնը: Հայաստանը նրան հրաժարել է առաջին հերթին իր աշխարհագրական դիրքով,

որտեղ արեւելքն ու արեւմուտքը միաձուլվում են: Նա մտադիր է իր նորարարական մտահղացումներն ու առաջավոր տեխնոլոգիաները ի սպաս դնել Հայաստանի Ամերիկյան համալսարանում: Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 10

Եվրախորհրդարանը «կանաչեց» եւ աջ տեղաշարժվեց

Էական փոփոխություն չի լինի

Մայիսի 23-ից 26-ը անցկացված Եվրախորհրդարանի ընտրությունների արդյունքները ի հայտ բերեցին առաջին հայացքից իրար հակասող երեք միտումներ: Մի կողմից, խորհրդարանում իրենց տեղերը կավելացնեն ազգային-պահպանողական ուժերը: Մյուս կողմից, կավելանա նաեւ այլ կարգի ընդդիմադիրների՝ ազատականների, ինչպես նաեւ «կանաչների» թիվը: Սակայն, չնայած կազմի այս փոփոխություններին, Եվրախորհրդարանի գործունեության բովանդակությունը դժվար թե փոփոխություններ կրի:

Դիտորդներն արձանագրում են այս ընտրություններին եվրոպացի ընտրողների մանակցության համեմատաբար բարձր մակարդակը. ընտրություններին մասնակցել է ընտրողների 50 տոկոսից քիչ ավելին, այսինքն՝ ավելի քան 200 մլն մարդ: Եվրախորհրդարանի երկրների ընտրությունների համար դա ամենաբարձր ցուցանիշն է վերջին 20 տարում: ԵՄ երկրների մեծ մասում ավելի շատ ուշադրություն է դարձվում տեղական խորհրդարանների ընտրություններին, մասնավորապես այն պատճառով, որ Եվրախորհրդարանի լիազորություններն այնքան էլ շատ չեն: Այսպես, նա չի կարող նույնիսկ օրենքներ ներկայացնել իր հայեցողությամբ: Դրա հետ մեկտեղ, պատգամավորները մասնակցում են Եվրահանձնաժողովի ձեւավորմանը, որը, պետությունների ղեկավարների խորհրդի հետ մեկտեղ, Եվրամիության իրական իշխանությունն է:

Սպասվում էր, որ Եվրախորհրդարանի 2019 թ. ընտրություններում մեծ հաջողության կհասնեն աջ-պոպուլիստական ուժերը, բայց ընտրությունների նախնական արդյունքները վկայում են, որ խորհրդարանում նրանք մեծամասնություն չեն ունենա:

Այն երկրներում, որտեղ պոպուլիստները իշխող դիրք են զբաղեցնում, ինչպես Իտալիան, Հունգարիան եւ Լեհաստանը, այդ ուժերը առաջին տեղը զբաղեցրին նաեւ Եվրախորհրդարանի ընտրություններում: Իտալիայում առաջատարը «Հյուսիսի լիգա» կուսակցությունն է: Ֆրանսիայում առաջատար դարձավ Մարին Լը Պենի «Ազգային միավորում» կուսակցությունը՝ հետեւում թողնելով նախագահ

Էմանյուել Մակրոնի կուսակցությանը:

Հունաստանում առաջին տեղում հայտնվեց «Նոր ժողովրդավարություն» պահպանողական կուսակցությունը՝ վարչապետ Ալեքսիս Ցիպրասին սիրելով հայտարարել վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ:

Դրա հետ մեկտեղ, այնպիսի երկրներում, ինչպիսիք են Նիդեռլանդները եւ Դանիան, եվրոհոռետեսական կուսակցությունները պարտություն կրեցին: Էստոնիայում նույնպես աջակողմյան ԷԿՌԵ կուսակցությունը հայտնվեց չորրորդ տեղում եւ, ըստ այդմ, չի ունենա ոչ մի եվրոպատգամավոր: Իսպանիայում եւ Պորտուգալիայում կառավարող ձախ կենտրոնամետ կուսակցությունները հաղթեցին նաեւ Եվրախորհրդարանի ընտրություններում: Իսպանիայից ընտրված եվրոպատգամավորների թվում է Կատալոնիայի անկախական առաջնորդնորդ Կառլես Պուչդեմոնը: Ազատական կուսակցությունները հաջողությամբ հանդես եկան Սլովակիայում:

Մի շարք երկրներում հաջողության հասան նաեւ բնապահպանական կուսակցությունները: Մեծ Բրիտանիայում նույնպես «կանաչների» հաջողությունը կարելի է օրինաչափ համարել, ինչը առաջին հերթին կապված է Brexit-ի հարցում կուսակցության հստակ դիրքորոշման հետ: Գերմանիայում «կանաչները» վերցրին կառավարող ՔԴՄ/ՔՍՄ դաշինքի տեղերի մի մասը եւ զբաղեցրին երկրորդ տեղը: Ֆրանսիայում «կանաչները» գրավեցին երրորդ տեղը: Գերմանիայում աջ-պոպուլիստական «Այլընտրանք Գերմանիայի համար» կուսակցությունը զբաղեցրեց չորրորդ տեղը՝ բարելավելով 2014 թ. իր 7.1 տոկոս արդյունքը եւ հասցնելով 10,8-ի:

Վերջին հինգ տարիներին Եվրախորհրդարանը փաստորեն ղեկավարում էին երկու ուժեր, որոնք միաբեսակ կարծիք ունեին հիմնական խնդիրների վերաբերյալ, այն է՝ Եվրախորհրդարանը պետք է ԵՄ առաձին խորհրդարանների համեմատությամբ ավելի լայն իրավունքներ ունենա տնտեսության հարցում: Երկու ուժերն էլ ներկայացնում են խոշոր գործարարների եւ վերազգային ընկերությունների շահերը: Այս տարվա ընտրությունները տվյալ առումով մեծ փոփոխությունների չհանգեցրին: Կանցլեր Անգելա Մերկելի կառավարող դաշինքի քվեների 7 տոկոս կորուստը եւ նախագահ Էմանյուել Մակրոնի կուսակցության երկրորդ տեղում հայտնվելը ավելի շուտ խորհրդանշական իմաստ ունեն: Արդեն հայտարարվել է, որ Եվրախորհրդարանի նոր կազմում կոալիցիայի ձեւավորման նպատակով կիրավիրվեն ազատականները եւ «կանաչները»: Դրանցից ոչ մեկը ներկայումս կառավարող ուժերից արմատապես չեն տարբերվում տնտեսական եւ սոցիալական հաղթականության առումներով:

Մեծ Բրիտանիայում Նայջել Ֆարաջի Brexit-ի նոր կուսակցությունը առաջին տեղը գրավեց Եվրախորհրդարանի ընտրություններում եւ 28 տեղ կունենա խորհրդարանում: Երկրորդ տեղը գրավեց Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, որը առհասարակ դեմ է ԵՄ-ի կազմից դուրս գալուն: Բրիտանական երկու գլխավոր կուսակցությունները՝ պահպանողականները եւ լեյբորիստները, զգալի թվով տեղեր են կորցրել 2014 թ. եվրոպական ընտրությունների համեմատությամբ, ըստ որում, կառավարող Պահպանողական կուսակցությունը այս անգամ հայտնվեց հինգերորդ տեղում եւ նույնիսկ հետ մնաց «կանաչներից»:

Այն, որ բրիտանացիները կմասնակցեն Եվրախորհրդարանի ընտրություններին, հայտնի դարձավ արդիլին, երբ վարչապետ Թերեզա Մեյին չհաջողվեց երկրի խորհրդարանում անցկացնել ԵՄ-ից մինչեւ մարտի 29-ը դուրս գալու վերաբերյալ Brexit-ի նախնական համաձայնությունը եւ ստիպված եղավ ժամկետի երկարաձգում խնդրել: Նոր պայմանավորվածության համաձայն, Մեծ Բրիտանիան ԵՄ-ում կմնա մինչեւ առաջիկա հոկտեմբերի 31-ը, բայց կարող է ավելի շուտ հեռանալ, եթե մինչ այդ խորհրդարանը ընդունի ԵՄ-ի հետ ձեռք բերված եւ երիցս իր մերժած համաձայնությունը:

Այսպիսով, Եվրախորհրդարանում, Brexit-ի կուսակցության 28 տեղերից բացի, 15 տեղ կունենան լիբերալ-դեմոկրատները, 10 տեղ՝ լեյբորիստները, 7 տեղ «կանաչները», 3 տեղ պահպանողականները եւ 1 տեղ՝ ուելսյան «Պլայդ Կամրի» կուսակցությունը, հաղորդում է BBC-ն: Brexit-ից հետո Եվրախորհրդարանում բրիտանացիներին հատկացված տեղերը կբաշխվեն ԵՄ անդամ մյուս 27 երկրների միջեւ:

Առանձնապես հետաքրքրական է «կանաչների» հաջողությունը, որոնք շատ բարձր արդյունքների հասան Գերմանիայում, Ֆրանսիայում եւ մի շարք այլ երկրներում: Կարող է սարսափնակ թվալ, որ տնտեսական դժվարությունների պայմաններում, որոնցից են գործազրկությունը եւ զանգվածային ներգաղթի խնդիրները, այդքան շատ քաղաքացիներ մեծ կարեւորություն են տալիս շրջակա միջավայրի պահպանության հարցերին: Շատերը դա բացատրում են նրանով, որ ԵՄ երկրների բնակչությունն ուզում է կառավարող բյուրոկրատների ուշադրությունը բեւեռել հավերժական արժեքների վրա:

Ինչպես նշում է բրիտանական Financial Times թերթը, 2019 թ. ընտրությունները ձեւավորեցին առավել բազմաբնույթ օրենսդիր մարմին: Ձախ կենտրոնամետ եւ աջ կենտրոնամետ ուժերը վերջին 40 տարվա ընթացքում առաջին անգամ կորցրին իրենց ընդհանուր մեծամասնությունը: Զգալի է դառնում համեմատաբար փոքր կուսակցությունների ազդեցությունը: Դրա հետեւանքները կարող են զգացվել բնապահպանական նորմերի, առեւտրի ազատականացման եւ տեխնիկական կարգավորումների ոլորտներում, բայց դա չի դառնա հեղափոխություն:

Եվրոպամետ կուսակցությունների առաջին փորձությունը կդառնա այն, թե նրանք կկարողանան արդյոք միավորվել Եվրահանձնաժողովի միասնական թեկնածուի ընտրության հարցում: Իսկ ազգայնականների համար դժվար կլինի կազմել միասնական ճակատ: Ավստրիայում անցյալ շաբաթ ծայրահեղ աջերի առաջնորդի հրաժարականին հանգեցրած սկանդալային տեսագրությունը ազգայնական ուժերի միջեւ խոր տարաձայնություններ առաջացրեց Ռուսաստանի հետ կապերի առնչությամբ: Նրանք տարաձայնություններ ունեն նաեւ հարկային քաղաքականության, ազատ շուկայի եւ ներգաղթի համաեվրոպական քաղաքականության հարցերի շուրջ: Հիմա մնում է, որ եվրոպամետ կուսակցությունները ինքնակազմակերպվեն եւ համագործակցեն կոալիցիաներ կազմելով:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

Ինչո՞ւ է Թուրքիան պատ կառուցում Աֆրինի շուրջ

«Աֆրինի շուրջ կառուցվող ցեմենտաշեն պատը թուրքական վերահսկողություն սահմանելու վառ ապացույցն է: Դրանով Թուրքիան Աֆրինի բնակիչներին եւ աշխարհին հասկացնում է, որ սահմանը վերջնականորեն գծված է: Անկարան լրջորեն մտադիր է մնալ Հյուսիսային Սիրիայում: Գործնականորեն այդ պատը ապահովում է անվտանգությունը որեւէ տեսակի ապստամբական եւ Աֆրինը քուրդերի վերահսկողությանը հանձնելու գործողությունների դեմ», նշել է Օկլահոմայի համալսարանի Մերձավոր Արեւելյան ուսումնասիրությունների բաժնի վարիչ պրոֆ. **Զոշուա Լանդիսը**:

Թուրքիան անցյալ ամսվանից՝ ապրիլից սկսել է պատ կառուցել 2018-ի սկզբներից իր գրաված քրդական անկլավի՝ Աֆրինի շուրջ: Քաղաքական մեկնաբանները դրանում տեսնում են անեֆսիայի դրսեւորում, որով Թուրքիան փորձում է արգելել տասնյակ հազարավոր փախստական քրդերի վերադարձը իրենց օջախները: Ներկայիս Աֆրինի քաղաքացիական գործերի վերահսկողությունը հանձնված է Թուրքիայի Հաթայ (նախկին Ալեքսանդրետի սանջակ) նահանգին: Վերլուծաբան **Մուսլու Չիվիրոլլուն** ընդգծում է, որ պատը գործնականորեն մեկուսացնում է Աֆրինը Սիրիայի մյուս շրջաններից, հատկապես Տալ Ռիֆաթ քաղաքի շրջակայքից, որտեղ 100 հազարից ավելի փախստականներ են ապրում ներկայիս: Ուրիշներ գտնում են, որ պատը կառուցվում է արգելելու համար Աֆրինի ազատագրական ուժերի (HRE) հարձակումները, որոնք վերջին շրջանում լուրջ վնասներ էին պատճառել թուրքական զորքերին: HRE-ն սիրիացի քրդերի ժողովրդական պաշտպանության միավորումների (YPG) ճյուղերից մեկն է, որ թիրախավորել էր թուրքական զորքերին ինչպես Աֆրինում, այնպես էլ Ազազում, որ Թուրքիան 2016-17-ին գրավել էր «Իսլամական պետությունից»:

Մինչեւ օրս սիրիական եւ ռուսական կառավարությունները խստորեն չեն դատապարտել Թուրքիայի գործողությունները, ինչը կարող է նշանակել, որ որոշակի համաձայնություն կա կողմերի միջեւ: «Թվում է, թե Մոսկվան փորձում է ընդառաջել Թուրքիային, որպեսզի կարողանա ավարտին հասցնել S-400 հրթիռների գործարքը», հավատացած է Չիվիրոլլուն:

Վերջերս անցկացրած մամուլի ասուլիսի ժամանակ Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** նշել է, որ ինքը տեղյակ չէ պատի կառուցման ծրագրից: Իսկ Լանդիսի կարծիքով հնարավոր է, որ որոշ համաձայնություն գոյություն ունի Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ Հյուսիսային Հալեպի վերահսկողությունը հանձնելու Թուրքիային, իսկ Իդլիբի վերահսկողությունը՝ Սիրիային: «Մինչ թուրքերը հարավում կձնշեն քրդերին, սիրիացիները հյուսիսում կձնշեն արաբ ապստամբներին», ասել է նա:

Ըստ Մերձավոր Արեւելքի ինստիտուտի աշխատակից **Գունեյ Յըլդըզի** Թուրքիայի պաշտոնատար անձինք շատ ավելի մեծ կարեւորություն են տալիս Աֆրինի վերահսկողությունը պահպանելուն, քան հյուսիսարեւմտյան ավելի ընդարձակ տարածություններին, որոնք Թուրքիան գրավել էր «Իսլամական պետությունից» «Եփրատի վահան» գործողության արդյունքում: «Թուրքերի համար առավել նախընտրելի է էլ-Բաբը, Ջարաբլուսը կամ Ազազը վերադարձնել սիրիական իշխանություններին, քան հրաժարվել Աֆրինից: Թուրքիան ցանկանում է քրդերին որքան հնարավոր է հեռու պահել Միջերկրականից», պնդում է Յըլդըզը:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 11

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

ՉԺՀ-ի դիվանագիտական հեռախուզումն Անդրկովկասում

Աշխարհաքաղաքական նոր մեկնարկներ

ՉԺՀ Պետխորհրդի անդամ եւ արտգործնախարար Վան Ի օրերս շրջագայություն կատարեց Անդրկովկասի պետություններ Ադրբեջանում, Վրաստանում եւ Հայաստանում: Չինաստանի արտաքին գերատեսչության առաջին «փաթեթային» այցը տվյալ տարածաշրջանում ունի նկատելի առանձնահատկություններ: Անդրկովկասյան մայրաքաղաքներում բանակցությունների գլխավոր հարցը տնտեսությունն է: Ներկայումս Թբիլիսիի, Բաքվի ու Երեւանի հետ Պեկինի երկկողմ հարաբերություններում արդեն ձեւավորված են հիմնարար ուղղություններ՝ հաշվի առնելով նաեւ ազգային առանձնահատկությունները: Տարածաշրջանում արդեն իրականացվում են ոչ այնքան լայնընդգրկուն համատեղ նախագծեր: Պեկինը երեք պետություններից որեւէ մեկի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք չունի: Անդրկովկասում Չինաստանի ընդհանուր քաղաքականությունը դեռ նոր-նոր է մշակվում: Այն կառուցված է «Մեկ գոտի, մեկ ուղի» համաշարժական նախագծի եւ տարածաշրջանային նոր մեկնարկերի որոնման հետ:

Այս տարածաշրջանում Պեկինը որպես աշխարհաքաղաքական կարգավորում ձեռնարկումներ սկսեց միայն 2010-ական թվականներին, երբ կոնկրետ քայլերի դիմեց տրանսպորտային միջանցքների ստեղծման ուղղությամբ: Նշենք, որ «Մեկ գոտի, մեկ ուղի» համաշարժական նախագիծը հիմնվում է Չինաստանից դեպի Եվրոպա եւ Հարավային Ասիա տանող վեց տնտեսական միջանցքների վրա: Կասպիական երթուղին ենթադրում է Ղազախստանի մասնակցությունը, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նավահանգիստների ներառումը՝ ելք ունենալով դեպի Սեւ ծով: Չինաստանը որոշակի հույսեր է կապում նաեւ Իրան-Հայաստան, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային մայրուղիների հետ:

Ըստ որում, Չինաստանը նկատի է առնում, որ Անդրկովկասը մտնում է Ռուսաստանի ազգային շահերի գոտու մեջ, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այնտեղ ի հայտ են եկել Իրանի եւ Թուրքիայի տարաբնույթ շահերի դրսեւորումներ, ակտիվացել է նաեւ ԱՄՆ-ի ու Եվրոմիության գործունեությունը: Անցյալում Անդրկովկաս մուտք գործելը Չինաստանի համար կապված էր աշխարհաքաղաքական որոշակի վտանգների հետ, քանի որ, ի տարբերություն մյուս խաղացողների, ՉԺՀ-ն ունի տվյալ տարածաշրջանի հետ պատմական շփումների ամենափոքր աշխարհաքաղաքական փորձառությունը: Սակայն ներկա պահի եզակիությունն այն է, որ Ռուսաստանը, Իրանը եւ Թուրքիան Չինաստանին չեն ընկալում որպես «թշնամական ուժ», նրանից չեն սպասում սպառնալիքներ, այլ ընդհակառակը, Չինաստանը համարում են ամերիկյան ազդեցության հակակշիռ:

Առավել եւս, որ չինական կողմը տարածաշրջան է մուտք գործում տնտեսական նախագծերով, որոնցով շահագրգռված են ամենքը, բացի Արեւմուտքից: Ինչպես նշվում է Քարնեգի հիմնադրամի զեկուցագրերից մեկում, խնդիրն այն է, որ ԱՄՆ-ի եւ առհասարակ Արեւմուտքի քաղաքականությունը Անդրկովկասի հանդեպ վերջին քառորդ դարում մի քանի փուլ է անցել: Առաջադրվել են հավակնոտ նպատակներ, բայց դրանք երբեւիցե չեն իրականացվել: Տարածաշրջանի կացությունը հետզհետե ավելի է բարդացել Անդրկովկասի եւ Մերձավոր Արեւելքի իրադարձությունների միահյուսման արդյունքում: Տարածաշրջանի ժողովրդավարական նորացման եւ Արեւմուտքի հետ ինտեգրմանը վերաբերյալ արվող հայտարարությունները հանգեցրին լոկ այն բանին, որ Ադրբեջանը, Հայաստանը եւ Վրաստանը սկսել են շարժվել տարբեր ճանապարհներով:

Անդրկովկասի պետությունները փաստորեն հայտնվում են վակուումի մեջ, եւ չկա կայունացնող որեւէ ուժ: Հենց այս պայմաններում Չինաստանը ներկայացավ որպես կայունացնող գործող՝ առաջարկելով «Մեկ գոտի, մեկ ուղի» աշխարհաքաղաքական նախագիծը: Բաքուն, Թբիլիսին եւ Երեւանը հավանաբար կփորձեն տարածաշրջանում թուլացնել կամ համահարթել Ռուսաստանի ազդեցությունը՝ հասկանալով, որ ԱՄՆ-ը եւ Եվրոմիությունը մնում են գործընկերներ, բայց հեռու են:

Սակայն Չինաստանը սեփական շահերը դանդաղ է առաջ մղում: 2017-ի վերջերին եւ 2018-ի սկզբներին ուժի մեջ մտավ Վրաստանի հետ Չինաստանի ազատ առեւտրի գոտին: Կարեւոր է նշել, որ ՉԺՀ-ի վրա բավական մեծ է եվրասիական տնտեսական միության ազդեցությունը ազատ առեւտրի գոտիների ձեւավորման հարցում: Մասնավորապես Անդրկասպյան երթուղին անցնում է Եվրասիական տնտեսական միության տրանսպորտային-տեխնիկական տարածով:

Միեւնույն ժամանակ, ԵԱՏՄ-ի եւ ՉԺՀ-ի ճանապարհային համագործակցությունը առայժմ մնում է առկախ վիճակում, թեպետեւ հայտնի է, որ Անդրկովկասի պետությունների փոքր տնտեսությունները կարող են որոշակի օգուտ ստանալ չինական նախագծից: Ակնկալվող չինական ներդրումների պայմանները սպասվածից ավելի բարդ կլինեն: Պեկինը առայժմ միայն հիմքերն է գցում իր հավակնությունների նախաբեմին՝ չդրսեւորելով քաղաքական ձգտումներ:

ՉԺՀ արտգործնախարարի անդրկովկասյան ուղեւորությունը եւ բանակցությունները ցույց են տալիս, որ Պեկինը ի վիճակի է բանակցել՝ առանց հարուցելու Անդրկովկասում ազդեցություն ունեցող տարածաշրջանային տերությունների վրդովմունքը, նշում է «Ռեգնում» գործակալությունը:

Հայկական լրատվամիջոցները հաղորդում են, որ չին արտգործնախարարի երեւանյան այցի ընթացքում մասնավորապես ստորագրվել են երկու երկրների քաղաքացիների այցագրային ռեժիմի չեղարկման, երկկողմ առեւտրի ընդլայնման եւ այլ համաձայնագրեր:

Բաքուն՝ Մխիթարյանի որոգայթում

⇨6 Պատճառը ԼՂ այցելած լինելն էր: Շաբաթներ առաջ էլ Հարավկովկասյան պառլամենտական խմբի փոխնախագահ Վայլերը խուսափեց Ադրբեջան այցից», գրեց «Բիլդը»: Իսկ «Թագեսպիգելը» անդրադառնալով Մխիթարյանի Բաքու չմեկնելու, կյանքի համար երկյուղելու փաստին, գրեց, թե հիմնապատճառը Ադրբեջանի եւ Հայաստանի խոր թշնամանքն է, որ ԼՂ-ի համար նույնիսկ պատերազմել են 1992, 1994 թվականներին: Գրեթե մոռացված այս հակամարտության հանդեպ ֆուտբոլի միջոցով միջազգային ուշադրության արժանացնելը Բաքվի իշխանություններին ձեռնտու չէ, նկատել է տալիս թերթը: Մարդու իրավունքների պաշտպան միջազգային կազմակերպությունների շարունակական քննադատությանը հորից պաշտոն ժառանգած Իլհամ Ալիեւի բռնատիրական, լրագրողների, ընդդիմության հանդեպ շաբաթներ առաջ իրականացրած ճնշումներին նորություն չեն, եւ նրանց կարծիքով, Բաքուն ֆուտբոլի միջոցով ուզում էր «մաքրվել»:

Բաքուն միջազգային հարթակ է տրամադրել Formel 1- ին, 2012- ին «Եվրատեսիլին», 2015- ի Եվրոխաղերին, բոլորն անցել են առանց քաղաքական այսքան մեծ աղմուկի: Բայց «Թագեսպիգելի» թղթակիցը 2015- ի հունիսի 29- ի համարում լուսաբանելով մարզական այս իրադարձությունը, նշել էր, թե Բաքվում մոռանում են օլիմպիական արժեքների մասին, երբ խոսքը հայերին է վերաբերվում: «Բաքվի փողոցներում օտարների հանդեպ բարեկամական եւ հարգալից վարքի բոլոր հեստերն անէանում էին, երբ մրցասպարեզ էին ելնում հայ մարզիկները: Դրացի ոչ սիրելի երկրի մարզիկներն արժանանում էին սուլոցների, վատ վերաբերմունքի»:

ZDF-ը Կովկասի հարցերով փորձագետ **Ուլվե Հալբախի** միջոցով վերլուծել էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ԼՂ հակամարտությունը՝ «էքստարածքային» բնութագրելով այն եւ նկատել տալով, թե՝ գրեթե ամբողջապես հայերով բնակեցված ԼՂ- ի հանդեպ Բաքուն վերադարձի պահանջը շարունակում է, բայց տարիների հետ վերադարձի հավանականությունը նվազում է: Հայաստանում ադրբեջանցիներ չկան, իսկ 2 միլիոնից ավելի բնակչություն ունեցող Բաքվում հազիվ 100 հայ է բնակվում՝ 70- ականների վերջին մոտ 170 000 էր հասնում նրանց թիվը, նշում է քաղաքագետը՝ պարզաբանելով, թե երկու դրացի ժողովուրդների միջեւ լարի բացակայությունը հաշտության համար դժվարություն է ստեղծում: Հակամարտության՝ ներքաղաքական ազդեցության մասին ակնարկելիս ZDF- ը փաստարկում է, թե Հայաստանում երկու տասնամյակ իշխող «Ղարաբաղյան կլանը» 2018- ին պաշտոնանկ եղավ, իսկ Ադրբեջանում Ալիեւի ընտանիքը ջանք չի խնայում եվրոպական հարթակում «ոտնատեղ» ունենալ, ինչը ոչ միշտ, բայց մարզական միջոցառումների առումով հաջողություն գտնում է:

Բնական է, որ ֆուտբոլային այս խաղի առիթով առաջին հերթին քննադատվեց Ալիեւի բռնատիրական ռեժիմը, ներկայացվեց մամուլի ազատության սանդղակում Ադրբեջանի հետնապահ դիրքը: Այս առումով առավել ընդգծված է ներկայանում շվեյցարական swissinfo լրատվականի մայիսի 28- ի վերնագիրը՝ «Հայաստանում այսօր յուրաքանչյուրը կարող է ասել այն, ինչ ուզում է»: Հայաստանի ժողովրդավարացման, «թավշյա հեղափոխության» մեկամյակի առիթով ամեն շաբաթ գերմանալեզու մամուլում երեւակվող վերնագրերի աճը Ադրբեջանին զրկում է մեծ ու հաղթական երեւալու դիմագծից:

Մխիթարյանի շուրջ աղմուկը Բաքվի համար նյարդային լարվածություն էր ստեղծում, ուստի արտգործնախարարությունը ներկայացրեց այն որպես բեմադրված սադրանք՝ ի լուր աշխարհի իրազեկելով, թե Մխիթարյանին Բաքվում ադամով, անվտանգ լինելու երաշխիքներ էին տվել: Եթե գերմանացիները չեն հավատում այս երաշխիքի ամրությանը, հայերս ինչո՞ւ ենք այսքան վստահ, թե 25 մարզիկ թուքումուր ստացած, բայց ողջառողջ վերադարձան, ուրեմն... Մխիթարյանն էլ առիթը չպետք է կորցներ:

Շատ քննարկվեց՝ ինչո՞ւ Բաքվում: Ադրբեջանի ազգային հավաքականը ուժեղ թիմ դառնալու պատրանքը վաղուց է փոշիացրել: 2008- ին մարզիչ նշանակված գերմանացի Բերթի Ֆոգթցի 6, 5 - ամյա ջանքերն արդյունք չտվեցին, եւ ըստ «Թագեսպիգելի», մարզիչը հրաժեշտից առաջ խոստովանել էր Ադրբեջանի նախագահին փոխանցածը, թե այսպես՝ մասնագիտական կառույց ստեղծելու կամքի բացակայության պայմաններում որեւէ արդյունք չի լինի: Ֆուտբոլ խաղալ չգիտեն, բայց միջազգային կառույցներին կարողանում են համոզել, եզրակացնում է «Թագեսպիգելը»: 2013- ին ադրբեջանական «Սոֆար» կոնցեռնը ՈՒԵՖԱ- ի հետ խաղերը հովանավորելու պայմանագիր կնքեց, իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որ Դրեզդենից «խլեց» համաշխարհային մշակութային ժառանգության մաս լինելու իրավունքը մի կամրջի պատճառով, «Սոֆարի» շնորհիվ Բաքվի հին քաղաքի վերանորոգված շինությունները տեսնելով չեն միջամտում, թե ինչպես են Ադրբեջանում հայության կյանքի վկայությունները սիստեմատիկ ոչնչացվում, գրում է «Թագեսպիգելը»:

Լոնդոնից Բաքու ուղիղ թռիչքի բացակայության, ավիատոմսի թանկ լինելու, օդանավակայանի՝ այդքան շատ երկրպագու ընդունելու դժվարության մասին է ակնարկում գերմանական taz- ը: Այս թերթն էլ հիշատակում է 2015- ին Բաքվում հայ 25 մարզիկների ներկայությունը ու նրանց հասցեին հնչող ատելավառ արտահայտությունները, անհանդուրժող մթնոլորտը: Մխիթարյանի պարագայում էլ Բաքվի ստադիոնում նույնն էր լինելու երեւի, ենթադրելի է համարում թերթը:

Հենրիխ Մխիթարյանի շուրջ ծագած կոնֆլիկտն էլ մոռացության կտրվի: Այն, որ 2020- ին անցկացվելիք Եվրոառաջնության խաղերին նորից բուռն քննարկման կարժանանա այս հարցը, դժվար հավանական լինի: Բաքուն 13 խաղավայրերից մեկն է լինելու, գրում է «Թագեսպիգելը»:

Գերմանացիները չեն սխալվում, բայց ո՞վ կարող է ենթադրել՝ ի՞նչ կլինի 2020- ին, ինչքա՞ն կդիմանա ադրբեջանցի ժողովուրդը, երբ ամեն օր օտար մամուլում Հայաստանի դեմոկրատացման մասին հոդված կարդա:

AZG NEW SHABAT.QXD 30/05/2019 23:17 Page 12

Հավասարգրեր են ստացել «VivaStart» ծրագրի հերթական փուլի շրջանավարտները

ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակում է իր ներդրումն ունենալ ուսանողների մասնագիտական զարգացման գործում: Հաղորդակցության առաջատար օպերատորը 2015 թվականից իրականացնում է «VivaStart» կրթական ծրագիրը, որը նպաստում է ապագա մասնագետների մոտ անհրաժեշտ հմտությունների զարգացմանը եւ ամուր հիմք ստեղծում կարիերայի զարգացման համար:

Հանրապետության տարբեր բուհերի ուսանողներ հնարավորություն են ստանում ծանոթանալու աշխատանքային գործընթացին՝ ընկերության տարբեր ստորաբաժանումներում, ինչպես նաեւ ձեռք բերում աշխատանքային էթիկայի եւ կորպորատիվ մշակույթի վերաբերյալ գիտելիք: Նմանօրինակ փորձն օգնում է ավելի վստահ քայլերով կերտել սեփական կարիերան:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը հավասարգրեր է հանձնել «VivaStart»-ի 2019 թվականի առաջին շրջանավարտներին: Այս անգամ հանրապետության տարբեր մարզերից եւ տարբեր բուհերից 32 ուսանող հնարավորություն էր ստացել մասնակցելու դասընթացներին: Ի թիվս այլ գիտելիքների, ուսանողները ձեռք են բերել բաժանորդի հետ արդյունավետ հաղորդակցության մի շարք հմտություններ, ծանոթացել ընկերության առաջարկած ապրանքատեսակներին, ծառայություններին եւ դրանք՝ ճկուն մարքեթինգային մոտեցմամբ հաճախորդին ներկայացնելու հմտություններին:

Լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցներից երեքը՝ Նելլի Թադեւոսյանը, Հասմիկ Ալեքսանյանը եւ Լեւոն Մկրտչյանը, ստացել են Samsung Galaxy SM-A305F/ A30 սմարթֆոն:

«Մեր ընկերությունը կարեւորում է «VivaStart»-ը որպես կարեւոր հարթակ՝ կարիերայի ուղին սկսող ուսանողների համար: Այս ծրագիրը մասնագիտական ոլորտում առաջին քայլերը կատարող երիտասարդին հնարավորություն է տալիս դիտարկելու աշխատանքային գործընթացները՝ ներսից, ձեռք բերելու անհրաժեշտ հմտություններ ու ձեւավորելու որոշումներն ինքնուրույն կայացնելու, կողմնորոշվելու կարողություն: Դասընթացի կարեւորագույն նպատակներից է նաեւ գործարար հաղորդակցության ունակությունների զարգացումը: Շնորհավորում եմ ձեզ եւ վստահ եմ, որ մեր ընկերությունում ձեռք բերած փորձառությունը կծառայի որպես կարեւոր մեկնակետ՝ հաջողության հետագա ուղին կերտելու հարցում», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

2015 թվականից մեկնարկած ծրագրի շահառու է դարձել 326 ուսանող: Այդ տարիների ընթացքում, ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատանքային թիմին է միացել լավագույն արդյունք արձանագրած ավելի քան 44 ուսանող:

«Կորպորատիվ 2300». նոր հարմարավետ ու մատչելի փաթեթ՝ կորպորատիվ բաժանորդների համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներկայացնում է կորպորատիվ բաժանորդների համար նախատեսված նոր՝ «Կորպորատիվ 2300» փաթեթը, որը ներառում է ինտերնետ, խոսելաժամանակ դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի, ՀՀ այլ, 374 97 բջջային եւ 374 47 քաղաքային ցանցեր, Ռուսաստան, ԱՄՆ եւ Կանադա եւ SMS հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն:

«Կորպորատիվ 2300» փաթեթն առավել հարմարավետ լուծումներ է առաջարկում կորպարատիվ բաժանորդների համար՝ համակցելով բաժանորդների այս խմբի կողմից ամենապահանջված ծառայությունները մեկ փաթեթում՝ մատչելի պայմաններով.

❖ **4 000 ՄԲ**

❖ **2500 ներքանցային րոպե** (նաեւ դեպի ՎիվաՍել-ՄՏՍ, ՄՏՍ Ռուսաստան)

❖ **150 րոպե** դեպի ՀՀ այլ, 374 97 բջջային եւ 374 47 քաղաքային ցանցեր, Ռուսաստան, ԱՄՆ եւ Կանադա

❖ **150 SMS՝** դեպի ՀՀ բջջային ցանցեր

Ամսավճար՝ 2300 դրամ

Ասոցիացված կորպորատիվ բաժանորդները կարող են միանալ փաթեթին՝ անձնագրով դիմելով ՎիվաՍել-ՄՏՍ-ի մոտակա սպասարկման կենտրոն, իսկ ոչ ասոցիացված բաժանորդները՝ դիմելով իրենց կորպորատիվ փաթեթի պատասխանատու անձին:

Փաթեթը կարելի է օգտագործել բաժանորդի ընթացիկ սակագնային պլանին զուգահեռ, իսկ փաթեթի ամսավճարը կգումարվի սակագնային պլանի շրջանակում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկված պարտքի գումարին: Փաթեթում ներառված ծառայությունները սպառելուց հետո օգտագործված ծառայությունների արժեքը հաշվարկվում է ըստ ընթացիկ սակագնային պլանով սահմանված սակագների:

Ծավակցություն

Հովսեփյան, Վարդանյան ընտանիքներն իրենց խորագագ ցավակցությունն են հայտնում Նոյել, Հուրիկ, Օննիկ Գույումճեաններին ու նրանց ընտանիքներին՝ իրենց սիրելի քույրիկի՝

Աստղիկի

վաղաժամ մահվան առիթով, որ պատահեց մայիսի 30-ին Բեյրութի ֆրանսիական հիվանդանոցում:

«**Ազգ**»ի խմբագրությունը նույն տխուր առիթով ցավակցում է Գերմանիայում իր թոքակից Անահիտ Հովսեփյանին եւ ամուսնուն՝ Օննիկ Գույումճյանին:

Օձի նոր տեսակ՝ Ուրարտական թագավորության պատվին

Եվրոպացի գիտնականները օձի նոր հայտնաբերված տեսակը, որը հանդիպում է Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի, Իրաքի եւ Ռուսաստանի որոշ հատվածներում, անվանել են Ուրարտու, ի պատիվ Ուրարտական թագավորության:

Այս նոր տեսակի օձի ուսումնասիրման աշխատանքները տեւել են 17 տարի:

Գիրք նվիրված տնտեսագետներին

Լույս է տեսել «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովի նյութերն ամփոփող (ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019թ.- 352 էջ) գիրքը:

Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության միամյակին (2018-2019թթ.): Ժողովածուում զետեղված հոդվածները կարող են օգտակար եւ կիրառական լինել Հայաստանում իրականացվող տնտեսական հեղափոխության գործընթացում: Գիրքը երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Ժողովածուի պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Հարությունյանը**:

Գրքում տեղ են գտել բազմաթիվ հետաքրքրական եւ բովանդակալից հոդվածներ նվիրված մեր տնտեսության հետագա զարգացման խնդիրներին: Մասնավորապես, ֆինանսական համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում, Հայաստանը «նոր տնտեսության» ճանապարհին. ռազմարդյունաբերություն, Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը, Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերությունը, մտորումներ, հանգույցներ, զբոսաշրջության զարգացման ուղենիշերը եւ այլն:

Հարկ է նշել, որ այս խնդրին էր նվիրված մայիսի 21-ին ՀՀ ԳԱԱ դահլիճում կայացած գիտաժողովը, որին իր մասնակցությունն էր բերել նաեւ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այլ պաշտոնական անձինք: Ն. Փաշինյանը եւ ելույթ ունեցողները բարձր գնահատեցին տնտեսագիտական նորարարական մոտեցումները մեր երկրում:

- Հասարակության պահանջը ավելին է, քան արձանագրված հաջողությունները: Բարեփոխումների եւ կենսամակարդակի հեղափոխական ազդեցության ակնկալիքն արդարացի է եւ օբյեկտիվ,- իր ելույթում նշեց ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Հարությունյանը:

Ի դեպ, Վ. Հարությունյանը մեծ ներդրում ունի գիտաժողովի կազմակերպման եւ անցկացման գործում: Գրքում ներկայացված նյութերը կարող են ազդակ հանդիսանալ մեր երկրի տնտեսության հետագա զարգացման գործում:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրության 30.5.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 30/05/2019 21:06 Page 1

ՀԱՅԵԼԿԱԾ
Ազգ-մշակութ

Թիվ 21(433)
31 ՄԱՅԻՍ
2019

Նաիր ՅԱՆ

Ազնավուրի հանդեպ անազնիվ

Երբ Շառլ Ազնավուրը ողջ էր, նրա անունը զգուշությամբ էր օգտագործվում, որպես կանոն, մեծ նախագծերի դեմքում անգամ շանսոյեի թույլտվությունն էր ձեռք բերվում: Ազնավուրն իր հավանությունը պետք է տար, հետո միայն իր անունը գրվեր այս կամ այն նախագծի վրա:

Ազնավուրի մահից կես տարի է անցել: Մի քանի ամիս առաջ սկսեց շրջանառվել, որ Ֆրանսիայում գործող «Շահբազյան» պրոդյուսերական կենտրոնը մայիսի 26-ին Հայաստանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, կազմակերպելու է Շառլ Ազնավուրի ծննդյան 95 ամյակին նիրված «Քեզ համար, Հայաստան» մեծ համերգը: Փետրվարին համերգի ազդագրերն արդեն փակցված էին, եւ տեղեկացվում էր, որ մասնակցելու են Պատրիկ Ֆիորին, Հելեն Սեգարան, Սլիմանը, Ռաֆֆի Արտոն եւ եւս երկու-երեք երգիչներ:

Համերգի օրը որքան մոտենում էր, այնքան սպառնացող էին դառնում լուրերը, թե կազմակերպիչները մեկը մյուսին «քաշել» են, պայմանագրեր են խախտվել, ու համերգը չի կայանալու: Ի վերջո, նախագծի հետ կապ ունեցող անհատներն ու ընկերությունները որոշեցին մանրամասնել՝ ինչ է կատարվել իրականում, ինչ խնդիրների առաջ են կանգնել: Ֆրանսիայում գործող «Աննա Կարոլինա» եւ «Շահբազյան» ընկերությունները հայտարարեցին, թե իրենք միայն արտիստների համար են պատասխանատու, մնացած կազմակերպչական հարցերը հայկական կողմի՝ արտիստների համար են պատասխանատու, մնացած կազմակերպչական հարցերը հայկական կողմի՝ «Արմցենտր» ընկերության վրա են: Հետո մեղադրեցին, որ համերգին 4 օր է մնացել, իսկ «Արմցենտրը» դեռ մասնակիցների գումարը եւ մարզահամերգային համալիրի վարձը չի տվել: Տոմսերի ընդամենը 50 տոկոսն է վաճառվել, գումարի միայն 60 տոկոսն է փոխանցվել: «Որպեսզի համերգը չտապալվի, իսկ դա մեծ ամոթ կլիներ, չէ՞ որ Հայաստանի իմիջի ու Շառլ Ազնավուրի անվան հարցն էր դրված, մենք դիմեցինք մշակույթի նախարարությանը»,- պատմեց «Աննա Կարոլինայի» ղեկավար Աննա Կարոլինան:

Համերգի կազմակերպիչները Նազենի Ղարիբյանին տեղեկացրել են, որ համերգը տապալման եզրին է, նա էլ դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Վերջին պահին «Իմ քայլը» հիմնադրամը 50 հազար եվրո, իսկ Փաշինյանը 10 միլիոն դրամ են փոխանցել, որպեսզի Ազնավուրի անունը կրող հայաստանյան համերգը փրկվի: Փրկվեց ե՛ւ Հայաստանի իմիջը, ե՛ւ Ազնավուրի անունը՝ կասեն հպարտությամբ: Մայիսի 26-ին մարզահամերգային համալիրում համերգը կայացավ: Իհարկե, այն ոչ մի առնչություն չուներ ոչ Ազնավուրի, ոչ էլ նրա երգերի հետ: Մաեստրոյի անունը հերթական անգամ օգտագործվեց ու շահարկվեց զուտ բիզնեսի նպատակով: Տեղեկություն կա, թե Նիկոլա Ազնավուրը, որը ղեկավարում է իր հոր անունը կրող հիմնադրամը, համերգի հետ որեւէ առնչություն ունենալուց հենց սկզբից հրաժարվել է: Ցայտնոտային տրամադրությամբ, երախտագիտությամբ լի աչքերով նայելով մշակույթի նախարարության ներկայացուցչին՝ կազմակերպիչները գոհունակությամբ հայտարարեցին, որ համերգը փրկված է, այն անց է կացվում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հովանու ներքո: Համերգից 4 օր առաջ խնդրանք հնչեց՝ ամեն մեկդ ձեր ներդրումն ունեցեք համերգի փրկման գործում, տոմսեր գնեք, հարգելի հայորդիներ: Մեջտեղում Հայաստանի ու Ազնավուրի անվան հարցն է, հասկացե՞ք: Իսկ տոմսերի գումարի որոշ մասն, ասվեց, որ վերադարձվելու է «Իմ քայլը» հիմադրամին:

Համերգը տապալումից փրկելու պատմությունն արվեց հենց Ազնավուրի ծննդյան օրը: Այստեղ նորից պետք է հիշել, որ նրա մահից ընդամենը կես տարի է անցել, ու նրա անվան շուրջն այսպիսի խայտառակ պատմություն պտտվեց: Հետաքրքրական է, եթե Մաեստրոն ողջ լիներ, այս պատմությունը պակա՞ս, թե ավելի խայտառակ ընթացք կունենար: Իսկ միգուցե կազմակերպիչները հենց Ազնավուրին դիմեին, որ նա տոմսեր գնի ու համերգը փրկի տապալումից...

Ցավալի է. ինչ-որ մարդիկ, կազմակերպություններ օգտագործում են մի անուն, որն արտասանելիս անգամ պետք է բոլոր զգայարանները, ամբողջ գիտակցությունը լարել: Պետք է հաշիվ տալ՝ նա Հայաստանի Ազգային հերոս է, մոլորակի ամենաճանաչված հայը, բոլոր ժամանակների, բոլոր սերունդների Ազնավուրը: Հայտնի ու անհայտ, երգեցողության մեջ մի քիչ հաջողած ու բոլորովին չհաջողած կատարողների բերել Հայաստան ու անունը դնել, թե Շառլին նվիրված մեծ համերգ է կազմակերպվում, ուղղակի անարգանք է բոլոր արժեքների նկատմամբ: Մենք ե՞րբ պետք է հասկանանք, որ կան մեծություններ, շատ բարձր արժեքներ, որոնց մոտենալու համար պետք է գիտակցաբար եւ հոգով բավականաչափ հասուն լինել ու հաշվի առնել սեփական անլիարժեքությունը, կիսատությունը:

Համերգը մասնավոր նախաձեռնություն էր, բայց մի՞թե դա արդարացնում է մշակույթի նախարարության անտարբերությունը: Ամիսներ շարունակ հայտարավում էր, որ Ազնավուրի 95 ամյակին նվիրված համերգ է լինելու, արդյո՞ք նախարարության պարտականությունը չէր հետաքրքրվել՝ ովքե՞ր են կազմակերպիչները, համերգն ի՞նչ ընթացքի մեջ է, ի վերջո, ի՞նչ նպատակով է իրականում իրականացվում: Թե՞ ավելի ձեռնտու է փարոսի, փրկության խարսխի դիրքերից հայտարարել՝ եթե մշակույթի նախարարությունը չլիներ, համերգը կտապալվեր: Մշակույթի նախարարությունը պարտավոր էր հենց սկզբից իրազեկվել բոլոր մանրամասների մասին, անգամ արտիստների երգացանկին միջամտել, ուսումնասիրել, թե ովքեր են կազմակերպիչները, ինչ համբավ ունեն, նախկինում ինչ համերգներ են կազմակերպել, եթե թերանում են, ապա պատասխանատվության ենթարկել, ոչ թե համերգից 4 օր առաջ պլշած աչքերով ասել, թե իրենք ոչնչին տեղյակ չեն եղել, վերջին պահին ասել են՝ օգնե՞ք, մենք էլ օգնել ենք:

Մի լավ PR արվեց հօգուտ իշխանությունների, իրավիճակը նպաստեց դրան: Օգտվողներն օգտվեցին:

Ինչպե՞ս պետք է այսուհետեւ լուծվի Շառլ Ազնավուրի անվան հետ կապված նախագծերի հարցը: Չէ՞ որ այս համերգը միայն սկիզբն էր, դեռ այնքա՜ն նախագծեր են մոգոնվելու: Ազնավուրը չկա, իսկ նա իր անվան հետ կապվող ծրագրերը տնտղում էր, լավը վատից առանձնացնում: Հարկ է, որ այդ գործը հանձն առնող լինի, որպեսզի չխախտվեն հեղինակային իրավունքները, եւ տեղից վեր կացողն Ազնավուրի անունը չհամարձակվի շահարկել ու էժանագին նախագծերով փող աշխատել:

Պառակտության ուրվականն օպերայում

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնին մշակույթի նախարարի պարտականությունները կատարող Նազենի Ղարիբյանը հերթական անակնկալը մատուցեց: Ոչ միայն օպերան, հանրությունը եւս ցնցվեց հերթական լուրից. Նազենի Ղարիբյանը մայիսի 22-ին ընտրվել է օպերային թատրոնի կառավարման խորհրդի նախագահ: Արտագնա նիստը հրավիրվել է մշակույթի նախարարությունում: Խորհրդի անդամներից 4-ը նախարարությունից են, երկուսը՝ օպերային թատրոնից, մյուս երկուսը կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանն ու երգչախմբային ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանն են: Արամ Սաթյանը հիվանդ լինելու պատճառով նիստին ներկա չի եղել, իսկ մյուս 7-ը քվեարկել են նախագահի միակ թեկնածու Նազենի Ղարիբյանի օգտին: Ի դեպ, օպերային թատրոնի արտիստները քվեարկությամբ են բալետային արտիստ Սերգեյ Սաֆարյանին եւ օպերային երգիչ Պերճ Խարազյանին ընտրել կառավարման խորհրդի անդամ: Նազենի Ղարիբյանն իրենց հարազատ թատրոնը տակնուվրա է արել, իսկ երկու արտիստները գնացել ու իրենց ձայնը հոժարակամ տվել են նրան:

Այս փաստը թատրոնի կոլեկտիվին խիստ վրդովեցրել ու վիրավորել է: Ախր ինչպե՞ս. արդեն մի քանի ամիս այդ կնոջ պատճառով թատրոնի բնականոն կյանքը խաթարվել է, նա սառնաարտոն աշխատանքից ազատեց տնօրեն Կոնստանտին Օրբելյանին, Ղարիբյանի փաստաբաններին ի պատասխան՝ իրենք հակափաստաբաններով լի նամակ են ուղարկել Նիկոլ Փաշինյանին ու արդեն 2 ամիս սպասում են նրա պատասխանին: Ոչ մի պատասխան: Բայց արի ու տես, որ իրենց «հազար տարվա» ընկերները մեծ հաճույքով Նազենի Ղարիբյանին ձայն են տվել:

Ի դեպ, Կոնստանտին Օրբելյանն օրերս դատի է տվել Ղարիբյանին: Հաղաղել չէր կարող, որովհետեւ իրեն աշխատանքից ազատելու օրվանից ոչ ավելի, քան երկու ամսվա ընթացքում կարող էր դիմել դատական ատյաններին, ուշացնելու դեպքում Օրբելյանն այդ իրավունքից զրկվեր: Փաստորեն, մի կողմից դատական գործընթացն է սկսվելու, մյուս կողմից Նազենի Ղարիբյանն օպերային թատրոնի կառավարման խորհուրդն ի պաշտոնե ղեկավարելու է: Ի դեպ, մինչ այդ մշակույթի նախկին նախարար Հասմիկ Պողոսյանն է այդ պաշտոնում ընտրված եղել: Օպերային թատրոնում նաեւ այդ հարցն առաջ քաշվեց՝ ինչո՞ւ պետք է խորհրդի ղեկավարը նախարարության բարձրաստիճան պաշտոնյաները լինեն, ոչ թե թատրոնի ներկայացուցիչները, սա դեռ բավական չէ, խորհրդի կազմում մեծամասնություն կազմում է ոչ թե օպերային թատրոնը, այլ նախարարությունը: Իհարկե, նախկին իշխանությունների օրոք այս հարցը երբեք բարձրաձայն չի հնչել. թատրոնում միայն հիմա են համարձակվում նման խնդիրներ առաջ քաշել, անգամ կանոնակարգ փոխելու մասին են խոսում: Դա ապագայում, իսկ հիմա օրակարգային է կառավարման նիստի արդյունքները չեղարկելու պահանջը: Դիրիժոր **Հարություն Արզումանյանն** իրավացիորեն զարմանում է. «Հունիսի 3-ին կառավարության նոր կազմը կհաստատվի, ինչո՞ւ այսքան շտապ ընտրություն կազմակերպվեց. միգուցե Ղարիբյանն ընդհանրապես կառավարության կազմում չի մնալու: Այս հապճեպ գործողությունն ի՞նչ նպատակով էր»:

Սերգեյ Սաֆարյանն ու Պերճ Խարազյանը Նազենի Ղարիբյանին կողմ են քվեարկել, ու այդ փաստը խիստ զայրացրել է իրենց ընկերներին: Նրանք ոչ մի բացատրություն, ոչ մի արդարացում չեն գտնում. ի վերջո, ինչպե՞ս կարող էին իրենց հարազատ թատրոնը քանդող մարդու օգտին ձայն տալ:

➥Դ

AZG NEW MSHAKUIT.qxd 30/05/2019 21:06 Page 2

Արդի աշխարհի տագնապները

«Ազգ»ի զրույցը Անահիտ Թոփչյանի հետ

- Երեք տարի առաջ Ձեր թարգմանությամբ լույս տեսավ շվեյցարացի աբխարհահռչակ արձակագիր եւ դրամատուրգ Ագոտա ԿՐԻՍՏՈՖԻ պիեսների ժողովածուն՝ «Հրեշը» վերնագրով: Գիրքն, իսկապես, բացառիկ երեւույթ էր, ոչ միայն, որ առաջին անգամ դուք հայերեն էիք «հնչեցնում» այդ ինքնատիպ գրողի գործերը, այլեւ որ դրանք առավել քան համահունչ էին արդի աբխարհի տագնապներին:

- Քիչ է ասել «համահունչ», դրանք պարզապես մարգարեական են: Աոքել կարելի է, թե ինչպես տասնամյակներ առաջ, իր այլաբանական պիեսներում կանխատեսել էր մեր օրերում ծայր առած եւ ահագնացող քաղաքական մղձավանջներն ու աբխարհով մեկ տարածվող արյունահեղությունները:

- Այդ պիեսների լույս ընծայման առիթով տպագրված հարցազրույցում («Ոչ միայն նորություն, այլեւ հայտնություն», «Ազգ», 16.09.2016թ.) խոսում էիք նաեւ նույն հեղինակի վիպական եռապատումի մասին, ասելով, թե շատ կուզեիք դա եւս թարգմանել, միաժամանակ ափսոսանքով նշում, որ չեք կարող, քանի որ «սեփական ծրագրերը կան, որոնք հերթի են դրված»: Սակայն երկու տարի անց դուք հրատարակեցիք այդ ծավալուն եռագրությունը հայերեն: Ինչպե՞ս հասկանալ այս փոփոխությունը, Ձեր՝ «սեփականն» ստեղծելու պլանները հետաձգվեցի՞ն հանուն այս վեպերի թարգմանության:

- Ոչինչ չի հետաձգվել: Ես վաղուց սովոր եմ միաժամանակ տարբեր «ճակատներում» աբխատել: Մասնագիտական այդ ունակությունը ձեռք եմ բերել իմ դերասանական բուռն գործունեության տարիներին, երբ մեկ օրվա ընթացքում, վաղ առավոտից մինչեւ երեկո, պիտի մասնակցեի նկարահանման, այնուհետեւ ձայնագրման՝ ռադիոյում կամ հեռուստաներկայացման փորձին, իսկ երեկոյան բեմ դուրս գայի թատրոնում: Այնպես որ, չեմ կարող ամբողջ օրվա ընթացքում միայն մեկ գործով զբաղվել, պիտի անպայման, գոնե մեկ-երկու ժամ, «հանգստանամ» մեկ այլ, համեմատաբար ավելի թեթեւ գործի վրա: Պարզապես վերջին երկու տարում իմ ժամանակի մի զգալի մասը հատկացնում էի թարգմանությանը: Կար նաեւ հետեւյալ հանգամանքը: Ես արդեն յուրացրել էի այդ հեղինակի ոճը, ինձ արդեն ազատ էի զգում նրա ստեղծագործական տիրույթներում, հետաձգելու դեպքում այդ հարազատությունը կարող էի կորցնել եւ դժվար կլիներ վերսկսել մեկ անգամ արդեն ձեռք բերվածը: Ուստի, որոշեցի միանգամից անցնել եռապատումի թարգմանությանը, եւ կարողացա ավարտել համեմատաբար կարճ ժամանակում:

- Ի՞նչ ընդհանրություն եւ տարբերություն եք տեսնում միեւնույն հեղինակի պիեսների եւ վեպերի միջեւ: Արդյոք նույն ձեռագի՞րն է:

- Ձեռագիրն, անշուշտ, նույնը չէ: Եվ պատճառը միայն ժանրային տարբերությունը չէ՝ թատերախաղ եւ վիպական արձակ:



Եթե «Հրեշը» ժողովածուն կազմված էր բացառապես հակաուտոպիական-այլաբանական գործերից, ապա «**Երկվորյակների եռապատումը**» պատմական որոշակի ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությունն են երեք վեպերի մեջ՝ «**Հաստ տեսը**», «**Ապացույց**», «**Երրորդ սուտը**»: Հեղինակը երկվորյակ եղբայրներ՝ Կլաուսի եւ Լյուկասի ողբերգական ճակատագրով պատմում է Համաշխարհային երկրորդ պատերազմի եւ դրան հաջորդած իրադարձությունների մասին: Առաջին իսկ էջերից տեսնում ենք դաժան աբխարհի մեջ հայտնված երկու երեխա, որոնք հոգու խորքում մնալով մաքուր, այնուամենայնիվ, ապրել կարողանալու համար, ստիպված են որդեգրել այդ իրականության անմարդկային սկզբունքները՝ իրենց հանդեպ դաժանություն կիրառողներից երբեմն լինելով ավելի դաժան: Քննադատներից մեկը Ա. Կրիստոֆի պերսոնաժներին համեմատում է Ձիակոմետտիի արձանների հետ, որոնք, իրենց հերթին, հիշեցնում են համակենտրոնացման ճամբարների կալանավորներին՝ մարդն ընդամենը կաշի է, ոսկոր եւ տառապյալ հոգի: Ի դեպ, գրքի շապիկը կարծես, իր հերթին, ընդգծում է այդ տրամադրությունը. «երկվորյակների» սարսափահար մի բազմություն, որ ասես տագնապած սպասում է երկնային դատավճռին:

- Շապիկն իսկապես հաջող է եւ մի ամբողջություն է կազմում գրքի բովանդակության հետ:

- Շապիկի գաղափարն իմն է: Առիթից օգտվելով՝ երախտագիտություն եմ հայտնում գեղանկարիչ Ռուբեն Արուշյանին, որ սիրով արտոնեց օգտագործել իր հրաշալի կտավը՝ գրքի ձեւավորման համար:

- Պիեսները թարգմանելիս ձեզ, անշուշտ, օգնել է բեմական ձեր հարուստ փորձը, իսկ կարո՞ղ ենք ասել, որ վիպաշարը թարգմանելիս օգտակար եղավ արձակագրի ոչ պակաս հարուստ փորձը:

- Պատկերացրեք, որ այնքան էլ դյուրին չէր: Ա. Կրիստոֆի արձակը մի հետաքրքրական առանձնահատկություն ունի, ասես իր համար մի նոր լեզու է ստեղծել ծանոթ ու դարերի ընթացքում մշակված լեզվի մեջ: Ստիպված էր ստեղծել՝ Շվեյցարիայում հայտնվելու առաջին իսկ օրվանից, երկու «լռությունների» արանքում. լռում էր մայրենի լեզուն՝ քանզի ոչ մեկին պետք չէր, եւ ֆրանսերենը, որին դեռեւս չէր տիրապետում: Ես առիթներ ունեցել եմ շվեյցարացի ֆրանսագիր տարբեր հեղինակներ թարգմանելու, հատկապես դրամատուրգներ: Նրանց պերսոնաժները որքան էլ արտահայտվում են արդի խոսակցական լեզվով, այնուամենայնիվ մնում են նորմայի սահմաններում, եւ հասկանում ես, որ հատուկենտ «խախտումները» կատարվում են կերպարի որոշ առանձնահատկություններն ընդգծելու համար: Մինչդեռ, Ա. Կրիստոֆի լեզուն, հատկապես վեպերում, երկու «լռությունների» արանքում ծնված ֆրանսերենն է: Ուստի, զգացվում է, որ դա յուրացված լեզու է, մի տեսակ անբնականություն կա: Ի դեպ, հեղինակն ինքն է խոստովանում, որ իր ֆրանսերենը տարօրինակ է: Եվ որքան էլ անհավատալի թվա, այդ «տարօրինակությունը» յուրահատուկ հմայք է հաղորդում նրա արձակին:

- Դուք այնպես եք յուրացրել նրա գրականությունը, որ ձեզ հաջողվել է հայերենում այդ «տարօրինակության» համարժեքը գտնել:

- Թերեւս: Այդ «տարօրինակությունը» բացատրվում է նաեւ շվեյցարական մշակույթին բնորոշ մի առանձնահատկությամբ, որն արվեստաբաններն անվանում են art brut, այսինքն՝ անմշակ արվեստ: Իրականության նաիվ ընկալումը հատուկ է պրիմիտիվիստների արվեստին: Իմիջիայլոց, աբխարհում Art brut-ի ամենամեծ թանգարանը գտնվում է Լոզանում:

- Ինչպե՞ս է կարողանում նման ընկալումով շոշափել մեր ժամանակների բարդ խնդիրները:

- Կարողանում է, եւ բավական հաջող: Դա չխաթարված, անմիջականությունը պահպանած նախնական մարդու սոսկումն է արդի աբխարհի թատերաբեմում ծավալվող արյունալի իրադարձություններից: Հենց այդ հայացքն է նրան օգնում գեղարվեստորեն համարժեք վերաբերմունք ցուցաբերել: Մարդկությունն արդեն ընտելացել է, ավելի շուտ ընտելացրել են փորձ ու մեծ պատերազմներին, արյունահեղություններին, երկնագույն էկրանից ամեն օր այդ մղձավանջն է մեզ մատուցվում: Հետեւողականորեն: Պոլիտկոռեկտությամբ ամորձատված հանրությունը ախուվախ է անում եւ տեղնուտեղը մոռանում: Մինչդեռ, Ա. Կրիստոֆի նկարագիրն ունեցող մտավորականը չէր կարող նման երեւույթներին անտարբեր նայել:

- Հետաքրքրական է, որ 1956թ. փրկվելով նման մի մղձավանջից եւ հաստատվելով խաղաղ ու անդորր Շվեյցարիայում, թվում է պիտի ամեն ինչ մոռանար եւ վայելեր այդ անհոգ կյանքը, սակայն տագնապի զգացումը նրանում ավելի է սրվել:

- Եվ այն ատիճանի, որ անցյալ դարի 80-ականներին գրված պիեսներում կանխատեսել է այսօրվա աղամարդկայնացած աբխարհը: Դրանով է տարբերվում իսկական մտավորականն անիսկականից, որը թքած ունի աբխարհի հոգսերի վրա եւ լոկ «սեփական փառքն է քարշ տալիս պարանով», եւ բավական հաջող, ինչպես այսօր ոմանք մեզանում: Ի դեպ, այդ կանխազգացումները բնորոշ են շվեյցարական գրականությանը: Շառլ-Ֆերդինանդ Ռամյուզը 1936թ. գրված «Եթե արեւը չծագի» վեպում հստակորեն գուշակում էր մոտալուտ աբխարհացունց պատերազմը, իսկ Մաքս Ֆրիշը, 1959թ. գրված «Բիդերմանը եւ հրձիգները» հանճարեղ պիեսում՝ արդի աբխարհի մի շարք երկրներում չմարող պատերազմական հրդեհների բոցերն էր տեսնում: Ի դեպ, 1998թ. ես բախտ ունեցա այդ պիեսի հոյակապ բեմադրությունը տեսնել Լոզանում եւ մի ընդարձակ գրախոսություն գրել, որը լույս տեսավ Փարիզի «Ռուսսկայա միսլ» շաբաթաթերթում եւ «Գարուն» ամսագրի «շվեյցարական» համարում: Ռամյուզից եւ Ֆրիշից զատ, մեկ այլ նշանավոր շվեյցարացի՝ Դենի դը Ռուժմոնն այդ հատկությունն անվանում էր «շվեյցարական անհանգստություն», երբ պատերազմներից պաշտպանված երկրի գրողը մտահոգված է ուրիշ երկրների եւ ժողովուրդների ճակատագրով:

- «Եռապատումը» սակայն ներկայացնում է ոչ այնքան սպասվելիք իրադարձությունները, որքան ընթացողը, կատարվածը եւ դրանց հետեւանքները մարդկային ճակատագրերում:

- Իսկապես, եւ եթե պիեսներում իշխում է գերիրականը, նույնիսկ ֆանտաստիկը, ինչը բնորոշ է հակաուտոպիային, ապա վեպերում ներկայացված է երկրորդ համաշխարհային պատերազմը եւ հաջորդած տարիները: Մենք հասկանում ենք, անշուշտ, որ դեպքերը տեղի են ունենում Հունգարիայում, որն, ի դեպ հիտլերյան Գերմանիայի դաշնակիցն էր, ուր գերմանացիների պարտությունից հետո կոմունիստական վարչակարգ է հաստատվում եւ ուր, վերջապես, տեղի է ունենում Բուդապեշտի ապստամբությունը: Ասում եմ՝ «հասկանում ենք», քանի որ վեպերում աբխարհագրական եւ այլ կարգի որոշակիություն չկա: Չի գրվում, օրինակ, որ խորհրդային բանակը եկավ եւ գերմանացիներին քշեց, որ զինվորները ռուսերեն էին խոսում, եւ այլն:

- Իսկ այդ անորոշությունը չի խանգարո՞ւմ ընթերցանությանը, վեպի ընկալմանը:

- Ընդհակառակը, օգնում է հասկանալու, որ պատերազմը զուտ տեղական բնույթի ապես չէ, այլ ուղղակիորեն առնչվում է մեզնից յուրաքանչյուրին, անկախ այն բանից, թե որտեղ ենք ապրում: Եվ ինչն է հետաքրքրական, որ Ա. Կրիստոֆը փաստորեն լինելով քաղաքական վստահելի, իր մեղադրանքը չի հասցեավորում որոշակիորեն այս կամ այն վարչակարգին: Պիտի կրկնեմ մեր նախորդ հարցազրույցում արտահայտված դիտարկումս: Ջորջ Օրուելի հանրահայտ «1984» վեպը կարդալիս հասկանում ենք, որ հեղինակը որոշակիորեն նկատի ուներ ԽՍՀՄ-ն՝ որպես աբխարհում տեղի ունեցող բոլոր ապեստների մեղավոր: Սակայն երեսուն տարի է «չարիքի կայսրությունն» այլեւս գոյություն չունի, իսկ ապեստները ոչ միայն շարունակվում են ու տարածվում, այլեւ ահագնանում: Նույն պատկերն ենք տեսնում Ա. Կրիստոֆի վեպերում՝ հեռացան ֆաշիստները, եկան կոմունիստները, իսկ սարսափները մնացին ու շարունակվեցին՝ դժբախտացնելով անհատներին, ընտանիքներին ու ազգերին:

- Թերեւս դրանո՞վ է բացատրվում, որ happy end-ը բացակայում է Ա. Կրիստոֆի գործերում:

- Իսկապես: Հերոսներից մեկն ասում է. «Գիրքը, որքան էլ տխուր լինի, չի կարող կյանքից ավելի տխուր լինել»: «**Եռապատում**»-ն ավարտվում է եղբայրներից մեկի ինքնասպանությամբ, մյուսն էլ պատրաստվում է դիմել նույն քայլին, եւ ընդհանրապես երբեք վեպերում չկա մի պերսոնաժ, որը քիչ թե շատ երջանիկ լինի: Բոլորը, այսպես թե այնպես, դժբախտ են: Եզրակացությունը հետեւյալն է՝ նման աբխարհում ոչ ոք չի կարող երջանիկ լինել, եթե Մարդ է իսկապես... Կամ ինչպես իմ հերոսուհին էր ասում «Անհաստատ տիկինը» մոնոդրամում. «Ոչ ոք չի կարող փրկվել, երբ փրկված չեն բոլորը»:

- Հիմա, երբ ավելի խորացաք Ագոտա Կրիստոֆի գրականության մեջ, կարո՞ղ է առաջիկայում մի նոր գործ թարգմանեք նրանից:

- Շատ հնարավոր է:

Հեռախոսազանգը գուժեց.

Արշո Թութունջյանը ոչ եւս է

Այս անունը՝ Արշո, խորհրդանիշ էր, ինչպես Լիբանան-Հայաստան կապի, այնպես էլ Միջին Արեւելքի երկրների եւ ողջ Սփյուռքի: Քիչ են այն մարդիկ, ովքեր կարողանում են ողջ կյանքում պահել այնպիսի հավասարակշռություն, որը գործում է ոչ միայն անձնական հարաբերություններում, այլեւ դուրս է գալիս անձնականից ու դառնում Արշո Թութունջյան:

Ով ճանաչում է Արշոյին, բացատրության կարիք չունի, իսկ ով չի ճանաչում, թող իմանա, որ թե՛ Սփյուռքը, թե՛ Հայրենիքը կորցրեցին մի մեծ արվեստագետ հայուհու, որն ընդունելի էր Լիբանանի նման բարդ ու հատվածական կյանքում, ուր գործում էին ու են ավանդական կուսակցությունները, ազգային ու կրոնական այլեւայլ օղակներ, երկատված եկեղեցի, հետո պատերազմական վիճակ, եւ այդ թնջուկ հարաբերություններում՝ անխտիր բոլոր շրջանակների կողմից ընդունված ու սիրված Արշո...

Լինելով ողջամիտ, կողմնորոշում չունեցող մտավորական, Արշոն առանց երեսպաշտության դրական դեր ուներ նույնիսկ հակոտնյա ուժերի շրջանակներում:

Չեմ կարող չհիշել մի բախտորոշ պահ, երբ շատ Բեյրութ էր ժամանելու Սփյուռքի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը եւ հանդիպում էր ունենալու մեր երեք կուսակցությունների պետերի հետ, հանդիպման վայրը ընտրվեց Արշո Թութունջյանի բնակարանը, կարծում եմ մեկնաբանելու կարիք չկա:

Արշոյի հեղինակությունը հայ համայնքից դուրս էր նաեւ, այն պատճառով, որ նա ճապոնական Սոգեցու ծաղկահարդարման վարպետն էր Միջին Արեւելքում, ուներ բազմաթիվ աշակերտներ դիվանագիտական կորպուսի կանանց շրջանում:

Արշոն՝ Արշո չէր լինի, եթե Աստված նրա կողքին չդներ զուսպ, հավասարակշիռ ծանրախոհ ու լայնախոհ վաղամեռիկ ամուսնուն՝ Շահեին՝ չինաղ դուստրերի հորը...

ՌՈՄԵՆ ԿՈՉՄՈՅԱՆ, 29.05.2019թ.

AZG NEW MSHAKUIT.qxd 30/05/2019 21:06 Page 3

«Գայանեն շամանուհի է, որ ստեղծում է իր կախարդության զարմանալի աշխարհը...»

Գայանե Խաչատրյանի մահվան 10-ամյակի առթիվ

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

Նրան շատերը համարում են մեծագույնը հայ նկարչուհիներից: Թիֆլիսում ծնված եւ ողջ կյանքում այնտեղ ստեղծագործած այս մի տաղանդին վրացիները չսեփականացրին (անգամ Վիքիպեդիայում նրա կենսագրությունը չկա վրացերենով). անուն-ազգանունը «չափազանց» հայկական է, նկարների ստորագրությունն էլ՝ մեստոպատառ, եթե անգամ իր նկարներում հայկական բնորոշ ոչինչ չկա...

Տարիներ առաջ մի վրացի արվեստաբանուհու հետ զրուցելիս հարցրի իր կարծիքը Գայանե Խաչատրյանի մասին: Նա փոքր-ինչ ֆամահրանքով ասաց, որ բնավ չի հավանում նկարչուհու գործերը: Վրաստանի նկարիչների շարքում դասվող, սակայն հայանուն արվեստագետին հռչակ եւ ըստ արժանվույն գնահատական տալը հաստատ կստվերեր վրացի նկարիչներին...

Իսկ Հայաստանը եւ հայերը վաղ են գնահատել Գայանե Խաչատրյանին եւ ամեն կերպ նպաստել են նրա առաջխաղացմանը: Տակավին խանամյա Գայանեին մեծապես օգնել ու աջակցել է Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, իսկ ծանոթությունը Սերգեյ Փարաջանովի հետ շրջադարձային է եղել նկարչուհու կյանքում: Արտասովոր տաղանդի տեր երկու խենթավուն թիֆլիսահայերը հարազատ հոգիներ էին: «Գայանեն շամանուհի է, որ ստեղծում է իր կախարդության զարմանալի աշխարհը», ասել է **Փարաջանովը**: Հենց նրա նախաձեռնությամբ էլ 1967-ին Երեւանում բացվել է Գայանեի առաջին ոչ պաշտոնական ցուցահանդեսը, որին էլ հետեւել են արդեն պաշտոնական ցուցահանդեսներ Մոսկվայում եւ Թբիլիսիում: Ի դեպ, ԽՍՀՄ-ից դուրս Գայանե Խաչատրյանի գործերը ցուցադրվել են առավելապես Կյուլպենկյան հիմնարկության շնորհիվ, որը կազմակերպել է նրա անհատական եւ խմբային ցուցահանդեսները Լիսաբոնում, Բեյրութում եւ Ֆրանսիայի քաղաքներում: Առհասարակ, հայերը անտարբեր չեն մնացել իրենց մեծատաղանդ հայրենակցուհու հանդեպ: Գայանե Խաչատրյանի մասին «Հայֆիլմ» կինոստուդիայում երկու ֆիլմ է նկարահանվել. տակավին 29-ամյա նկարչուհու մասին ճանաչված կինոբեմադրիչ **Յուրի Երզնկյանը** ստեղծել է «Գայանե» վավերագրությունը (1971, Մարտիրոս Սարյանի նախաբանով), հայ վավերագրական կինոյի վարպետ **Ռուբեն Գեւորգյանցը** 1978-ին էկրանավորել է նրա մասին «Երկնագույն քամի, նշի բույրը», իսկ 2006-ին **Լեւոն Գրիգորյանը**՝ «Ես՝ թիֆլիսցի Գայանեն» փաստագրական ֆիլմերը...

Նրան ճանաչում ու սիրում էին, սակայն նա դուրս էր խորհրդային պաշտոնական արվեստից: Պատահական չէ, որ Գայանեին քաջալերողները մեծ մասամբ եղել են խորհրդային իրականության խորթ զավակները: Փարաջանովն իր բարեկամներից շատերին էր տանում, ծանոթացնում Գայանե Խաչատրյանի հետ ու նաեւ նրա՛ շնորհիվ նկարչուհուն ճանաչել ու բարձր են գնահատել Մարկ Շագալը, Անդրեյ Տարկովսկին, Ֆեդերիկո Ֆելլինին, Տոնինո Գուերռան, Վլադիմիր Սոլովկովը, Յուրի Լյուբիմովը, Էլդար Ռյազանովը, Ֆրանսուա Սագանը, Իվ Սեն Լորանը, Բելլա Ախմադուլինան, Օթար Իոսելիանին, Գիա Կանչելին, Ալլա Դեմիդովան, Եվգենի Պրիմակովը, Միխայիլ Թումանիշվիլին... Նրանց շատերի մասնավոր հավաքածուներում տեղ են գտել Խաչատրյանի աշխատանքները...

Ինչպես Թիֆլիսում ծնված մեկ այլ մեծ Խաչատրյան՝ Արամը, Գայանե Խաչատրյանը եւս արմատներով գողթնեցի էր՝ Ագուլիսից, որին անվանակոչել էին ի պատիվ մեծ մոր, որի բարեպաշտությունը պատվել է ողջ Գողթնը: Մասնագիտական փայլուն կրթություն ստանալով՝ Գայանեն ողջ կյանքում ապրել է անդուլ ստեղծագործությամբ: Նա ուրիշ հետաքրքրություններ գրեթե չի ունեցել: Իր նկարների համար ստացած չնչին վճարները նկարչուհին հաճախ բաժանել է կարիքավոր ընտանիքներին՝ շարունակելով ապրել ավելի քան ասկետական կենցաղով, քնելով հատակին՝ այդ պայմաններում արարելով իր գունագեղ, վառվռուն, երեւակայական աշխարհները, ագուլիսյան եւ թիֆլիսյան կոլորիտով ծփուն փողոցային դիմակահանդեսները, խորհրդավորության մշուշով պատված, միաժամանակ՝ պարզ եւ հասարակ կերպարներն ու կերպարանքները... Արվեստաբանները Գայանե Խաչատրյանի նկարչությունը դասում են նկարչության մեջ հազվադեպ դրսեւորում ստացած «մոգական ռեալիզմի» ուղղությանը, որի սակավաթիվ ներկայացուցիչներն են բելգիացի Ռընե Մագրիտը, մեքսիկուհի Ֆրիդա Կալոն, ֆրանս-հրեա Մարկ Շագալը եւ անգլիացի Փիթեր Դոյգը...

Փարաջանովի բարեկամ, մոսկվացի կինովավերագրող **Վասիլի Քաթանյանը** կինոբեմադրիչին նվիրած իր հուշերում գրել է. «Երեկ չէ առաջին օրը նա մեզ տարավ նկարչուհի Գայանե Խաչատրյանի՝ իր հովանավորյալի մոտ: Մենք նրան հանդիպեցինք փողոցում, նա դատարկ տոպրակով գնում էր դատարկ խանութ: Սերյոժային տեսնելով՝ ամիջապես հետ դարձավ ու մեզ տարավ իր աղքատիկ սենյակ-արվեստանոցը ու ցույց տվեց այն նկարները, որոնք ասաց Սերգեյը: Մենք տեսանք ցնցող նկարչություն, որից չէինք կարողանում կտրվել: Առհասարակ, Գայանե Խաչատրյանին միայն վերջերս են պաշտոնապես ճանաչել, բայց Սերյոժան նրան վաղուց էր հայտնաբերել: Նկարչուհին պնդում էր, որ «եթե չլիներ Սերգեյ Իոսիֆովիչը, ես ոչինչ չէի կարողանա անել, նա ինձ օգնում է, ես նրան շատ եմ լսում»: Սերյոժան ծանրախոհ նստած էր: Այսօր Գայանեի նկարները հազարներ արժեն, կախված են թանգարաններում, բայց դա նրան չի հուզում: Նա մի քիչ այս աշխարհից չէ եւ նման է Նովելլա Մատվեեւային: Խոսում է բաս ձայնով, սիրում է սաղմոսներ երգել, բայց գործն, ավաղ, չի հասել երգեցողության» (Վասիլի Քաթանյան, «Հպում կուռքերին», Մոսկվա, 1997, էջ 227, ռուսերեն):

Գայանե Խաչատրյանին նույն կերպ է հիշել նաեւ ռուս գրող **Վլադիմիր Մոշենսկոն**. «Նա այս աշխարհից չէր: Ապրում էր աղքատ, բայց չէր գանգատվում: Ասում են՝ Տարկովսկին Գայանեին բանաստեղծություններ է նվիրել: Պետք է գտնել դրանք: Նա ինքը պոեզիա էր: Նրա նկարները դյութում են: «Գինու շղարշ»: «Փիղ՝ ծիրանագույն աղեղ»: «Նարնջի օրվա երթը»: «Առավոտ. մանուշակի շշյունը»: «Երեկոյան. կապույտ ընկույզի տավիղային գիշերը» (Վլադիմիր Մոշենսկո, «Ձայներն անհետանում են, երաժշտությունը մնում է», Մոսկվա, 2015, էջ 112, ռուսերեն):

2009-ին Վենետիկի միջազգային բիենալեում հայկական տաղավարը հունիսին ներկայացավ միմիայն Գայանե Խաչատրյանի 15 աշխատանքներով: Նկարչուհին, ցավոք, մեկ ամիս առաջ արդեն հեռացել էր կյանքից... Ապրիլի 14-ին, Թբիլիսիի ուռուցքաբանության հիվանդանոցում մոսկվացի կուրատոր եւ հավաքորդ **Վալերի Խանուկաեւի** հետ ունեցած զրույցում նկարչուհին ասել էր. «Ես միշտ ցանկացել եմ ցույց տալ իմ աշխարհը, մոգական ռեալիզմի աշխարհը, բայց հիվանդություններն ու նյարդերը սպառել են իմ ուժը, իմ առողջությունը: Շուտով Վենետիկի բիենալեն է, գիտեմ, որ երբ ցուցադրեն իմ կտավներն ու գծանկարները, դրանք մեծ հաջողություն կունենան, այն չարժանացած հաջողությունը, որն ինձ բաժին հասավ իմ մահից առաջ, բայց այդ բոլորն ինձ համար միեւնույնն է, քանի որ ես իմ նկարները չեմ համարում գլուխգործոցներ»...

Տաս տարի առաջ Վենետիկի բիենալեում տարբեր ազգերի այցելուների հիացական հայացքների ներքո դիտում էի Գայանեի մոգական կտավներն ու հիշում էի դրանից մի քանի տարի առաջ իմ միակ հանդիպումը նրա հետ Երեւանում, Ժամանակակից արվեստի թանգարանի մուտքի առջեւ: Բռնել էի այնքան հրաշալի կտավներ վրձնած նրա ձեռքերը եւ ասում էի, որ մենք Հայաստանում մշտապես սպասում ենք իրեն ու ակնկալում ենք իր մշտական վերադարձը, ինչը, ցավոք, տեղի չունեցավ...

Վերոհիշյալ Վալերի Խանուկաեւը նկարչուհու համաձայնությամբ եւ նրա անձնական առաջնորդությամբ 2008 թվականին հիմնել եւ նախագահում է «Գայանե Խաչատրյան» միջազգային հիմնադրամը, որը զբաղվում է ցուցահանդեսների կազմակերպմամբ, ստեղծելով արխիվ եւ ուսումնասիրելով նկարչուհու ժառանգությունը: Ի դեպ, Խանուկաեւի նախաձեռնությամբ ավստրիացի բալետմայստեր Միխայիլ Ֆիխտենբաումը Մոսկվայում բեմադրել է մեկ գործողությամբ «Գայանե» բալետը՝ նվիրված նկարչուհու կյանքին...

Անշուշտ, երախտապարտ ենք հայ նկարչուհու ժառանգությանը տեր կանգնած ոչ հայ հավաքորդ-կուրատորին, սակայն նաեւ ափսոսում ենք, որ Փարաջանովի մտերմուհին վերջինիս պես չունեցավ Երեւանում սեփական թանգարանը...

...Թբիլիսիի Խոջիվանքի հայ մտավորականության գերեզմանատան՝ ստալինիզմի տարիներին բարբարոս ոչնչացումից զերծ մնացած հատվածում, հայտնվել է մի նոր, համեստ տաղանդաքար: Տաս տարի է, ինչ հայ մեծ նկարչուհին հանգչում է մեր մեծերի՝ Րաֆֆու, Սունդուկյանի, Թումանյանի շիրիմների հարեւանությամբ: Եվ ինչպես իր կտավների ստորագրությունը, տաղանդարը նաեւ հայատառ է: Ցավոք, եզակի երեւույթ՝ հայկական հետքերը հետեւողականորեն ջնջող մերօրյա Վրաստանի իրականության համար...

AZG NEW MSHAKUIT.qxd 30/05/2019 21:06 Page 4

«Շառլ Ազնավուր՝ արտիստը եւ հայը»

ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

Մայիսի 23-ին, Գաֆեսճյան արվեստի կենտրոնում, բանասեր, գրող, կինոգետ Արծվի Բախչինյանը հետաքրքրական եւ ազդեցիկ մի երեկո նվիրեց Շառլ Ազնավուրի ծննդյան 95-ամյակին, որը կրում էր «Շառլ Ազնավուր՝ արտիստը եւ հայը» խորագիրը: Նա ընտրել էր դասախոսության ձեւը՝ ժամանակ առ ժամանակ էկրանին ցուցադրելով լուսանկարներ, համերգային կատարումներ եւ հատվածներ ֆիլմերից, որոնցում խաղացել էր Ազնավուրը:

Աննկատ թռավ ժամանակը, որովհետեւ բանախոսը բազմաթիվ նորագյուտ փաստերով եւ դրանց մեկնություններով էր տանում իր խոսքը: Մեծ արվեստագետի մանկությունը եւ պատանեկությունը ուշագրավ կողմեր ունեն: 1935 թվականի հայ եւ ֆրանսիական մամուլի արձագանքն այդ իրողության մասին շատ խոսուն է. փաստորեն, պատանի Շառլի մասնակցությամբ մի բեմադրությունից հետո, ինչպես նշեց Բախչինյանը, հոդվածագիրը մարգարեացել էր՝ փայլուն ապագա կանխագուշակելով նրա համար: Պակաս հետաքրքրական չէր իմանալ, որ Ազնավուրյանների եւ Բաղդասարյանների (Ազնավուրի մոր հայրական ազգանունն է) գերդաստանում ինչպիսի շնորհալի եւ ճանաչված մարդիկ են եղել:

Հավուր պատշաճի ներկայացվեց Ազնավուրի անձնական կյանքը, թե ինչպես է մեծ հայորդին հոգ տարել, որ ավագ զավակները՝ Սեդան եւ Պատրիկը, հաճախեն հայկական դպրոց եւ հայերեն սովորեն: Ուշագրավ անցումներով բանախոսը կանգ առավ այն դժվարությունների վրա, որոնք հաղթահարելը մեծ խիզախություն էր պահանջում: Սակայն 1959-ին «Օլիմպիա» համերգասրահում տեղի ունեցած համերգից հետո կարելի է ասել, որ Ազնավուրը նվաճեց Փարիզը: Նա հասարակության աչքում այլեւս ցածրահասակ ու անբարեսեւ չէր: Սկսվեց նրա դարաշրջանը, այլեւս նրան համեմատում էին անգամ Նապոլեոնի հետ, կնոջում առասպելական մակդիրներով:

Ներկայացվեցին կարեւոր անուններ ու մանրամասներ՝ կապված մեծ արվեստագետի կյանքի տարբեր փուլերի հետ: Առանձնապես հանգամանալից էին «Ազնավուրը եւ հայկական հետքերը» ու «Ազնավուրը եւ կինոն» բաժինները: Ճիշտ է, նա հարցազրույցներում բազմիցս նշել է, որ հարյուր տոկոսով ֆրանսիացի է, բայց երբեք չի մոռացել իր հայկական արմատները: Ե՛վ իր, ե՛ւ ծնողների տանը պատերին մշտապես առկա են հայկական երաժշտական նվագարաններ, որոնք երեւացին լուսանկարներում: Պատահական չէ, որ դստեր հետ նա կատարել է հենց Սայաթ-Նովայի «Աշխարումս իմն դուն իս» երգը, որի տեսագրությունը հանդիսատեսը հնարավորություն ունեցավ դիտել: Եվ որքան մեծ էր նրա թե՛ նյութական, թե՛ հոգեւոր օգնության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:

Մեր հայրենակիցը փայլել է ոչ միայն բեմի վրա, այլեւ կինոյում: Նա գլխավոր եւ երկրորդական դերեր է խաղացել է բազմաթիվ ֆիլմերում, որոնցից կարելի է առանձնացնել «Կրակե՛ֆ դաշնակահարի վրա»-ն, իսկ Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմում նա կերտեց Սարոյան ազգանունով հայի կերպար:

Դասախոսության ընթացքում բերված ուշագրավ փաստերի մեջ առանձնացավ Ազնավուրյանների՝ 1947 թվականին Խորհրդային Հայաստան հայրենադարձվելու ցանկությունը, որն ինչ-ինչ պատճառներով տեղի չի ունեցել: Ինչպես նշեց բանախոսը, «կարելի է ենթադրել, որ այդ դեպքում Ազնավուրը որպես Ազնավուր չէր կայանա»:

Մեկ երեկոյի ընթացքում Արծվի Բախչինյանին հաջողվեց համապարփակ ներկայացնել մեծն Ազնավուր արվեստագետին եւ հայորդուն: Հանդիսականների մեծ մասը դասախոսության վերջում չկարողացավ զսպել հուզմունքը՝ ի տես Ազնավուրի հետ վերջին հրաժեշտի կադրերի եւ լսելով հատվածներ Ֆրանսիայի նախագահ Էմանուիլ Մակրոնի փայլուն դամբանականից...

Հայ դերասանի մասին՝ բուլղարական գիտական հանդեսում

Բուլղարական «Բալկանիստիչեն ֆորում» գիտական հանդեսի այս տարվա առաջին համարում ընդգրկվել է նաեւ բուլղար հետազոտող **Մարիանա Պիսկովայի** «Արշավիր Շահխաթունու մի ֆիլմը՝ Հայաստանի մասին, ստեղծված Ֆրանսիայում, նկարահանված Բուլղարիայում 1928 թվականին» հոդվածը (էջ 111-134): Հեղինակը մանրամասն ներկայացրել է ֆրանսաբնակ դերասան Արշավիր (Աշո) Շահխաթունու (1895-1957) «Անդրանիկ» գեղարվեստական կինոնկարը, նկարահանված 1928-ին, Փարիզի «Արմենա-ֆիլմ» կինոստուդիայում: Հայ ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի մասին պատմող այս արկածային կինոնկարը որոշակի կարեւորություն ունի նաեւ Բուլղարիայի կինոյի պատմության համար՝ նկարահանված լինելով նաեւ այդ երկրում, բուլղար դերասանների մասնակցությամբ: Պիսկովայի՝ Շահխաթունու վերաբերյալ ուսումնասիրությանն աջակցում է Եվրոպական միության «Գիտելիքի փոխանակությունը եւ ակադեմիական մշակույթները հումանիտար գիտություններում. Եվրոպա եւ Սեւ ծովի տարածաշրջան, 18-րդ դարի վերջ, 21 դար» նախաձեռնությունը, որը հովանավորում է Եվրոպական հանձնաժողովը:

Մարիանա Պիսկովան Բլագոեւգրադի «Նեոֆիտ Ռիլսկի» հարավ-հյուսիսային համալսարանի իրավա-պատմական բաժնի պատմության ամբիոնի դոցենտ է: Բուլղարիայից բացի Պիսկովան Շահխաթունու վերաբերյալ զրույցներ է կատարել նաեւ Հայաստանի ազգային արխիվում եւ Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում: Ի դեպ, այս տարվա «Բըլգարսկա էտնոլոգիա» հանդեսի առաջին համարում (էջ 245-246) լույս է տեսել նաեւ Պիսկովայի «Երեւանի Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը. թանգարանում արխիվային լավ պրակտիկա» փոքր հոդվածը:

Ա. Բ.

Պառակտության ուրվականն օդերայում

Պարզ է, որ եթե անգամ դեմ քվեարկեին, իրենց ձայներն ընտրության վերջնարդյունքի վրա չէին ազդելու, միեւնույն է, Ղարիբյանն անցնելու էր, բայց ո՞ւր մնաց արժանապատվությունը, համերաշխությունը, միասնականությունը: Պերճն ու Սերգեյը հավատացած են, որ Նազենի Ղարիբյանը կառավարությունում իրեց թատրոնի խնդիրների մասին կբարձրաձայնի, ծրագրային, կառուցողական առաջարկներ կանի: Նրանց գործընկերները պարզ հարց տվեցին. «Իսկ ո՞ւմ է լսելու Ղարիբյանը, ովքեր են այդ հարցերը բարձրաձայնելու, որ ինքն էլ դրանք կառավարությանը ներկայացնի: Չէ՞ որ թատրոնի հետ նա կամուրջներն այրել է, նրա հետ նոր հանդիպումները, քննարկումները մոտ ապագայում բացառվում են: Որեւէ շփում նրա հետ չի լինելու: Մարդ, որն օպերային թատրոնի համար անցանկալի է, մերժելի, անընդունելի, ինչպե՞ս է կառավարելու այդ նույն թատրոնի խորհուրդը: Մարդ, որը ոչ մի պրեմիերայի ներկա չի եղել, օպերեսը բալետից չի տարբերում, չի ճանաչում արտիստներին, ի՞նչ գործ ունի այդ նույն թատրոնում եւ ի՞նչ իրավունքով է խառնվելու նրա գործերին: Նրան հրավիրել էին՞ նաեւ այսօրվա հավաքին: Ո՞ւր է, ինչո՞ւ չի եկել»: Արտիստները ցավում էին, որ Պերճն ու Սերգեյը հավատացել են Ղարիբյանի խոստերին, թե նա իրենց ուրացավ ներկայացուցիչն է լինելու կառավարությունում: Նրանց նաեւ զարմացրել էր, որ կառավարման նիստը տեղի է ունեցել ոչ թե օպերային թատրոնում, ինչպես ընդունված է, այլ մշակույթի նախարարությունում, եւ նիստի մասին բոլորն իմացել են միայն արդյունքները հրապարակելուց հետո: Մինչ այդ՝ որեւէ մեկը տեղյակ չի եղել, որ նիստ է հրավիրվելու:

«Կներես, Պերճ ջան, բայց ձեր արածը դավաճանություն է: Հավասալ ու ձայն տալ մի մարդու, որը քանդեց մեր թատրոնը, աբսուրդ է ուղղակի: Ու ասեմ ավելին, Նազենի Ղարիբյանին հաջողվեց նաեւ հազար տարվա ընկերներին իրար դեմ հանել, պառակտել մեր կոլեկտիվը: Հիմա մենք որ այսքան լարված ենք ու իրար դեմ ենք ելել, Նազենի Ղարիբյանն է մեղավոր»,- վրդովվեց թատրոնի արտիստներից **Հայկ Տիգրանյանը**:

Օպերային թատրոնի կոլեկտիվը որոշեց հետ կանչել Պերճ Խաչատրյանին ու Սերգեյ Սաֆարյանին, նրանք այլեւս իրենց ներկայացուցիչը չեն լինելու կառավարման խորհրդում: Իրենք նոր թեկնածուներ կառաջադրեն ու կքվեարկեն: Իսկ նոր ներկայացուցիչները պարտավորվելու են պահանջել, որ մայիսի 22-ի նիստի արդյունքները չեղարկվեն ու անվստահություն հայտնեն Նազենի Ղարիբյանի նկատմամբ: Միայն այդ պարտավորությունը հանձն առնողները կդառնան օպերային թատրոնի ընտրված թեկնածուները կառավարման խորհրդի կազմում:

Շատերն իրենց ելույթում նշեցին, որ Պերճ Խաչատրյանն ու Սերգեյ Սաֆարյանը երկար տարիներ ծառայել են թատրոնին ու արվեստին, բայց հիմա նրանց դեմ բողոքի ալիք է բարձրացել: Իրենց հազար տարվա ընկերներին քննադատողներն ու դատապարտողները քիչ չէին: Կոնֆլիկտային լարված իրավիճակում, սակայն, արտիստները սթափ դատել կարողացան: Սա թատրոնը մասնատելու, կուռ, միասնական անձնակազմի մեջ պառակտում սերմանելու քայլ էր: Օրբելյանին պատշտոնից ազատելուց ամիսներ է անցել, բայց օպերային թատրոնը համախմբված է, չի կոտրվում, հաստատակամորեն պահանջում է վերանայել որոշումը, Ղարիբյանին ազատել պատշտոնից, պատժել ու մոտ չթողնել թատրոնին: Այստեղ որեւէ զիջման մասին խոսք լինել չի կարող. բացի Օրբելյանից, այլ տնօրենի անունն անգամ չեն ուզում լսել: Ցախավելի պատմությունն է: Բոլորին հաս-հաս են ուզում ջարդել՝ սկզբում տարաձայնություն, պառակտում մտցնելով թատրոն: Ինչ խոսք, փորձված մեթոդ է: Տեսնեք՝ օպերային թատրոնի դեպքում կաշխատի՞:

ՆԱԻՐ ՅԱՆ